


Ա. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՎ Ն. ՄԵԼԻՔՅԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿՈՒՄ

Ծանոթացնում ենք ընթացիկ և ընթացիկ միջնակարգ դպրոցի 5-րդ և 6-րդ դասարանների համար



58
Q-84

Լ ՈՒ Ս Չ Ր Ա Տ



ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

58
Վ-84

Ա. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԷՎ Ն. ՄԵԼԻՔՅԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՊՐԱԿՏԻԿՈՒՄ

Օժտնդակ ձեռնարկ ոչ լրիվ և լրիվ սիջնակարգ
դպրոցի 5-րդ և 6-րդ դասարանների համար

Հաստատված է ՀՍՍՌ Լուստղիկումաի կողմից

Ձեռնարկը կազմելիս ղեկավարվել ենք բուսարանության միջնակարգ-
գալրոցի պետական ծրագրով և աշխատել ենք մոտ մնալ ստաբլի դասագրքի
նյութին և լայն չափով օգտագործել Վսեսլյատսկու և Վուչեաիչի Վուսարա-
նության մեթոդիկայի՝ դիտողությունները և հարուստ նյութը: Իրա հետ մեկ-
տեղ օգտագործել ենք նաև մեր ձեռքի սակ եղած մի քանի տասնյակ գործ-
նական ձեռնարկների առատ նյութը և մեր սեփական փորձը: Փորձերի ընտ-
րության ժամանակ հասկանալի պատճառով եղել ենք ժլատ և բերել ենք
միայն ամենաանհրաժեշտները, որոնք բազմիցս ստուգված են մեր կողմից:
Փորձերն ավելի բազմազան դարձնելու և խորացնելու ցանկություն ունեցող
սեռուցիչները համար ստորև բերում ենք հանձնարարելի զրգերի ցուցակը:

Բուսարանության գործնական աշխատանքների ձեռնարկը ոչ մի դեպ-
քում չի կարող փոխարինել ստաբլի դասագրքը, այլ միայն կարող է օժան-
դակել և լրացնել: Բացի դրանից, դասագրքի մեջ կան այնպիսի նյութեր, ո-
րոնք այնքան պարզ են ավանդելու և փորձելու համար, որ չեն մտել ձեռնար-
կին մեջ (օրինակ՝ պտուղների տեսակները, պտուղների տարածվելը և այլն):

Մեր ձեռնարկում փորձերը դասավորված են ըստ ծրագրի և ավանդելու
հաջորդականության: Մակայն նրանց նախապատրաստելու մասին ուսուցիչը
պետք է հոգ տանի վաղորդ: Փորձերից մի քանիսը կարելի է կատարել 1—2
ժամվա ընթացքում, մյուսները՝ պետք է նախապատրաստել մի քանի օր ա-
ռաջ և վերջապես կան փորձեր, որոնց նյութը պետք է պատրաստել 1—3,
նույնիսկ 4—5 ամիս առաջ: Այդ պատճառով էլ գործնական աշխատանքները
ամբողջ տարվա պլանն ուսուցիչը պետք է մշակի նախօրոք և նյութը հավա-
քի սկսած ամսականից (Տես հավելվածները):

Փորձերի մի մասը ըստ նրանց բնույթի կարելի է կատարել դասարա-
նում կամ լաբորատորիայում: Տեղական փորձերը պետք է դնել կենդանի ան-
կյունում, հողամասի վրա կամ հանձնարարել աշակերտներին, որ ամեն կա-
տարին Ինչպես վերը հիշատակեցինք, դժվար փորձերը կատարում է ինքն ու-
սուցիչը դասարանում դեմոնստրացիայի ձևով:

Ձեռնարկի օգտագործումը հեշտացնելու համար բաժանել ենք երկու
մասի, առաջին մասում տալիս ենք 5-րդ դասարանի նյութին վերաբերվող
փորձերը, երկրորդ մասում՝ 6-րդ դասարանի փորձերը: Բացի դրանից, առա-
ջին մասի սկզբում տալիս ենք մանրադիտակի նկարագրությունը և գործածե-
լու ձևը:

Վերջում հավելվածի ձևով տալիս ենք նյութ հավաքելու և պահե-
լու մասին խորհուրդներ, ուսկալիվները պատրաստելու ձևերի նկարագրու-
թյունը և անհրաժեշտ նյութերի և իրերի ցուցակը:

Մեզ թվում է, որ սույն ձեռնարկը կարող է օժանդակել նաև առանձին
պատանի բնասերների, պիտիներների և բնագիտական խմբակների աշխատանք-
ներին:

Ձեռնարկի օգտագործողները բոլոր դիտողությունները կընդունենք հա-
ձույքով և հետաքրքրվողների բոլոր հարցերին կպատասխանենք պատրաստա-
կամությամբ:

Կազմողների մեջև աշխատանքը բաժանված է եղել հետևյալ կերպ:
Առաջին մասը, բացի № 25, 26, 30, 40, 71, 72, 73 փորձերից և բազմաց-
ման վերաբերյալ գլխից (№ 74—85 փորձեր), կազմել է Ն. Մելիքյանը: Առա-

Չին մասի վերահիշյալ փորձերը և երկրորդ մասն ամբողջովին կազմել է
Ա. Արարատյանը: Հավելվածի նյութերը կազմված են թե առաջինի և թե երկ-
րորդի կողմից, նայած թե որ № փորձերի հետ են կապված այդ նյութերը:
Ընդհանուր խմբագրությունը կատարել է Ա. Արարատյանը:

Ալեքսանդր Արարատյան, բիոլոգիական գիտությունները թեկնածու, ավագ
գիտական աշխատող (Երևան, ԱՄՄՖԱՆ):

Նտուալիա Մելիքյան, բիոլոգիական գիտությունները թեկնածու, դոցենտ
(Երևան, Գետական համալսարան):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

- Կ. Ս. Տիմիրյազով—*Բույսի կյանքը*
 Պրոֆ. Հ. Բեդեյլյան—*Բույսերի անատոմիա*
 » » —*Բույսերի ֆիզիոլոգիա*
 Լովչինովսկայա—*Բույսերի ֆիզիոլոգիայի պրակտիկում*
 Ա. Արարատյան—*Հեղձարիում*
 Ռ. Գաբրիելյան—*Իվան Միչուրին*
 Ն. Տրոյեցկի և Ն. Ղազարյան—*Ուսումնական աղյուսակներ բույսեր որոշելու համար:*


- Б. В. Всевяцкий и В. Н. Вучетич—*Методика ботаники.*
 В. В. Половцев—*Практические занятия по ботанике.*
 П. П. Мамаев—*Знакомство с жизнью растений путем наблюдения и опытов.*
 В. Остергаут—*Жизнь растения в опытах.*
 К. Шеффер—*Опыты над живой природой.*
 В. Л. Комаров—*Практический курс анатомии растений.*
 В. Л. Комаров—*Типы растений.*
 А. А. Еленкин—*Биология низших растений.*
 В. Н. Исаин—*Практические занятия по ботанике.*
 В. Н. Исаин—*Практические занятия по физиологии растений.*
 О. А. Вальтер и Л. М. Пиневич—*Краткий практический курс физиологии растений.*
 В. Детмер—*Краткий практический курс физиологии растений.*
 И. Кавтарадзе—*Первые работы с микроскопом по ботанике и зоологии.*
 В. Кононов—*Краткий очерк анатомии растений в микроскопических препаратах с руководством для изготовления простейших препаратов.*
 Э. Страсбургер—*Краткий практический курс ботаники для начинающих.*
 Э. Страсбургер—*Курс микроскопической техники.*
 Н. Г. Кременецкий—*Микроскоп и работа с ним.*
 О. А. Вальтер и Э. А. Чижевская—*Практикум по анатомии растений.*
 Л. Кларк—*Ботанический эксперимент в саду и в лаборатории.*

Մ Ա Ս Ա.

ԲՈՒՅՍԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Նախքան բուսաբանության գործնական աշխատանքներին անցնելը ծանոթանանք մանրադիտակի կազմությանը, որն անհրաժեշտ է մի շարք աշխատանքներ կատարելու համար: Մանրադիտակի հիմնական մասերն են՝ սեսողական խողովակը, որը վերին ծայրում տեղավորված է օկուլյարը, իսկ ներքին ծայրին ամրացված է օբեկտիվը: Խողովակն այնպես է ամրացված շտատիվին, որ հեշտությամբ կարելի է բարձրացնել և իջեցնել: Դրա համար կան հատուկ պտուտակներ: Շտատիվի միջին մասում տեղավորված է սեղանիկը, որի վրա պետք է դնել պրեպարատը: Սեղանիկի ճիշտ կենտրոնում բացվածք կա, այդ բացվածքը փակվում է, այսպես կոչվող դիաֆրագմայով: Սեղանիկի տակը ամրացված է հայելին, որը հավաքելով լույսի ճառագայթները ուղղում է դիաֆրագմայի միջով դեպի օբեկտիվը:



Մանրադիտակը պետք է գործածել հետևյալ ձևով՝
 1. Սեղանիկի միջին անցքի դեմաց պետք է բերել ամենափոքր օբեկտիվը № 1-ը, եթե № 1-ը չկա, դիտողությունը սկսել № 3-ով:
 2. Ձախ աչքով նայել օկուլյարի միջով դեպի ցած:
 3. Ուղղել հայելին դեպի լույսը և շարժել մինչև լույսը ընկնի սեղանիկի բացվածքի մեջ:

Նկ. 1. Մանրադիտակ.—1. հայելի, 2. սեղանիկ, 3. սեղմիչներ, 4. օբեկտիվ, 5. տեսողական խողովակ, 6. օկուլյար, 7. պտուտակ:

4. Պրեպարատը դնել սեղանիկի վրա այնպես, որ դիտելու առարկան լինի ուղիղ օրեկտիվի դիմաց:

5. Աջ ձեռքով բռնել մանրադիտակի աջ պտուտակը, կողքից նայել օրեկտիվին և իջեցնել խողովակը պրեպարատի վրա՝ չկպցնելով նրան:

6. Երբ օրեկտիվը կհասնի պրեպարատին, ձախ աչքով նայել օկուլյարի միջով դեպի ցած, աջ ձեռքով պտուտակի օգնութեամբ բարձրացնել խողովակը մինչև որ պարզ կտեսնես օրեկտը:

7. Լավ դիտելուց հետո օրեկտը նկարել:


1-ԻՆ ԳԼՈՒԽ

ԲՈՒՍԱԿԱՆ ԲՁԻՉ

Փ ո գ ձ № 1


ԴԻՏԵՆԻ ՍՈՆԻ ԲԶԻՉՆԵՐԸ

Բույսերի բջջային կազմութիւնը դիտելու համար շատ հարմար է սոխի թաղանթից պատրաստած պրեպարատը: Սոխի արտաքին թաղանթի գունավոր մասից կտրել մի փոքրիկ կտոր,



Նկ. 2. Ծածկող (1) և առարկայակիր ապակի (2):

դնել առարկայակիր ապակու վրա, վրան ապակյա ձողիկով ջուր կաթեցնել և ծածկել ծածկապակով: Պատրաստ պրեպարատը մանրադիտակով դիտելիս երեւում է հետևյալ պատկերը՝ սոխի թաղանթի երկարավուն բջիջները, որոնցից յուրաքանչյուրն ունի 1) պրոտոպլազմա, 2) թաղանթ, 3) կորիզ: Սովորաբար բջիջներում կորիզները դժվար են նկատվում: Կորիզները պարզ տեսնելու համար պետք է ծծան թղթով ծածկապակու տակից հեռացնել ջուրը, հետո ապակյա ձողիկով ծածկապակու մոտ կաթեցնել մեթիլեն կառաչ ներկը, որը կծծվի ապակու տակ ջրի



Նկ. 3 Սոխի թաղանթի բջիջները

փոխարեն: 1—2 բույսերից հետո նորից դիտել մանրադիտակով: Մեթիլեն կանաչից կորիզները ներկվում են և դառնում տեսանելի: Լավ դիտելուց հետո նկարել սոխի թաղանթի բջիջները: Նույն ձևով պրեպարատ պատրաստեցեք և դիտեցիք՝ տերևի մաշկը, մամուռը և այլն:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մանրադիտակ,
2. առարկայակիր ապակի,
3. ծածկող ապակի,
4. պինդեթ,
5. լանցեթ,
6. մեթիլեն կանաչ (պատրաստելը տես գրքի վերջում՝ հավելված 3-րդ),
7. սոխ,
8. ասեղներ,
9. ապակյա ձողիկներ:


2-ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Ս Ե Ր Մ

Փ ո Ր Ճ № 2

ԼՈՒՐՈՒ ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Երկշաքիլ բույսերի սերմի կազմութունը դիտելու համար, կարելի է վերցնել լոբու կամ սիսեռի սերմեր և թրջել: Ուռչելուց հետո հանել վերնամաշկը. մնացած մասը բույսի սաղմն է, որի մեծ մասը կազմում են երկու մեծ շաքիլները: Նրանք իրար հետ միացած են փոքրիկ մարմնիկի միջոցով, որի վրա խոշորացույցի օգնությամբ կարելի է տեսնել արմատիկը, ցողունիկը և բողբոջիկը մանրիկ տերևներով:



Նկ. 4. Լոբու սերմի կազմութունը. A—մաշկը հանելուց հետո, B—մեկ շաքիլը հեռացրած՝ a—շաքիլը, b—մյուս շաքիլի ամրացման տեղը, c—արմատիկը, d—բողբոջիկը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Սերմեր—լոբու կամ սիսեռի,
2. լանցեթ,
3. բաժակ,
4. ասեղ,
5. խոշորացույց:

Փ ո Ր Ճ № 3

ՑՈՐԵՆԻ ՀԱՏԻԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ցորենի հատիկի կազմութունը հարմար է դիտել պատրաստի պրեպարատի վրա: Հատիկի մեջ մի ծայրին գտնվում է փոքրիկ սաղմն իր արմատիկով, բողբոջիկով և փոքրիկ թեփուկով: Այդ թեփուկը բաժանում է սաղմը սերմի մյուս մասերից. նա


կոչվում է վահանիկ: Սերմի մյուս ավելի խոշոր մասը կոչվում է էնդոսպերմ, որը կազմված է սննդանյութերով լի բջիջներից՝ նկարեցեք ցորենի հատիկի կազմութունը:

Փ ո Ր Ճ № 4

ՑՈՐԵՆԻ ՀԱՏԻԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

(Սեխասանք ուսուցչի համար)

Ցորենի հատիկից պրեպարատ պատրաստելու համար պետք է հատիկները 24 ժամ պահել ջրի մեջ, այնուհետև տեղափոխել 96% ալիբոնի սպիրտի մեջ, որն ամրացնում է բոլոր հյուսվածքները: Սպիրտի մեջ մի քանի ժամ պահելուց հետո, ածելիով կտրել երկայնական հատվածներ: Այդպիսի հատվածներ ստանալու համար օրեկտը պետք է տեղափոխել խցանի կամ կտակենու ծուծի կտորների արանքը, բռնել ձախ ձեռքով և կտրել աջով: Կտրել սաղմի վրայով: Ընտրել բարակ հատվածներ, դնել առարկայակիր ապակու վրա, կաթեցնել ջուր, ծածկել ծածկապակով և դիտել միկրոսկոպի օգնությամբ: (Նկ. 5): Ավելի պարզ պատկեր կստացվի եթե ջրի փոխարեն գլիցերին կաթեցնենք:



Նկ. 5. Ցորենի հատիկի կազմութունը՝ a—մաշկը, b—էնդոսպերմը, c—սպղմը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մանրադիտակ,
2. առարկայակիր ապակի,
3. ծածկող ապակի,
4. ցորենի հատիկ,
5. ածելի,
6. 96% սպիրտ,
7. բաժակ,
8. պինդեթ,
9. գլիցերին:

Փ ո Ր Ճ № 5

ՑՈՐԵՆԻ ԱԼՅՈՒՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի թեյի գդալ ցորենի ալյուր լցնել սնակի մեջ և խմոր պատրաստել: Վերցնել թեյի բաժակ, բերանին կապել թանդիֆ, բաժակը լցնել ջրով, մինչև թանդիֆի հետ շփվելը: Թանդիֆի վրա դնել խմորը և անընդհատ շարժել ապակյա ձողով: Այդ ժամանակ խմորից անջատվում է կաթի նման սպիտակ նյութ և պտորում է բաժակի ջուրը: Որոշ ժամանակից հետո խմորի ծավալը փոքրանում է, նա դառնում է դեղին գույնի գնդիկ

(ստանձանյութ) ախինքն այն սպիտակուցային նյութը, որը միացնում է խմորը: Բաժակի մեջ անցած սպիտակ նյութը նստում է հատակին: Մեկ օրեց հետո թափել բաժակի ջուրը և նստվածքի վրա ավելացնել յոգի լուծույթ: Յուրից նստվածքը կապտում է. դա ցույց է տալիս, որ այդ սպիտակ նյութը օսլա է:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Յորենի ալյուր,
2. Թեյի պնակ,
3. ապակյա ձողիկ,
4. բաժակ,
5. Թանդիֆ,
6. Թեյ,
7. յոգի թույլ լուծույթ (պատրաստումը տես գրքի վերջում հավելված № 3):

Փ ո Ր ձ № 6

ՃԱՐՊԻ ԱՆՉԱՏՈՒՄԸ

Ալյուրի ճարպը կարելի է անջատել հետևյալ ձևով: Պարպամունքից 2 ժամ առաջ ալյուրը լցնել փորձանոթի մեջ, վրան ավելացնել եթեր և բերանը խցանով ամուր փակել: Պարպամունքի ժամանակ փորձանոթի եթերը լցնել ափսեի մեջ և թողնել մինչև լրիվ գոլորշիանալը: Ափսեի մեջ կմնան միայն ճարպի հետքեր: Համոզվելու համար, որ դա ճարպ է, անհրաժեշտ է ֆիլտրի թղթով մաքրել ափսեի հատակը: Թղթի վրա հստացվի ճարպի բիծ:

Նույն ձևով փորձեցեք հայտնաբերել ճարպը լոբու, վարսակի, դարու սերմերի մեջ:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Ալյուր,
2. փորձանոթ,
3. ափսե,
4. եթեր,
5. ֆիլտրի թուղթ:

Փ ո Ր ձ № 7


ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ՕՍԼԱՅԻ ՀԱՏԻԿՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԲՈՒՅՍԵՐԻ ՄԵՋ

1. կարտոֆել,
2. եգիպտացորեն,
3. ցորեն:

Առարկայակիր ազակու վրա կաթեցնել ջուր, կարտոֆելը կտրել, լանցեալով քերել, ծայրում հավաքված կաթնահյութը տեղափոխել առարկայակիր ազակու վրա ջրի կաթիլի մեջ: Ասեղի օգնությամբ խառնելով նստրացնել նյութը, ծածկել ծածկապակով և դիտել մանրադիտակի օգնությամբ:

Նույն ձևով կարելի է օսլայի հատիկների պրեպարատ պատրաստել լոբու, ցորենի, բրնձի սերմերից: Սերմերը կտրել, ասեղի օգնությամբ պոկել դնդասեղի գլխի չափ մի կտոր, լավ ման-

րացնել առարկայակիր ազակու վրա մի կաթիլ ջրի մեջ և ծածկել ծածկապակով՝ մանրադիտակով դիտելու համար: Համոզվելու համար որ տեսած հատիկները օսլա են, կարելի է աղբել յոգով-օսլայի հատիկները կիպտեն:



Նկ. 6. Օսլայի հատիկներ. 1. կարտոֆել, 2. վարսակ, 3. եգիպտացորեն, 4. ցորեն:


Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մանրադիտակ,
2. կարտոֆել, ցորեն, լոբի,
3. լանցեա,
4. ասեղ,
5. առարկայակիր ազակիներ, 6. ծածկող ապակիներ:

Փ ո Ր ձ № 8

ԴԻՏԵԼ ՍՊԻՏԱԿՈՒՅԻ ՀԱՏԻԿՆԵՐԸ

Սպիտակուցի հատիկները տեսնելու համար պետք է վերցնել ցորենի հատիկի կտրվածքը (պատրաստի պրեպարատ) և փնտրել ալեյրոնի շերտը: Այն դեղին շերտը, որը գտնվում է պողպատայանի տակ, կոչվում է ալեյրոնի շերտ: Նրա բջիջների մեջ գտնվում են մեծ քանակությամբ սպիտակուցային հատիկներ:



Նկ. 7. Ցորենի էնդոսպերմի հատվածը մեծացրած.
1. պողպատյան, 2. սերմի մաշիկ, 3. ախլորոնի
շերտ—բջիջների մեջ երևում են սպիտակուցի ման-
րիկ հատիկները, 4. օսլայակիր բջիջներ:

Փ ո Ր Ճ № 9

ՃԱՐՊԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՆԵԼԸ ԹՂԹԻ ՕԳՆՈՒԹՅԱՐԻ

Յուղով հարուստ սերմերի ճարպին ավելի հեշտ եղանակով
վարելի է հայտնաբերել: Դրա համար կարելի է վերցնել արե-
վածաղկի սերմ, հեռացնել կեղևը, տեղավորել ֆիլտրի կամ ծծան
թղթի արանքում և սեղմել: Ստացվում է ճարպի բիծ. համոզ-
վելու համար, որ դա ջուր չէ կարելի է չորացնել. եթե ջուր լինի,
չորացնելուց հետո ոչ մի հետք չի մնա: Նույն ձևով փորձել
կտավհատի, կանեփի, բողկի, ախլի, ընկույզի և այլ սերմեր:

Աճհրածես իբր և ցյութեր.

1. Արևածաղիկ և այլ սերմեր, 2. ֆիլտրի թուղթ:

Փ ո Ր Ճ № 10

ՁՐԻ ԵՎ ՄՈՒՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ՍԵՐՄԵՐԻ ՄԵՁ

Սերմերը լցնել փորձանոթի մեջ և սպիրտայրոցի վրա աս-

քացնել: Սերմերից դուրս եկած ջուրը կաթիլների ձևով նստում
է փորձանոթի պատերի վրա: Դա ցույց է տալիս, որ սերմերը
բացի սննդանյութերից իրենց մեջ պարունակում են որոշ քա-
նակությամբ ջուր:

Սերմերը այրելով ճենապակյա թասի մեջ կարելի է ստա-
նալ մոխիր: Դրա համար պետք է սերմերը մանրացնել, լցնել
ճենապակյա թասի մեջ և մի քանի ժամով դնել պրիմուսի ուժեղ
կրակի վրա: Սկզբում սերմերը կսևանան (կածխանան), հետո
լրիվ կայրվեն և տակը կմնա քիչ մոխիր:

Աճհրածես իբր և ցյութեր.

1. Փորձանոթ, 2. սպիրտայրոց, 3. ցորենի սերմեր, 4. ճենապակյա թաս,
5. պրիմուս:

Փ ո Ր Ճ № 11

Ս Ե Ր Մ Ի Ծ Լ ՈՒ Մ Ը

Վերցնել Պետրիի թաս կամ սովորական ափսե, հատակը
ծածկել թրջած ֆիլտրի կամ ծծան թղթով (կարելի է վերցնել
երկու շերտ՝ խոնավությունը ավելի լավ պահելու համար): Հետո
վերցնել սխեռի սերմեր, մի օր թրջել և շարել ֆիլտրի թղթի
վրա. ափսեի բերանը ծածկել ապակիով, որը ներսի կողմից
նույնպես պետք է ծածկված լինի թաց ծծան թղթով: Բերանը
ծածկելիս թողնել փոքր անցք օդի համար, որովհետև ծլման
ժամանակ սերմերը թթվածնի կարիք ունեն: Այնուհետև ափսեն
պետք է դնել պատուհանի մոտ, որտեղ արև է ընկնում. ծլելու
համար անհրաժեշտ է ջերմութուն: Թողնել այնտեղ 3—4 օր
կամ ավել, մինչև սերմերը կծլեն: Միշտ պետք է հետևել, որ ֆիլտ-
րի թուղթը չչորանա: Շատ էլ չպետք է թրջել սերմերը կարող
են նեխել:

Ծծան թղթի փոխարեն կարելի է վերցնել բամբակի շերտ:

Աճհրածես իբր և ցյութեր.

1. Ափսե կամ Պետրիի թասեր, 2. ֆիլտրի թուղթ, 3. ապակյա ձողիկներ,
4. սերմեր (սխեռ, լոբի, ոսպ), 5. ապակյա թիթեղներ (ծածկելու համար):

Փ ո Ր Ճ № 12

ՕՍԻԱՅԻ ՇԱՔԱՐ ԴԱՌՆԱԼԸ

Ինչպես հայտնի է, օսլան յոդից կապտում է: Այդ բանում
համոզվելու համար փորձանոթի մեջ լցնենք ջուր, ավելացնենք

քիչ օսլա և թափահարենք, այնուհետև մեջը կաթեցնենք յողթ թույլ լուծույթ: Փորձանոթի հեղուկը անմիջապես կհալոտի: Այս ձևով կարելի է հայտնաբերել օսլայի ներկայութիւնը բոլոր ծըլած սերմերում: Դրա համար օսլայի փոխարեն կարելի է վերցնել սերմերից պատրաստած ալյուր և յողթով փորձել: Սերմերը կարելի է մանրացնել հավանդի մեջ: Նույն փորձը կարելի է կրկնել ծլած սերմերի վրա, որոնք յողթից կնեղկվեն շատ թույլ, որովհետև օսլայի մի մասը ծլման ժամանակ շաքարի է վերածվում, իսկ շաքարը յողթից չի կապտում: Համոզվելու համար, որ ծլման ժամանակ օսլան շաքար է դառնում, կարելի է կատարել մի շատ հասարակ փորձ: Նախ ծամել չծլած սերմեր, դուք որոշ ժամանակից հետո կզգաք քիչ քաղցրութիւն, բերանը լավ լվանալ և ծամել ծլած սերմեր դուք անմիջապես կզգաք բավական քաղցրութիւն: Դա ցույց է տալիս, որ ծլման ժամանակ օսլան իրոք քայքայվում է և դառնում շաքար: Օսլան շաքար է դառնում մի հատուկ նյութի՝ դիաստազ ֆերմենտի ազդեցութեան տակ:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Օսլա, 2. յողթ թույլ լուծույթ (պատրաստումը տես գրքի վերջում),
3. ցորենի հատիկներ (ծլած և չծլած), 4. հավանդ (ալյուր պատ բաստիլու համար), 5. փորձանոթ:

Փ ո Ր Ճ № 13

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ԴԻՍՍՏԱԶ

(Աւստրալիայի ուսուցչի համար)

Վերցնենք 50 գրամ զարու սերմ և ծլեցնենք: Երբ արմատները կդառնան 1—2 սմ, տեղափոխենք մի տաք տեղ՝ օրինակ արևի տակ մինչև լավ չորանալը: Չորանալուց հետո այդ սերմերը դարձնել ալյուր՝ մանրացնելով սովորական հավանդի մեջ: Այդ ալյուրից վերցնենք 20 գրամ, ավելացնենք 100 խ. սմ ջուր և թողնենք 1—2 ժամ: Այնուհետև քամենք թանդիֆով և ֆիլտրենք լուծույթի մեջ պարունակվում է դիաստազ ֆերմենտը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Գարու սերմ, 2. հավանդ, 3. թանդիֆ, 4. ֆիլտրի թուղթ, 5. կոլբ, 6. ձագար:

Փ ո Ր Ճ № 14

ԴԻՍՏԱԶԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՕՍԼԱՅԻ ՎՐՄ

Վերցնենք քիչ օսլա (եթե լուծվող օսլա չկա, կարելի է վերցնել կարտոֆելի ալյուր) երկու փորձանոթների մեջ, վրան լցնենք ջուր և եռացնենք. եռացնելու հետևանքով փորձանոթների մեջ ստացվում է օսլայի շոն: Ստանալուց հետո մի փորձանոթում շոնի վրա ավելացնենք 3—4 խ. սմ դիաստազի լուծույթ և խառնենք (թափահարելով), մյուս փորձանոթը թողնենք նույնը: 10 րոպե հետո երկու փորձանոթում էլ ավելացնենք մի քանի կաթիլ յողթի լուծույթ և լավ խառնենք: Դուք կտեսնեք խոշոր տարբերութիւն երկու փորձանոթների հեղուկների միջև:

1-ին փորձանոթում, որտեղ դիաստազ կա, լուծույթը մնում է անգույն կամ քիչ դեղնում է յողթից:

2-րդում, որտեղ դիաստազ չենք ավելացրել, շոնը յողթից կապտում է:

Փորձը ցույց է տալիս, որ դիաստազի ազդեցութեան տակ 1-ին փորձանոթում օսլան քայքայվել է և վեր է ածվել շաքարի. այդ պատճառով էլ հեղուկի գույնը յողթից չի փոխվում: Փորձը հաջող կատարելու համար օսլան պետք է վերցնել շատ քիչ՝ դանակի ծայրով:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Երկու փորձանոթ, 2. օսլա, 3. յողթի լուծույթ, 4. դիաստազի լուծույթ:

Փ ո Ր Ճ № 15

ՍԵՐՄԻ ՈՒՌՉԵԼԸ ԶՐԻՑ

Վերցնենք սիսեռի սերմեր, լցնենք չափիչ գլանի մեջ, չափենք նրանց բարձրութիւնը և տեղում նշանակենք: Սերմերը տեղափոխենք մի աման ջրի մեջ և այնտեղ թողնենք 24 ժամ: Հետո գաատրկենք ջուրը, սերմերը քամենք թանդիֆով, որքան կարելի է մաքուր, նորից լցնենք չափող գլանի մեջ և նշանակենք բարձրութիւնը: 2-րդ անգամ բարձրութիւնը ավելի մեծ կլինի: Երկու բարձրութիւնների տարբերութիւնը կհամողի մեզ, որ սերմերը ջուր ծծելով ուռչում են՝ նրանց ծավալը մեծանում է: (Սերմերը չի կարելի գլանի մեջ թողնել ուռչելու, որովհետև կարող է գլանը կտրվել):

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Չափիչ գլան, 2. բանկա կամ բաժակ, 3. սիսեռի սերմ, 4. թանդիֆ:



ՍԵՐՄԻ ԾՆՈՒՄԸ ԿԱԽՎԱԾ Է ՁՐԻ ԲԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՅ

Վերցնենք 10 թեյի բաժակ կամ նույն մեծութեան ապակյա բանկա: Բոլորի հատակներին դնենք հիգրոսկոպիկ բամբակ, յուրաքանչյուր բանկայի մեջ՝ բամբակի վրա շարենք 25 հատ ցորենի հատիկ. հետո գլանների մեջ լցնենք ջուր:

- 1-ին բանկայում 2 խ. սմ
- 2-րդ » 4 խ. սմ
- 3-րդ » 6 խ. սմ և այլն՝ 2-ական խ.

սմ ավել մինչև 10-րդ բանկան, որտեղ պետք է լցնել 20 խ. սմ ջուր: Գլանները ծածկենք ապակով, որի տակ կպած է թրջած ֆիլտրի թուղթ: Չորս օրից հետո հաշվենք յուրաքանչյուր բանկայում ծլած սերմերի թիվը:


1-ին բանկայում ոչ մի սերմ չի ծլի, ջրի պակասութեան պատճառով: Ամենալավ ծլումը տեղի կունենա 6—7-րդ բանկաներում: Վերջին բանկաներում ծլած սերմերի թիվը քիչ կլինի, իսկ 10-րդում նույնիսկ կարող է պատահել բոլորովին չծլնել, ջրի շատութեան պատճառով: Փորձը ցույց է տալիս, որ սերմի հաջող ծլման համար անհրաժեշտ է որոշ քանակութեամբ ջուր այնպես, որ սերմերը միշտ մնան խոնավ, բայց ջրով ծածկված չլինեն (Տես փորձ Ա 17):

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

- 1. 10 հատ ապակյա բանկա կամ թեյի բաժակ,
- 2. հիգրոսկոպիկ բամբակ,
- 3. սիսեռի սերմեր:

ՕՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՄԵՐԻ ԾՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Վերցնել երեք բանկա կամ թեյի բաժակ, հատակները ծածկել ֆիլտրի թղթով, վրան լցնել սիսեռի թրջած սերմեր:



Նկ. 8. Սերմի ծլման համար անհրաժեշտ է օդ:

1-ին բանկայի մեջ ավելացնել մի քանի խ. սմ ջուր և բերանը պինդ փակել այնպես, որ ոչ մի տեղից օդ ներս չմտնի:

2-րդ բանկայի սերմերի վրա լցնել այնքան ջուր, որ սերմերը ծածկվեն, և բերանը փակել ապակով:

3-րդ բանկայի մեջ նույնպես ավելացնել մի քանի խ. սմ ջուր և բերանը կիսով չափ ծածկել ապակով կամ բաց թողնել, որ դրսից օդը կարողանա ներս մտնել:

4—5 օրից հետո հաշվել ծլած սերմերը: 1-ին բանկայի մեջ քիչ սերմեր են ծլում, 2-րդ բանկայինը բոլորովին չեն ծլում, իսկ 3-րդ բանկայի սերմերը լավ ծլում են: 1-ին բանկայի բերանը փակ լինելու պատճառով ծլել է սերմերի որոշ մասը ի հաշիվ բանկայի մեջ եղած օդի: 2-րդ բանկայի սերմերը՝ լինելով ջրով ծածկված, համարյա օդ չեն ստացել, դրա համար էլ չեն ծլել, իսկ 3-րդ բանկայինը անընդհատ դրսից օդ ստանալով՝ նորմալ ծլել են:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.


- 1. Երեք բանկա,
- 2. սիսեռի սերմեր,
- 3. ֆիլտրի թուղթ,
- 4. ապակյա թիթեղներ:

ՅՈՒՅՑ ՏԱԼ, ՈՐ ՍԵՐՄԵՐԸ ԾՆՁՈՒՄ ԵՆ ԹԹՎԱԾԻՆ

Բանկայի մեջ լցնել ծլած սերմեր, բերանն ամուր փակել խցանով և երկու օրով դնել մութ տեղ: Այնուհետև վառել փայտե ձողիկը և մտցնել բանկայի մեջ: Վառված ձողիկն անմիջապես կհանգչի: Դա ցույց է տալիս, որ բանկայի մեջ եղած թթվածինը կլանվել է սերմերի կողմից, որոնք օգտագործել են շնչառութեան համար և արտադրել են ամիաթթու գազ: Ամիաթթու գազն այրմանը չի նպաստում, դրա հետևանքով վառված լուցիկին նրա մեջ հանգչում է:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

- 1. Մեկ լիտրանոց բանկա,
- 2. խցան բանկայի համար,
- 3. սիսեռի ծլած սերմեր,
- 4. լուցիկ և փայտե ձողիկ:



Նկ. 9. Սերմերը շնչում են թթվածին:

ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՄԻ ԾԼՄԱՆ ՀԱՄԱՐ

Թրջել հալասար քանակությամբ սիսեռի սերմերը և շարել երեք բանկաների մեջ ֆիլտրի թաց թղթի վրա (Տես փորձ № 11): Այդ բանկաները դնել հետևյալ տեղերում:

1-ինը տաք աեղ՝ Ց 40°—45°, օրինակ, վառարանի կողքին:

2-րդը միջին բարեխառնության տակ՝ Ց 20°—25°, վառարանից քիչ հեռու:

3-րդը ցածր ջերմության տակ՝ մոտավորապես Ց 0° (գուրսը կամ սառը նկուղում): 5—7 օրից հետո դիտել ծլման ընթացքը և հաշվել թե քանի սերմ է ծլել յուրաքանչյուր ամանում:

Իուր կնիկաեք, որ սերմերը լավ են ծլում միջակ տաքության ժամանակ, որը համարվում է լավագույն ջերմաստիճանը: Լավագույն ջերմաստիճանը զանազան սերմերի համար տարբեր է:


Անհրաժեշտ իրեր և նյութեր.

- 1. Երեք բաժակ կամ բանկա, 2. ֆիլտրի թուղթ, 3. սիսեռի սերմեր:

ՑՈՒՅՑ ՏԱԼ, ՈՐ ԾԼՈՂ ՍԵՐՄԵՐԸ ԱՐՏԱԴՐՈՒՄ ԵՆ ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱԶ

(Ուսուցչի համար)

Գործիքը պետք է պատրաստել համաձայն նկ. № 11-ի Ա և B բանկաները կարող են լինել 200 խ. սմ տարողության, իսկ



Նկ. 10. Ծլող սերմերն արտաշնչում են ածխաթթու գազ:

B-ն մոտավորապես 300—400 խ. սմ:

A և B բանկաները լցնել թափանցիկ կրաջրով (կրաջրի պատրաստումը տես գրքի վերջում՝ հավելված № 3) և ամուր փակել խցաններով:

B բանկան կեսից տ- 3-րդ խողովակի միջո-

ցով քաշել ամբողջ գործիքի օդը: Այդ նպատակի համար ծառայում է սապիրատորը (Կառուցվածքը տես գրքի վերջում, հավելված № 3): Կարելի է օդը քաշել նաև պարզ սապիրատորով—F: Ասպիրատոր չունենալու դեպքում օդը կարելի է ծծել բերանով:

B բանկայի կրաջուրը խիւււյն կպտտովի, իսկ A-ի մեջ բուրբուղին մաքուր կմնա, որովհետև A անոթով անցնում է գրքի օդը, որը շատ քիչ ածխաթթու է պարունակում, իսկ B անոթով անցնում է B անոթի օդը, որը հարուստ է ծլած սերմերի արտադրած ածխաթթու գազով:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

- 1. Մեկ բանկա 300—400 խ. սմ տարողության, 2. երկու բանկա 200 խ. սմ տարողության, 3. բանկաներին համապատասխան խցաններ, 4. ազակյա ծնկաձև խողովակներ (Պատրաստել տես գրքի վերջում), 5. սապիրատոր (Պատրաստել տես գրքի վերջում), 6. սիսեռի ծլած սերմեր, 7. կրաջուր (Պատրաստել տես գրքի վերջում):

ԻՆՉՊԵՍ ՈՐՈՇԵԼ ՍԵՐՄԵՐԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՈՎՈՄԸ

Վերցնել 100 հատ ցորենի հատիկ, թրջել և տաք սենյակում ձլեցնել (Տես փորձ № 11):

Երեք օրից հետո ծլած սերմերը հանել, հաշվել և թիվը գրել: Նույնը կրկնել ամեն երկու օրը մեկ անգամ:

Մեկ շաբաթից հետո հաշվել ծլած սերմերի ընդհանուր քանակը, այդ թիվը կլինի ավյալ սերմերի ծլունակության %-ը: Որոշեցեք զարու, լոբու, սապի սերմերի ծլունակության տոկոսը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

- 1. Ցորեն, 2. զնակներ կամ Պեռլիի թասեր, 3. ֆիլտրի թուղթ:

3-րդ գ Լ Ո Ւ Խ

Ա Ր Մ Ա Տ

Փ ո Ր Ճ № 22

1. ՀՈՂԻ ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԸ

Պետք է վերցնել սովորական հող ծաղկամանից կամ գրքից և չորացնել արևի տակ: Չորացնելուց հետո մանրացնել, մաղելը քննել փորձանոթը կիսով չափ, վրան ջուր ավելացնել, լավ

խառնել և թողնել, որ հանդարտվի: Դիչ ժամանակից հետո դուք կտեսնեք, որ հողի մասնիկները սկսում են նստել փորձանոթի հատակին: Փորձանոթն ամրացնել շտատիվին և թողնել 1—2 օր: Դուք կտեսնեք, որ փորձանոթի պարունակությունը բաժանվում է 3—4 շերտի: Փորձանոթի հատակին նստում են խոշոր մասնիկները, — դա ավազն է, դրանից վեր ավելի փոքր մասնիկներ են նստում, այսինքն կավը, իսկ ջրի երեսին լողում են բուսական և կենդանական մնացորդները: Այդպիսով դուք հողում հայտնաբերում եք ավազ, կավ և օրգանական մնացորդներ:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Հող, 2. մաղ, 3. փորձանոթ, 4. շտատիվ (պատվանդան):

Փ ո Ր Ճ № 23


2. ՀՈՂԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ

(Ուսուցչի համար)

Նախորդ փորձի ժամանակ կարելի է տեսնել միայն հողի զանազան շերտերը, բայց նրանց իրարից չի կարելի բաժանել: Հողի մեխանիկական բաժանման համար պետք է պատրաստել մի գործիք հետևյալ ձևով: Վերցնել մեծ բանկաներ, ռետինե և ապակյա խողովակներ և խցաններ: Յուրաքանչյուր բանկայի բերանին սարքել երկանցքանի խցան, որի միջով պետք է անցնեն ապակյա խողովակներ, մեկը՝ երկար, մյուսը՝ կարճ (Տես նկ. 11):

1-ին բանկայի խողովակներից մեկը պետք է հասնի հատակին, իսկ մյուսը 2 սմ հատակից բարձր: 2-րդ բանկայում նույնն է, բայց երկար խողովակը պետք է չհասնի հատակին, այլ մի քիչ բարձր մնա: 3-րդի մեջ երկար խողովակն ավելի բարձր պետք է լինի: Ապակյա խողովակի ծնկաձև մասերը ռետինե խողովակներով միացնել: 1-ին բանկայի երկար խողովակը միացնել 2-րդի երկար խողովակի հետ, իսկ 2-րդի կարճ խողովակը միացնել 3-րդի կարճի հետ: Վերջին բանկայի երկար խողովակի դրսի ծնկաձև մասի վրա պետք է հագցնել ռետինե խողովակ, որի ծայրին հագցված է ապակյա խողովակ: Այդ վերջինս թողնել բանկայի մեջ, որը պետք է ավելի ցած դրված լինի քան մյուսները: Վերջապես 1-ին բանկայի կարճ խողովակը պետք է միացնել ռետինե խողովակով ասպիրատորի ջրի բանկայի հետ (Տես գրքի վերջում՝ հավելված № 3):

1-ի բանկայի մեջ լցնել մաղած հող 3—4 սմ բարձրությամբ: Բոլոր բանկաների խցանները պետք է փակ լինեն և զամազկայով լցրած: Ասպիրատորի մեջ ջուր լցնել, փոքրիկ ապակյա խողովակի միջոցով ծծել օդը: Ջուրը կսկսի ասպիրատոր



Նկ. 11. Հողի մեխանիկական մասերի անջատումը:

րից գնալ 1-ին բանկայի մեջ, իսկ այնտեղից իր հետ վերցնելով հողի մասնիկները և թեթև մասերը կտանի 2-րդ բանկայի մեջ և հետո՝ 3-րդը: Այս ձևով հողի թեթև մասերը կգնան ավելի հեռու: Նայած բանկաների թվին հողը կարող է բաժանվել 3—4 մասի: Ամենավերջին բաց բանկայի մեջ կնստի նուրբ տիղմային մասը:


Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Չորս բանկա, 2. ռետինե խողովակ, 3. ապակյա խողովակ, 4. խցաններ, 5. զամազկա, 6. ասպիրատոր (Տես գրքի վերջում՝ հավելված 3-րդ):

ԱՐՄԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Փոքր բահի օգնությամբ հողից հանենք զանազան խոտա-
բույսերի արմատներ այնպես, որ չկտրտվեն և ամբողջությամբ
դուրս գան: Եթե հողը չոր է, պետք է ջրել և սպասել, որ ջուրը
ծծվի հողի մեջ: Այնուհետև պետք է հանած բույսերի արմատները
չվանալ առվի մեջ (կամ մի անձան ջրի մեջ), զգուշությամբ չորաց-
նել փաթեթի կամ ծծան թղթով և դասավորել թղթերի մեջ
այնպես, որ իրար վրա չհնչեն:

Այժմ վերցնենք որևէ երկաքիչ բույսի արմատ՝ լորու, սի-
սեռի, երեքնուկի: Երևում է, որ արմատն ունի մի առանցք կամ
գլխավոր արմատ, որը ցողունի շարունակությունն է կազմում:
Նրանից դուրս են գալիս ճյուղեր, որոնք ավելի բարակ են:
Սրանք էլ իրենց հերթին ավելի բարակ և բարակ ճյուղերն են
ունենում իրենց վրա: Այսպիսի արմատը կոչվում է առանցքային:



Նկ. 12. Արմատի տեսակները. 1. Թելանման
արմատ, 2. Իլիկաձև հաստացած, 3. շաղգամա-
ձև հաստացած, 4. առանցքային արմատ,
5. փնջաձև արմատ:

արմատ չի երևում: Նրանց արմատները փնջով դուրս են գալիս
ցողունի ստորին մասից: Այսպիսի արմատը կոչվում է փնջաձև
արմատ:

Իհրաձ բույսերի արմատները չորացրեք՝ ամեն օր փոխե-
լով թղթերը:

Նկարեցեք առանցքային և փնջաձև արմատները:

Աճհրածես իբե և նյութե

- 1. Փոքր բահ, 2. մի գույլ ջուր, 3. ծծան թուղթ, 4. սոխ, 5. աման
(ծղեցնելու համար), 6. փաթեթի կամ ծծան թուղթ, 7. զանազան բույսերի
արմատներ

ԱՐՄԱՏԻ ԶԵՎԱՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերցնենք երկամյա բույսերի արմատներ՝ դազարի, բողկի-
ձակնդեղի: Այս արմատները կազմված են այնպես, ինչպես և
առանցքային արմատը, միայն թե սրանց գլխավոր արմատը
հաստացած է: Ինչպես հայտնի է, այս արմատների մեջ սնունդ
կա ամբարված:

Եթե ձեռք բերեք գեորգին կոչվող ծաղկաբույսը, դիտեցեք
նրա արմատները: Գեորգինի արմատների վրա հատուկ արմա-
տային պլաթներ են առաջանում, որոնցով և բազմացնում են
այդ բույսը:


Նկարեք երկամյա բույսերի արմատները:

Աճհրածես իբե և նյութե

- 1. Երկամյա բույսերի արմատներ, 2. գեորգինի արմատներ:

ԱՐՄԱՏԻ ԱՃՈՒՄԸ

Փորձից 5 օր առաջ ծղեցնել լորու կամ սիսեռի սերմեր:
Չլած սերմերից զգուշությամբ ընտրել մի գույլ՝ երկար արմատ-
ներով: Այնուհետև վերցնել մի-
լիմետրանոց քանոն, քանոնի բա-
ժանուսների վրա դնել արմատը և
սև տուշով միլիմետրանոց բաժա-
նումների ուղղությամբ՝ արմատի
վրա՝ գծեր քաշել սկսած ծայրից:
Գծելուց առաջ արմատները պետք
է ցամաքեցնել Փիլտրի թղթով,
սրպեսզի տուշը չտարածվի, և գծերը
պարզ լինեն: Այդ երկու արմատնե-
րը գնդասեղի օգնությամբ ամրաց-
նել խոնավ կամեղայի մեջ (Պատ-
րաստելը տես գրքի վերջում):
2-րդ օրը կարելի է տեսնել, թե ար-
մատը որ մասովն է աճում: Ար-
մատի այն մասը, որտեղ գծերը հեռացել են միմյանցից, ավելի
արագ է աճում:



Նկ. 13. Արմատի աճումը:

արմատի այն մասը, որտեղ գծերը հեռացել են միմյանցից, ավելի
արագ է աճում:


Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Խոնավ կամերա (Պատրաստումը տես գրքի վերջում), 2. գնդասեղ-
ներ, 3. վրձին կամ գրիչ, 4. տուշ, 5. սիսեռի կամ լոբու ձլած սերմեր:

Փ ո Ր Ճ № 27

ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ ՍՏԱՆԱԼ ԱՐՄԱՏԱՅԻՆ ՄԱՉԻԿՆԵՐ

Թեյի ափսեի մեջ դնել գիպսի թիթեղ, տակը լցնել ջուր:
Այդ թիթեղի վրա դնել արևածաղկի թրջած սերմեր, ծածկել



Նկ. 14. Սերմերի ձևցումը
գիպսի թիթեղի վրա

բաժակով կամ ապակյա բանկա-
յով՝ խոնավություն պահելու հա-
մար, և դնել տաք տեղ:

Գիպսի թիթեղը հատկություն
ունի ջուր ձծկելու: Ծծելով ափ-
սեի ջուրը՝ նա խոնավ է պահում
սերմերը, որոնք 3—4 օրից հետո
լավ ձլում են, և արմատները
շատ խիտ կերպով ծածկվում
են արմատային մազիկներով:

Անհրաժեշտ նյութեր և իրեր.

1. Թեյի ափսե, 2. բաժակ, 3. գիպսի
թիթեղ (Պատրաստելը տես հավելված
№ 3-ում), 4. արևածաղկի սերմեր:

Փ ո Ր Ճ № 28

ԱՐՄԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆԸ

(Ուսուցչի համար)

Պարապմունքից 15 օր առաջ, սոխի կոճղեսը դնել բանկա-
յի բերանին այնպես, որ միայն ներքին մասը շփվի ջրի հետ:
Մի քանի օրից հետո կոճղեսի տակից դուրս կգան բազմաթիվ
արմատներ: Նոր աճած արմատները պետք է տեղափոխել սպիրտի
մեջ և թողնել 1 օր, որպեսզի ամրանան: Իրանից հետո ածելիով
կտրել շատ բարակ լայնական հատվածներ: Այնուհետև հատված-
ներից պատրաստել պրեպարատ հետևյալ ձևով՝ պինցետով վերց-
նել 1—2 բարակ հատված, դնել առարկայակիր ապակու վրա,
վրան կաթեցնել ջուր, ծածկել ծածկապակով և դիտել մանրա-
դիտակով: Նույնը կարելի է ցույց տալ աշակերտներին պատ-

րաստի պրեպարատի վրա: Պատրաստի պրեպարատների կոմպլեկ-
տից վերցնել իրիս բույսի արմատի լայնական կտրվածքը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.


1. Սոխ, 2. ապակյա բանկա, 3. սպիրտ, 4. մանրադիտակ, 5. առարկա-
յակիր և ծածկող ապակիներ, 6. պինցետ, 7. ասեղ (պրեպարատներ պատրաս-
տելու):

Փ ո Ր Ճ № 29

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀՈՂՈՒՄ ԵՂԱԾ ԱՂԵՐԸ ՄՏՆՈՒՄ ԲՈՒՅՄԻ ՄԵՋ:
ՕՍՄՈՍԻ ԵՐԵՎՈՒՅՐԸ**

Բույսերի մեջ նյութի ձծկելու և տեղափոխվելու երևույթը
հասկանալու համար, անհրաժեշտ է ծանոթանալ օսմոսի երևույ-
թին: Դրա համար պետք է վերցնել ապակյա խողովակ, ծայրին
կապել կենդանական փուչիկ, այնպես որ ստացվի պարկ: Որպես-
զի փուչիկը ամուր միանա ապակյա խողովակի ծայրին, ապա-
կե խողովակի վրա կարելի է հազցնել սետինե խողովակի կտոր
կամ խցան և դրա վրա կապել փուչիկը:

Գործիքը պատրաստելուց հետո, խո-
ղովակի բաց ծայրից լցնել շաքարի լուծույթ
և փուչիկը իջեցնել մի բաժակ մաքուր ջրի
մեջ: Խողովակն ամրացնել շատախվի վրա:
Բաժակի ջուրը կսկսի ձծկել փուչիկի մեջ,
իսկ շաքարի լուծույթը դուրս կգա բաժակի
ջրի մեջ: Որքան խիտ է լուծույթը, այնքան
նա դանդաղ է դուրս գալիս: Այս փորձի
ժամանակ ջուրը ավելի արագ կմտնի փու-
չիկի մեջ, քան ընդհակառակը: Դրա համար
էլ հեղուկը կսկսի բարձրանալ խողովակով:
Երբ լուծույթների խտությունը հավասարվի,
խողովակի հեղուկը կսկսի իջնել և կկանգնի
բաժակի ջրի բարձրության հավասար: Կարելի է նկատել, թե
որքան ժամանակ տևեց բարձրացումը և իջեցումը: Այդ նպատակի
համար խողովակին կարելի է բաժանումներով թուղթ կպցնել
(սոսինձով): Փուչիկի փոխարեն կարելի է վերցնել կոլոդիումի
քսակ (Տես հետևյալ փորձը):



Նկ. 15. Օսմոսի փորձ-
կոլոդիումի քսակով:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Կենդանական փուչիկ, 2. ապակյա խողովակ, 3. բաժակ կամ բանկա,
4. շատախի, 5. շաքարի լուծույթ:

ՓՈՐՁԵՐ ԿՈՂՈՂԻՈՒՄԻ ՔՍԱԿՆԵՐՈՎ

(Ուսուցչի համար)

Կողողիումի քսակները պետք է պատրաստել հետևյալ կերպ: Փորձանոթի մեջ լցնել կողողիում և պտտեցնել այնպես, որ պատերը ներսից ծածկվեն կողողիումի բարակ շերտով: Այնուհետև փորձանոթի բերանը ցած պահելով դրսից շփել մի քանի բուսից հետո եթերը կգոլորշիանա և փորձանոթի պատերին կգոյանա բուսական թաղանթի նման մի շերտ: Պինցետով քիչ հեռացնել փորձանոթի բերանից այդ շերտը՝ արանքը ջուր լցնել և դուրս քաշել քսակը:

Կողողիումի քսակի մեջ լցնել օսլայի լուծույթ, բերանը պինդ կապել թելով. ապա քսակը դնել բաժակի մեջ, որտեղ կա յոդի թույլ լուծույթ: Մի քանի բուսից հետո կտեսնեք, որ քսակի մեջ եղած օսլայի սպիտակ լուծույթը կապտում է, իսկ բաժակի մեջ եղած յոդի լուծույթը գույնը չի փոխում: Դա ցույց է առնում, որ օսլայի լուծույթը քսակից դուրս չի եկել, իսկ յոդի լուծույթը թաղանթից ներս է մտել և կապտեցրել է օսլան: Այս փորձը կարելի է կատարել նաև այսպես, օսլայի փոխարեն քսակի մեջ լցնել տանինի լուծույթ, իսկ յոդի լուծույթի փոխարեն վերցնել երկաթի ըլորական աղի թույլ լուծույթ:

Արմատի մազիկները գործում են այս օրենքի հիման վրա: Հողի մեջ եղած աղերի լուծույթը բջջապատի միջով թափանցում է մազիկի մեջ, իսկ բջջի մեջ պարունակվող նյութերի մեծ մասը բջջապատից չի անցնում:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Կողողիում,
2. յոդի լուծույթ,
3. օսլայի լուծույթ,
4. փորձանոթներ,
5. պինցետ,
6. թել,
7. տանին,
8. երկաթի ըլորական աղը (FeCl₃)

ԱՐՄԱՏՆԵՐԻ ԼՈՒՄՈՂ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Վերցնել հղկած մարմարի թիթեղ, դնել ծաղկամանի հատակին, ծաղկամանը լցնել ալազով և մեջը ցանել լորու մի քանի սերմ: Մի քանի օրից հետո հանել մարմարի թիթեղը, որի վրա կտեսնեք խորզուրորդ գծեր: Արմատների արտադրած թթու հյութի ազդեցությամբ տակ մարմարը սկսել է լուծվել:

Ավելի ուշ հանելու դեպքում կտեսնեք, որ թիթեղի վրա պարզ երևում են արմատների հետքերը:

2. Մարմարի թիթեղ չունենալու դեպքում այս փորձը կարելի է ավելի հասարակ ձևով կատարել: Դրա համար պետք է կապույտ լակմուսի թուղթը թրջել ջրով և վրան դնել մի քանի ծլած սերմ: Շուտով արմատների շիման տեղերում թուղթը կըսկըծի կարմրել: Դա ցույց է առնում, որ արմատները թթու են արտադրում: Ինչպես հայտնի է կապույտ լակմուսը թթվից կարմրում է (ստուգել աղաթթվով կամ քաղցախաթթվով):

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մարմարի հղկած թիթեղ,
2. ծաղկաման,
3. սերմեր,
4. ալազ,
5. կապույտ լակմուսի թուղթ,
6. աղաթթու կամ քաղցախաթթու

ԾԻՎԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՋՐԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Իմանալու համար թե ինչ է ստանում բույսը հողից, պետք է պատրաստել ջրային կուլտուրաներ: Նման կուլտուրաներ ստանալը պահանջում է երկար ժամանակ և խնամքով աշխատանք: Որը պետք է կատարել հետևյալ ծրագրով.

1. ձևցնել սերմերը,
 2. պատրաստել անոթները,
 3. պատրաստել լուծույթները,
 4. պատրաստել ջրային կուլտուրաներ,
 5. խնամք և դիտողություն:
- Որպես օրեկա հարմար է վերցնել եզրատացորենի հատիկները և ձևցնել սովորական ձևով: Երբ արմատները կդառնան 2—3 սմ նրաց պետք է տեղափոխել հատուկ սարքի վրա. որը պատրաստվում է հետևյալ կերպ:

Լայն բանկայի բերանին կապել նախօրոք օսլայած թանդիֆ, կամ բերանին դնել սովորաթղթի մի շրջան, վրան քաշել մի քանի անցք, որոնց միջով արմատներն ազատ կարողանան անցնել: Այդ շրջանը մի քանի բուսի պահել հալված պարաֆինի մեջ մինչև որ սովորաթուղթը լավ ներծծվի: Պարաֆինած սովորաթուղթը ջրի հետ շփվելիս չի թրջվում:

Ծլած տեղավորել սերմերը սովորաթղթի անցքերի կամ թանդիֆի վրա այնպես, որ նրանց արմատներն անցնեն ջրի մեջ, փակ ցողուններն ուղղվեն դեպի վեր:


Աճհրածեօս իրեր և նյութեր.

1. Լայն բանկա, 2. ստվարաթուղթ կամ թանդիֆ, 3. խցանածակիչ, 4. պարաֆին, 5. կաթսա, 6. եղիպտացորենի սերմեր:

Փ ո Ր Ճ Ն 33

ԱՄԱՆՆԵՐԻ ՊՍՏՐԱՍՏՈՒՄԸ ԶՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընտրել մեկ լիտրանոց բանկաներ և նրանց համար համապատասխան խցաններ: Սցանածակիչով խցանի մեջտեղում բանալ մեկ անցք 2 սմ լայնությամբ և երկու ավելի փոքր անցք նրա կողքերին: Սցանը երկու կես անել այնպես, որ կտրվածքն անցնի կենտրոնի անցքի վրայով և վերջինս երկու մասի բաժանի: Սցանի կեսերը 30 րոպե պահել եռացրած պարաֆինի մեջ, որպեսզի խցանը պարաֆինով ներծծվի և ջրից չթրջվի, հակառակ դեպքում խցանի թաց մասերում բակտերիաներ և բորբոս կառաջանան, որոնք կարող են փլասել բույսին: Սցան չունենալու դեպքում կարելի է պատրաստել փայտի կափարիչ (Տես նկ. 16):



Նկ. 16. Փայտի կափարիչ (1) և խցան (2) ջրային կուլտուրաների համար:

Բանկան փաթաթել սև թղթով: Պետք է փաթաթել այնպես, որ բանկայի մեջ ոչ մի տեղից լույսի ճառագաթ չընկնի: Մթության մեջ արմատներն ավելի լավ են աճում: Բացի դրանից, տաք հեղուկի մեջ լույսի տակ առաջանում են

ջրիմուռներ, որոնք խանգարում են արմատների զարգացմանը: Սցանն այնպես սարքել, որ 3/4 մասով բանկայի վզի մեջ մտնի:

Սցանի փոքր անցքերից մեկում անհրաժեշտ է տեղավորել ապակյա խողովակ, որի ծայրը պետք է հասնի համարյա մինչև հատակը: Այդ խողովակով պետք է բանկայի լուծույթի մեջ ամեն օր օդ փչել (Տես նկ. 17): Մյուս փոքր անցքում ամրացնում են փայտե ձողիկ բույսը կապելու համար:

Աճհրածեօս իրեր և նյութեր.

1. Մեկ լիտրանոց բանկաներ, 2. պարաֆին, 3. խցաններ բանկաներին համապատասխան մեծությամբ, 4. խցանածակիչներ զանազան չափի, 5. դանակ կամ լանցետ (խցանը կիսելու համար), 6. ապակյա խողովակներ, 7. սև թուղթ 8. էկերոսինկա կամ սպիրտայրոց:

Փ ո Ր Ճ Ն 34

ՊՍՏՐԱՍՏԵԼ ՍՆՆԴԱՐԱՐ ԼՈՒԾՈՒՅԹ

(Ուսուցչի համար)

Ջրային կուլտուրաների համար դործածվող լուծույթները պետք է պատրաստել հետևյալ աղերից.

1. Ազոտաթթվական կալցիում, 2. ծծմբաթթվական մագնեզիում, 3. Ֆոսֆորաթթվական կալցիում 4. կալցիում քլորիդ 5. երկաթի լիմոնաթթվային աղ:

Նախ պետք է պատրաստել այդ աղերի 5% -ային լուծույթները և այդ ձևով պահել հետագա փորձերի համար: Մեկ լիտրանոց անոթի համար սննդարար լուծույթ պատրաստել հետևյալ ձևով:

Բանկայի մեջ լցնել 500 խ. սմ ջուր, վրան ավելացնել 40 խ. սմ $Ca(NO_3)_2$ 5% -անոց լուծույթ, մյուս երեք լուծույթներից 10-ական խ. սմ: Բանկայի մնացած մասը լցնել ջրով այնպես, որ ջուրը լուծույթների հետ միասին լինի մեկ լիտր: Յուրաքանչյուր բանկայի մեջ կաթեցնել 10 կաթիլ լիմոնաթթվային երկաթի լուծույթ:


Աճհրածեօս իրեր և նյութեր.

1. Հիշատակված լուծույթները (Պատրաստելը տես գրքի վերջում), 2. չափող գլան (մեղրուր) 100 խ. սմ, 3. ջրային կուլտուրաների համար նախապատրաստված մեկ լիտրանոց բանկաներ (Պատրաստելը տես փորձ Ն 31):

Փ ո Ր Ճ Ն 35

ԶՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՓՈՐՁԱՒՐՈՒՄԸ

Երբ ստվարաթղթի կամ թանդիֆի վրա դրած ծիլերը (Տես փորձ Ն 30) կհասնեն 10—12 սանտիմ. երկարության, նրանց պետք է տեղափոխել նախապատրաստած բանկաների մեջ (Տես փորձ Ն 33): Իրա համար բանկայի բերանից պետք է հանել խցանը: Բանկան պետք է լցնել սննդարար լուծույթով և ապակե ձողիկով խառնել:



Նկ. 17. Ջրային կուլտուրա:

Այնուհետև ծիլերը ղգուշությամբ դուրս քաշել թանդիֆի կամ ստվարաթղթի շրջանի անցքից, ցողունը փաթաթել բամբակով և տեղավորել խցանի երկու կեսերի մեջ մեծ անցքում: Սցանը ջուրով հետ միասին մտցնել բանկայի բերանին այնպես, որ արմատները խորասուզվեն լուծույթի մեջ: Ջրային կուլտուրան պատրաստ է:

Զրային կուլտուրաների փորձը հաջող կատարելու համար անհրաժեշտ է լավ խնամել:

1. Սկզբում պետք է խուսափել ուժեղ լույսից, իսկ հետո դնել ուժեղ լույսի տակ: Եթե փորձերը դրվում են ամռանը, նրանց պետք է բացօդյա պահել:

3. Ամեն օր ուետինն բալոնի օգնութեամբ պետք է օդ տալ, յարաքանչյուր բանկային 5-ական բույս:

3. Ժամանակ առ ժամանակ լուծույթը պետք է փորձել կապույտ լակմուսի թղթով: Վերջինս պետք է թույլ վարդագույն դառնա: Եթե նա ամպագույն է դառնում լուծույթին անպայման ավելացնել մի քանի կաթել ծծմբաթթվի թույլ լուծույթ և խառնել, մինչև լակմուսի թուղթը թույլ վարդագույն դառնա: (Պետք է լուծույթը միշտ թույլ թթվային լինի, որովհետև հիմքային միջավայրում երկաթի աղերը լավ չեն լուծվում):

Պետք է շատ զգուշ լինել թթու ավելացնելիս, որովհետև թթվի մեծ քանակության դեպքում կարող են սուսկեր առաջանալ և ֆուսել արմատներին:

ՈՐ ԱՂԵՐՆ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈՒՅՄԻ ՀԱՄԱՐ

(Ռուսուցյի համար)

Համազվելու համար. թե որ աղերն են անհրաժեշտ բույսի համար կատարել հետևյալ փորձը:

Վերցնել մի քանի բանկա՝ 1-ին բանկայում պատրաստել լրիվ սննդարար լուծույթ, 2-րդ բանկայի մեջ մտցնել բոլոր աղերը բացի $\text{Ca}(\text{NO}_3)_2$ -ից, 3-րդի մեջ բոլորը բացի MgSO_4 -ից, 4-րդն առանց KH_2PO_4 -ի, 5-րդը առանց KCl -ի, 6-րդը առանց Fe -ի: Բանկաները դնել պատուհանի առաջ և խնամել. հետևել ջրի գոլորշիանալուն: Եթե անոթների մեջ ջուրը կխառովի, լրացնել:

Մեկ ամսից հետո կատարել դիտողութուններ:

1-ին բանկայի բույսն աճում է նորմալ, որովհետև բոլոր աղերը տրված են: Մնացած բանկաների բույսերը չեն կարող լավ աճել այս կամ այն էլեմենտի պակասության պատճառով:

Տ Ե Ր Ե Վ

ՏԵՐԵՎՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հավաքել գանազան բույսերի տերևներ: Տերևները պետք է վերցնել ամբողջությամբ: Դրա համար պետք է տերևը պոկել ամբացման տեղից, սովորաբար տերևի ամբացման տեղից քիչ վեր անութում ցողունի վրա բողբոջ է լինում:

Նկարագրեք հավաքած տերևները հետևյալ ճրագրով:

1. Տերևը բարդ է թե՞ պարզ:

2. Եթե տերևը բարդ է, թաթաձև, դույզ փետրաձև, կենս փետրաձև է, թե՞ կրկնալի փետրաձև:

3. Տերևը կոթուն ունի թե՞ նստադիր է:

4. Խոչ ձևի է թիթեղ՝ ձվաձև, սրտաձև, եռանկյուն, կլոր և այլն:

5. Թիթեղը կանոնավոր է, թե՞ անկանոն (Օրինակ, թեղու տերևվը):

6. Զդերը ցանց են կազմում, թե՞ զուգահեռ դնում են հիմքից մինչև գագաթը (Չդերն ավելի լավ երևում են տերևի ստորին երեսից):

7. Ի՞նչով միաշաքիլ և երկշաքիլ բույսերի տերևաշղերի դասավորությունը: Օրինակ, թեղու, ընկուզենու, լոբու և մյուս երկշաքիլ բույսերի տերևները ցանց են կազմում, այդ բույսերի տերևները կոչվում են ցանցաձիգ: Իսկ հացարույսերի, սոխի, դամբախի և այլ միաշաքիլ բույսերի տերևավաջերը զուգահեռ դնում են հիմքից մինչև գագաթը: միաշաքիլ բույսերի տերևները զուգահեռաձիգ են:



Նկ. 18 Տերևների դասավորությունը ցողունի վրա—1. հերթական, 2. հակադիր:

8. Տերևի թիթեղը ամբողջական է, թե՞ կարաված. նկարագրեք կարավածքները, լոբու են, թե՞ ոչ:

9. Տերևի եզրը նարթ է, թե՞ ատամնավոր:

10. Տերևը ծածկված է խավով, թր երեսից՝ վերին, թև ստորին: Այս ձևով նկարագրեք հինգ տեսակ ծառի և տաս խոտաբույսի տերևներ: Ծառերից հարմար է վերցնել՝ թեղի, կաղնի, սկալգիան, ինձուրենի, բարդի: Խոտաբույսերից վերցնել՝ լոբի, կորըն-

դան, երեքնուկ, արևածաղիկ, եգիպտացորեն, ցորեն, սխտոր սոխ, ավելուկ, բողկ, եգան լեզու, նկարեք այդ տերևները:

Չորացրեք հավաքած տերևները (Տես վերջում՝ «Ինչպես հավաքել և չորացնել բույսերը հերբարիումի համար»), կայցրեք մաքուր տետրում և գրեցեք նրանց համառոտ նկարագիրը:

Աճեցման իրեր և նյութեր.

1. Բուսապանակ, 2. դանազան բույսերի տերևներ, 3. թուղթ, 4. բուսա-
բանական ցանց, չորացնելու համար, 5. տետր, մատիտ:

Փ ո Ր Ճ № 39

ՏԵՐԵՎՆԵՐԻ ԴԱՍՍՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՂՈՒՆԻ ՎՐԱ.

Վերցնենք դանազան բույսերի տերևած ճյուղեր և ուսում-
նասիրենք տերևների դասավորութունը ցողունի վրա: Կարելի է
վերցնել խնձորենու, լորենու, կաղնու, թխիլու, հացենու, սորենի,
լոբու ճյուղեր:

Մենք կտեսնենք, որ խնձորենու, լորենու, կաղնու, լոբու
տերևները նստած են ամեն մի հանգույցի վրա մեկական: Վերց-
նենք մի երկար թել, մի ծայրը կապենք ճյուղի վրա ամենացածր
տերևի կոթունի հիմքին և ապա թելը տանենք դեպի վեր հետե-
վյալ մոտակա տերևին այդպես շարունակենք մինչև ճյուղի ծայրը:
Թելը տերևից տերև պետք է տանել ամենահարձ ճանապարհով:
Մենք կտեսնենք, որ թելը պարուրաձև փաթաթվում է ճյուղի
շուրջը: Տերևների այսպիսի դասավորութունը կոչվում է **հե-
ք ա կ տ ն** կամ **պ ա ռ ու ռ ա ձ** և (սպիրալաձև):

Թխիլու և հացենու տերևներն յուրաքանչյուր հանգույցին
ամբացած են երկուական հատ և նստած են իրար դիմաց՝ հա-
կադիր: Դիտեք, թե ինչպես են դասավորված տերևները հետևյալ
հանգույցի վրա՝ նույն, թե այլ ուղղությամբ:

Տորենի յուրաքանչյուր հանգույցի վրա կա մի քանի տե-
րև: Այսպիսի դասավորութունը կոչվում է **օղակաձև**:

Վերցնենք թեղու կամ թխիլու հորիզոնական ուղղությամբ
ածած մեկական ճյուղ և տեսնենք, թե ինչպես են դասավորված
տերևները: Մենք կտեսնենք, որ թեղու տերևները հերթական դա-
սավորութուն ունեն, իսկ թխիլունը՝ հակադիր: Բայց եթե ճյուղը
դիտենք, կտեսնենք, որ մեծ ու փոքր տերևներն այնպես են **ան-
դավորված**, որ լավ օդադարձում են լույսի ճառագայթները և

իրար վրա սավեր չեն ձգում: Տերևների այսպիսի դասավորու-
թյունը կոչվում է **մոզայիկա**:

Հավաքեցեք դանազան բույսերի ցողուններ և որոշեցեք տե-
րևների դասավորութունը: Ընտրեցեք մի
քանիսը, չորացրեք և կաղմեցեք հավա-
քածու՝ տերևների դասավորության վերա-
բերյալ:

Դիտեցեք տերևների դասավորութունը
լույսի վերաբերմամբ և հավաքեցեք ու
պատրաստեք մոզայիկ ճյուղերի հավաքածու:

Դիտեցեք ինչպես են դասավորված և-
դան լեզու կոչված բույսի տերևները: Նրա
տերևները խմբված են կարճացած ցողունի
վրա: Այդպիսի դասավորութունը կոչվում
է **նօզիս**:



Նկ. 19. Թեղու տերևնե-
րի մոզայիկան

Աճեցման իրեր և նյութեր.

1. Զանազան բույսերի ճյուղեր, 2. չորացնելու համար թուղթ, 3. բու-
սաբանական ցանց, 4. դանակ կամ այգեգործական մկրատ:

Փ ո Ր Ճ № 40

ՈՐՈՇԵԼ ԶՐԻ ԵՎ ՉՈՐ ՆՅՈՒԹԻ ԲԱՆԱԿԸ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՄԵՁ

Վերցնել կաղամբի թարմ տերևներ, հեռացնել կենտրոնա-
կան ջիղը, մնացածը մկրատով մանրացնել և կշռել մոտավորա-
պես 25 գրամ: Կշռածը փռել թիթեղյա թասի մեջ և չո-
րացնել հատուկ պահարանում կամ վառարանի մոտ այնպես, որ
կտորները չայլվեն: Երբ տերևները լավ կչորանան, նորից կշռել
և քաշը գրել: Այդ գործողութունը կրկին մի քանի անգամ մինչև
որ կալուն քաշ ստացվի: Մնացած կշիռը ցույց է տալիս չոր
նյութի քանակութունը, իսկ պակասածը շուրն է: Հաշվել թե
քանի տոկոս են կազմում շուրը և չոր նյութը:


Տերևները սպիրտայրուցի վրա այրելով, կարելի է ստանալ
մսխիր և որոշել նրա տոկոսը (Տես փորձ № 10):

Աճեցման իրեր և նյութեր.

1. Կշեռք, 2. չորացնող պահարան, 3. սպիրտայրուց 4. կաղամբի տերևներ,
5. պինցետ, 6. մկրատ:

ՏԵՐԵՎԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Տերևի ներքին կազմութունը դիտելու համար, պեպք է պատրաստել տերևի լայնական կտրվածքը: Քանի որ դա կազմված է որոշ վարժութունների հետ, դրա համար էլ աշակերտանե-



Նկ. 20. Տերևի լայնական հատվածը, ա-վերին վերնամաշկ, 6-սյունաձև հյուսվածք, զ-սպունգաձև հյուսվածք, թ-անոթաթևիկային խուրձ, ց-ստորին վերնամաշկ, շ-հերձանցք:

րին հանձնարարվում է դիտել պատրաստի պրեպարատ: Պրեպարատի վրա երևում է հետևյալ պատկերը: Վերին մաշկը, որը կոչվում է նաև վերին էպիդերմիս, կազմված է թափանցիկ բջիջներից: Ստորին մաշկի կամ ստորին էպիդերմիսի բջիջների արանքում գտնվում են հերձանցքները:


Վերնամաշկի տակը գտնվում է սյունաձև հյուսվածքը, որի բջիջները սյունների նման շարված են իրար կողքի և ունեն շատ բլրոֆիլային հատիկներ: Սյունաձև հյուսվածքի առկա ընկած է սպունգաձև հյուսվածքը, որի բջիջները կտր են: Այդ բջիջների արանքում կան միջբջիջային տարածություններ:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

- 1. Մանրադիտակ, 2. տերևի պատրաստի պրեպարատ

ԴԻՏԵԼ ՀԵՐՁԱՆՑՔՆԵՐԸ

Տերևի հերձանցքները դիտելու համար պետք է վերցնել ձնձադիկի կամ որևէ այլ բույսի տերև և ստորին երեսից հանել մաշկը: Մաշկից մի փոքր թափանցիկ կտոր դնել առարկայակիր ապակու վրա, կաթեցնել ջուր, ծածկել ծածկապակով և դիտել մանրադիտակով: Դուք կտեսնեք, որ հերձանցքը կազմված է երկու կիսալուսնաձև փակող բջիջներից, որոնց միջև ձեղք կա: Փակող բջիջների մեջ կան բլրոֆիլային հատիկներ, իսկ էպիդերմիսի մյուս բջիջների մեջ բլրոֆիլ չկա:



Նկ. 21. Հերձանցքները տերևի ստորին վերնամաշկի վրա. ա-փակող բջիջներ, 6-հերձանցք:

Անհրաժեշտ իրեր նյութեր.

- 1. Մանրադիտակ, 2. առարկայակիր ապակի, 3. ծածկող ապակի, 4. լանցեռ, 5. պինցեռ, մկրատ, 6. ասեղ (պրեպարատներ պատրաստելու), 7. ապակյա ձողիկ

ՊԱՏՐԱՍՏԵԼ ՏԵՐԵՎԻ ԼԱՅՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՊՐԵՊԱՐԱՏ

(Ուսուցչի համար)

Որոշ վարժութունից հետո, տերևների լայնական հատվածից պրեպարատ կարելի է պատրաստել նաև ինքնուրույն կերպով:



Կարելի է վերցնել որևէ տերև, շատ հարմար է բամբակի տերևը: Պատրաստել մոտավորապես 2 սանտիմետրանոց երկարությամբ և լայնությամբ կտորներ: Այդ կտորներից հինգ հատ իրար վրա դնելով սեղմել խցանի կամ կտակետու ծուծի կտորների արանքում:

Խցանը պահել ձախ ձևով, իսկ աջ ձեռքով ամելիով պատրաստել շատ բարակ հատվածներ: Ստացված բարակ հատվածներից սովորական ձևով պրեպարատ պատրաստել և դիտել մանրադիտակով:


Անհրաձեռ իրեր և նյութեր.

1. Մանրադիտակ, 2. առարկայակիր ապակի, 3. ծածկող ապակի, 4. բամբակի կամ այլ բույսի տարե, 5. խցան կամ կտտակենու ծուծ, 6. ամեղի, 7. ապակյա ձողիկ, 8. ասեղ:

Փ ո Ր Ճ № 44

ԹԹՎԱՅՆԻ ԱՆՁԱՏՈՒՄԸ ԲՈՒՅՍԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Վերցնենք մի լայն և բարակ բանկա, լցնենք ջրով, մեջը դնենք ջրային բույսի մի քանի ճյուղ, ծայրերը ամելիով կտրենք և դնենք արևի տակ: Կարած տեղերից կսկսեն սղաղջակներ բարձրանալ:



Նկ. 23. Թթվածնի անջատումը սղաղջակներով:

Ընտրենք այնպիսի ձաղար, որը հեշտությամբ տեղավորվի բանկայի մեջ: Հետո վերցնենք մի փորձանոթ, լցնենք ջրով, բերանը մատով բռնած շուռ տանք և հալցնենք ձաղարի ծայրին այնպես, որ շուրջը չթափվի:

Ցողունի կտրված ծայրից անջատված սղաղջակները կհավաքվեն փորձանոթի մեջ:

Որոշ ժամանակից հետո, զգուշությամբ բարձրացնենք փորձանոթը, մատով բերանը բռնենք, շուռ տանք և վառած լուցկին ներս տանենք: Վերջինս իսկույն կբռնկի, դա ցույց է տալիս, որ փորձանոթի մեջ հավաքված գազը թթվածին է:

Անհրաձեռ իրեր և նյութեր.

1. Ջրային բույս, 2. լայն բանկա, 3. ձաղար, 4. լուցկի, 5. փորձանոթ:

Փ ո Ր Ճ № 45

ՕՍԼԱՅԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՏԵՐԵՎԻ ՄԵՋ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

(Ռևուզչի համար)

Պետք է վերցնել պելարգոնիում (երևմ կամ փիփերթ) բույսը, որը համարյա բոլոր տներում էլ պահում են: Ընտրել մեկ կամ երկու տերև: Ընտրած տերևների սրտը մատը թիկ

ստորին և թե վերին երեսից ծածկել խցանի բարակ շերտով և ամբարցնել ստորական գնդանդներով: Այնուհետև բույսը տեղավորել մթնում, որտեղ տերևների մեջ եղած օսլան կծախավի և տերևները կդրվեն օսլայից: Չձ ժամից հետո հանել ծաղիկամանը և դնել ուժեղ լույսի տակ (եթե արևի լույսը թույլ է կամ երկինքն ամպամած է, դնել էլեկտրական լույսի տակ), ծածկել բույսը ապակյա դանդով: Այնուհետև մի փոքր ամանի մեջ դրել կավիճ, նրա վրա լցնել քիչ քանակությամբ ուժեղ թթու (ծծմբաթթու կամ աղաթթու) և դնել դանդի տակ, թթուն կազդի կավիճի վրա և նրանից կանջատվի ամխաթթու գազ, որն անհրաժեշտ է օսլա կազմելու համար:

5—6 ժամ մնալուց հետո կտրել այն տերևները, որոնք թե ստորին և թե վերին երեսից ծածկված էին խցանով և 1—2 րոպեով դնել եռացրած ջրի մեջ՝ պրոտոպլազման սպանելու համար: Ապա ջրից հանել տերևը և տեղավորել 96 տոկոսային սպիրտի մեջ. անգունացնելու համար: Այս ձևով գունաթափման սլոցեսը դանդաղ է ընթանում: Արագացնելու համար կարելի է վերցնել մի թաս եռացրած ջրով, նրա մեջ դնել սպիրտով լի բաժակ, շուտով բաժակի սպիրտը կեռա, եռացող սպիրտում տերևը պետք է պահել մինչև լրիվ գունաթափումը: Այնուհետև պինդեռի օդնությամբ սպիրտից հանել տերևը, տեղափոխել ապակյա թասի մեջ և վրան սլոցից յոգի լուծույթ: Դուք կտեսնեք հետևյալ երևույթը. այն մասերը, որոնք ծածկված էին խցանով, յոգից բոլորովին գույնը չեն փոխում, իսկ եզրի մասը, որը բաց էր մնացել, յոգից կապտում է: Դա ապացուցում է, որ լույսի տակ տերևների բաց մասերում օսլա է կուտակվել, իսկ խցանով ծածկված մասում, որը լույսից զուրկ է եղել, օսլա չի գոյացել: Եթե զանգ չկա, կարելի է տերևն ուղղակի դնել արևի տակ, բայց այդ դեպքում օդի ամխաթթուն չենք կարող շատացնել:

Անհրաձեռ իրեր և նյութեր.

1. Բույս (պելարգոնիում. ընտանիքներում փիփերթ են կոչում), 2. սպիրտ, 3. ապակյա դանդ, 4. պինդեռ, 5. ապակյա թասեր, 6. սպիրտայրոց, 7. յոգ—յոգակալիումի լուծույթ (Պատրաստելը տես գրքի վերջում՝ հավելված № 3), 8. կավիճ, 9. աղաթթու կամ ծծմբաթթու:

Փ ո Ր Ճ № 46

ԱՌԱՆՑ ԼՈՒՅՍԻ ՕՍԼԱ ՉԻ ԱՌԱՋԱՆՈՒՄ

Համոզվելու համար, որ առանց լույսի օսլա չի առաջանում, նախորդ փորձը կարելի է կատարել ավելի պարզ ձևով: Վերցնենք

մթության մեջ սերմից աճած բույսի տերևներ: Դրանք ղեղին գույն են ունենում, զուրկ քլորոֆիլից և օսլա չեն կազմում: Այլ տերևները մեկ բույսի թողնել եռացրած ջրում, հետո զնել յոլի լուծույթի մեջ: Յուղի ներկայութեանից նրանք չեն կապում, որովհետև քլորոֆիլից զուրկ տերևներում օսլա չի կազմվում:

Փ ո Ր Ձ Ա 47

ԼՈՒՅՍԻ ՏԱԿ ՏԵՐԵՎԻ ՄԵՁ ԱՌԱՋԱՆՈՒՄ Է ՕՍԼԱ

Վերցնել բույսի կանաչ տերևը, որը աճել է լույս տեղում, օրինակ, պերարդոնիումի տերև, այդ տերևը նույն ձևով սլահել եռացրած ջրում, պրոտոպլազման սպանելու համար, հետո տեղափոխել եռացրդ սպիրտի մեջ զուսաթափելու համար: Լքիվ զուսաթափելուց հետո տերևը հանել, լվանալ ջրով և սպա ազդել յոլի լուծույթով: Այստեղ կտեսնենք նախորդ փորձի հակառակը, այսինքն տերևն ամբողջութամբ կներկվի կապույտ, որովհետև լույսի տակ տերևների մեջ օսլա է կազմվել: Այս և նախորդ աշխատանքի համար պահանջվում է նույնը, ինչ որ փորձ № 45-ում, բացի ապակե զանգից:

Փ ո Ր Ձ Ա 48

ՔԼՈՐՈՖԻԼԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ ԿԱՆԱՋ ՏԵՐԵՎՆԵՐԻՑ

Որևէ բույսից կտրել մի քանի կանաչ տերև և հավանորի մեջ լավ մանրացնել: Վրան ավելացնել սպիրտ ալոհոլ, որ ծածկի տերևներից ստացած զանգվածը և թողնել 2 րոպե: Այդ ժամանակամիջոցում սպիրտը բջիջներից զուրկ է քաշում քլորոֆիլը: Ստացած լուծույթը ֆիլտրել: Լուծույթը զիտել անցնող լույսի դիմաց, նա կանաչ գույն ունի: Լուծույթը զիտել անդրադարձող լույսի տակ, այսինքն այն կողմից, որտեղից ընկնում է լույսը: Այս դեպքում լուծույթը մուգ կարմիր է երևում:

Աճիւրածեօս իրեք և ցլաթեք.

- 1. Հավանգ, 2. ձագար, 3. ֆիլտրի թուղթ, 4. փորձանոթ, 5. սպիրտ 96%, 6. շտապիվ, 7. կանաչ տերևներ:

Փ ո Ր Ձ Ա 49

ՔԼՈՐՈՖԻԼԻ ՏԱՐՐԱԼՈՒՄՈՒՄԸ

Նախորդ ձևով ստացված քլորոֆիլի լուծույթից ԵՄՆԵԼ փորձանոթի մեջ 1/4-ի չափ: Վրան ավելացնել հավասար ծավալով բենզին, մատը զնել փորձանոթի բերանին և լավ թափահարել:

Փորձանոթը զնել շտապիվի վրա և թողնել: որ լուծույթը հանգարովի: Տեղի է ունենում հեռեկալը՝ վերել մասում կանաչում է բենզինը, որպես ավելի թեթև, իսկ առկա սպիրտը, բենզինը ներկվում է կանաչ գույնի, իսկ սպիրտը ղեղին գույն է ստանում: Դա ցույց է տալիս, որ քլորոֆիլի մեջ կա նաև ղեղին պիգմենտ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Եթե շերտերի բաժանումը արագ չի կատարվում, պետք է ավելացնել մի քանի կաթիլ ջուր և թափահարել, այս դեպքում շերտերն արագ կերպով են բաժանվում:

Աճիւրածեօս իրեք և ցլաթեք.

- 1. Փորձանոթներ, 2. քլորոֆիլի լուծույթ (Պատրաստելու տես նախորդ փորձում), 3. բենզին:

Փ ո Ր Ձ Ա 50

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿՂՁՄՎԵԼՈՒ ՀՍՄԱՐ ԼՈՒՅՍ Է ՀԱՐԿԱԼՈՐ

Համոզվելու համար, որ օրգանական նյութերի առաջանալու համար լույս է հարկավոր, կարելի է վեցնել երկու բաժակ, բերանները կապել թանդիֆոլ և ԵՄՆԵԼ ջրով: Բաժակները ծածկել անպակյա բանիակներով կամ զանգերով:

Վերցնել երկու կշռամաս երկուստեղանկ գրամ սիսեռի սերմ, 1-ին բաժակի բերանի թանդիֆի վրա շարել սերմերն այնպես, որ շփվեն ջրի հետ. ծածկել զանգով և զնել լույսի տակ: 2-րդ բաժակի վրա շարել մյուս երկու գրամ սերմերը, ծածկել զանգով և զնել մութ տեղ:

15 օրից հետո կատարել զիտողութուն, այն սերմերը, որոնք ծլում են մութ տեղում, տալիս են ղեղին և ձգված բույսեր, իսկ լույսի տակ տալիս են նորմալ կանաչ բույսեր:

Կարելի է բույսը հանել բաժակից այնպես, որ արմատները չկտրվեն և կշռել ամբողջ զանգվածը թե լույսի տակ եղածը և թե մթնում եղածը: Ստացված քաշը համեմատել իրար հետ:

Լույսի տակ զարգացած բույսի քաշը համեմատած սերմի քաշի հետ ավելացրել է մի քանի անգամ, որովհետև լույսի տակ անխաթմու գաղից օրգանական նյութ է պատրաստել:

Քանի որ մթնում եղած բույսերը օրգանական նյութ չեն

պատրաստել և անընդհատ շնչառութեան հետևանքով շատ նյութեր են ծախսվել, դրա համար էլ ավելի թեթև են, քան բույսի անկ աճած բույսերը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Երկու բաժակ, 2. Թանդիֆ (մառու), 3. սիսեռի սերմեր, 4. զանց, 5. սովորական կշեռք:

Փ ո Ր Ձ Ա Ն 51

ՋՐԻ ԳՈՂՈՐՇԻԱՑՈՒՄԸ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՂ

Փորձանոթի շ/3 մասը լցնել ջրով և ապա անցքավոր խցանի օգնութեամբ ուռնու մի փոքր ճյուղ կամ որևէ տերև դնել մեջը այնպես, որ ստորին ծայրը խորասուզվի ջրի մեջ:

Ջրի մակերեսին լցնել քիչ քանակութեամբ բուսական յուղ, որպեսզի ջուրը մակերեսից չզրկուի: Փորձանոթի վրա թանաքով նշան անել ջրի բարձրությունը:

Որոշ ժամանակից հետո մենք կնկատենք, որ ջրի մակերեսն իջնում է: Ամեն օր թանաքով նշանակել ջրի բարձրությունը: Ես շարունակ կպահասի, որովհետև բույսի ճյուղը կամ տերևն անընդհատ ջուր է գոլորշիացնում:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

2. Փորձանոթ խցանով, 2. սովորական բուսական յուղ (կտավառի կամ արևվաճաղի), 3. ճյուղ կամ տերև:

Փ ո Ր Ձ Ա Ն 52

ՋՐԻ ԳՈՂՈՐՇԻԱՑՈՒՄԸ

(Ուսուցչի համար)

Փորձի ենթակա ճյուղը ծռել, կտրվելիք մասը դնել ջրի մեջ և դանակով կտրել: Կտրած ճյուղն ամրացնել խցանի մեջ և սարքել Մ-աձև խողովակի մի ծայրին այնպես, որ ճյուղի ծայրն ընկղմվի ջրի մեջ: Այսինքն բոլոր անցքերը լցնել պարա-

ֆինով: Մ-աձև խողովակի մյուս ծայրին հազցնել մեկ անցքանի սեղանի խցան և մեջը մտցնել ծնկաձև բարակ խողովակ, որի վրա ամրացած է բաժանումներ ունեցող թաղթ: Մ-աձև խողովակը պետք է լցված լինի ջրով և պետք է ամեն կերպ աշխատել, որ նրա մեջ օդ չմտնի: Սարքն ամրացնել շտապվի վրա: Այսանոթը սեղմելու ժամանակ Մ-աձև խողովակի ջուրը բարձրանում է ծնկաձև խողովակի մեջ և կանգնում է որոշ տեղ. պետք է նշանակել կանգնած տեղը—դիցուք 25-րդ բաժանման դիմաց: Մի քանի բազե հետո կտեսնեք, որ ծնկաձև խողովակի ջուրը հեռ է գնում դեպի Մ-աձև խողովակը: Դա ցույց է ստիպ, որ բույսը ջուր է ծծում և գոլորշիացնում:

Մ-աձև խողովակի փոխարեն կարելի է վերցնել լայն փորձանոթ մեկ հատ երկանցքանի խցանով կամ մի լայն խողովակ երկու հատ միանցքանի խցանով (Տես. նկ. 25) այդպիսի գործիքը կոչվում է պոսսուիս:

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.—Ծնկաձև խողովակ պատրաստելու համար վերցնել ազակյա սովորական խողովակ, պահել պրիմուսի ուժեղ բոցի վրա պատեցնելով, շիկանալու պահին զանդաղ ծռել և ցանկացած ձևը տալ: Նախքան ծռելը պետք է հեռացնել բոցի վրայից: Ծնկաձև խողովակի երկար մասի վրա կարելի է ամրացնել թուղթ՝ ստիճանով կամ ուղղակի թղթի վրա երկու ծայրերում ձեղք բանալով և խողովակը մտցնելով այդ անցքերը այնպես, որ բաժանումները պարզ երևան և ցույց տան ջրի շարժումը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.


1. Որևէ բույս, 2. Մ-աձև խողովակ (կամ ուղղակի փորձանոթ, երկու անցքանի խցանով), 3. Թղթի քանան, 4. պարաֆին, 5. սեղանի խցան, 6. դանակ, 7. սղիքայրոց, 8. հենազակյա թաղ (պարաֆինը հալելու համար):

Փ ո Ր Ձ Ա Ն 53

ՋՐԻ ԳՈՂՈՐՇԻԱՑՄԱՆ ԴԻՏՈՒՄԸ

Վերցնել մի լայն խողովակ և նրա համար ընտրել երկու հատ խցան անցքով: Ներքին խցանի անցքում մտցնել երկձև կաձև խողովակ: (Պատրաստելը տես նախորդ աշխատանքի մա-

նութության մեջ: Վերևի խցանի անցքում ամրացնել բույսի փոքր ճյուղ (ուռենու, ձիթանի) կամ երկար և ամուր կոթուն ունեցող տերև: Խողովակը լցնել ջրով: այդ ժամանակ երկձնկաձև խողովակը նույնպես կցվի ջրով: Զուրը լցնելուց հետո խցանը



Նկ. 26. Պարզ պոսոմեար:

բույսի հետ միասին անցկացնել խողովակի վերևի ծայրին այնպես, որ ճյուղը կամ տերևի կոթունը մտնի խողովակի ջրի մեջ: Հետևել, որ օդ չմտնի գործիքի մեջ:

Գործիքն ամրացնել շաատիվին և հետևել ջրի շարժմանը խողովակի մեջ:

Եթե փորձի համար վերցրված են թարմ տերևներ, ջրի սյան ծայրը շատ շուտ հետ կգնա: Իա ցույց կտա, որ տերևները գոլորշիացնում են, որի հետևանքով ջուրը բանկայի մեջ միշտ պահասում է: Հետևել ջրի սյանը քանոնի կամ թղթի բաժանումների օգնությամբ:

Անհրաժեշտ իրեր և ցյաքեր.

1. Մեկ հատ լայն ապակյա խողովակ,
2. երկձնկաձև խողովակ,
3. երկու խցան,
4. խցանածակիչ,
5. ճյուղ կամ տերև:

ԻՆՏԵՆ ԶՐԻ ԳՈՂՈՐՇԻԱՅՏՈՒԹՅԱՆ ՏԵՐԵՎԻՑ ԿՈՒՅՈՒՄԻ ԽՂԹԻ ՄԻՋՈՑՈՎ

Կարելի է արալաթի թղթից երկու կտոր տերևին հավասար և դնել էքսիկատորի մեջ, որ չսրանա: Կտրալաթի չոր թուղթը բաց կապույտ գույն ունի: Արագ կերպով էքսիկատորից հանել թուղթը, դնել ապակյա թիթեզի վրա, թղթի վրա դնել հեռազտավող տերևը, վերջինս ծածկել երկբորդ կտոր թղթով, որը նույնպես գրված է ապակյա թիթեզի վրա: Երկու ապակիները կապել իրար ուստի նե թերով կամ ամրացնել սեղմիչով: Կոթունը պետք է ապակիներից դուրս մնա: Կարելի է քործածել լվացքի սեղմիչներ:

Մի քանի րոպեից նկատվում է, որ տակի երեսին գրված կտրալաթի թուղթը դառնում է վարդագույն, իսկ վերևի երեսին դեռ մնում է կապույտ: Իա ցույց է տալիս, որ տակի մակերեսում գոլորշիացումն ավելի ուժեղ է կատարվում: Այդտեղ հերձանցքներն ավելի շատ են, քան վերին եպիդերմիսի մեջ: Հերձանքների միջոցով է ջուրը գոլորշու ձևով դուրս դալիս տերևից:

Անհրաժեշտ իրեր և ցյաքեր.

1. Կտրալաթի թուղթ (Գաթրաստիլը տես գրքի վերջում, հավերժած № 3),
2. ապակյա թիթեզներ,
3. սեղմիչներ,
4. թարմ կտրած տերև:

ԳՈՂՈՐՇԻԱՅՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՆՍՆԱԿԱՆ ԳՆՏՄԱՆՆԵՐԻՑ

Վերցնել չորս հավասար տերև, դնել ջրով լի փորձանոթի ներքի մեջ: ջրի երեսները ծածկել բուսական յուղով, չորս փորձանոթներն էլ կշռել և դնել դանադան պայմաններում:

1. խոնավ կամ երայում,
2. ցրտում,
3. տաք և մութ տեղում,
4. սառ և լույս տեղում:

Երկու օրից նետո նորից կշռել փորձանոթները: Դուք կըստանաք նեանյալ պատկերը՝ 1-ին փորձանոթը իր կշռից չի կորցնում, 2-րդ փորձանոթի կշիռը բիշ պակասում է, 3-րդը ավելի շատ է կորցնում քան 2-րդը, 4-րդն ամենից շատ է կորցնում իր կշռից:

Այս փորձը ցույց է տալիս, որ 1) խոնավ օդում (կամերա) գոլորշիացում տեղի է ունենում, 2) ցուրտ սեղում ջուրն ավելի քիչ է գոլորշիանում քան սաք սեղում, 3) լույսն ուժեղացնում է գոլորշիացումը:

Աճեցածեց իրեր և նյութեր.

1. Չորս փորձանոթ կամ դրան, 2. չորս ադակյա դանդ, 3. բուսական, յուղ

Փորձ № 56

ԲՈՒՅՍԵՐԻ ԹԱՌԱՄԵԼԸ

Վերցնենք որևէ բույս, օրինակ պրիմուլա և 5 օր ջրեկնք: Երբ տերևները կսկսեն թառամել, կարենք տերևների կեսը: Մենք կտեսնենք, որ մնացած տերևներն այլևս չեն թառամում: Դա ցույց է տալիս, որ հողի մեջ եղած ջրի քանակությունը չէր բավարարում բոլոր տերևներին, այդ պատճառով էլ բոլորը թառամում էին:

Աճեցածեց իրեր և նյութեր.

1. Բույս ծաղկամանով, 2. դանակ կամ մկրատ:

Փորձ № 57

ՏԵՐԵՎՆԵՐԻ ԹԱՌԱՄԵԼԸ ՀՈՂՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԶՐԻ ՍԱՌՉԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Երբ ջուրը հողում սառչում է, նրա մուտքը բույսի մեջ դադարում է, և բույսը սկսում է թառամել այնպես, ինչպես չորության դեպքում:

Վերցնել որևէ բույս ծաղկամանով, դնել իրենից մեծ ամանի մեջ և սառեցնել հողի ջուրը: Դրա համար պետք է պատրաստել սառեցնող խառնուրդ և լցնել մեծ ամանի մեջ, որտեղ դրված է ծաղկամանը: Փոքր ծաղկամանն ամբողջապես պետք է մտցնել խառնուրդի մեջ: Որոշ ժամանակից հետո, երբ հողում եղած ջուրը կսառչի, նա այլևս չի կարողանա բարձրանալ դեպի տերևները, իսկ տերևներն անբնական գոլորշիացնում են: Նոր ջուր չստանալով՝ որոշ ժամանակից հետո նրանք թառամում են: Հանելով ծաղկամանը սառեցնող խառնուրդից կտեսնենք, որ մի քիչ հետո տերևները կվերականգնեն նախկին վիճակը: Դա ցույց է տալիս, որ հողի ջուրը հալվելով մանում է արմատների մեջ և բարձրանում է դեպի տերևները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սառեցնող խառնուրդը պատրաստվում է հետևյալ կերպ: Չյանը կամ մանրացրած սառույցին խառնում են մանր աղ: Մի քանի ըզպից հետո ջերմաստիճանն ընկնում է —17° —18°-ի:

Աճեցածեց իրեր և նյութեր.

1. Ծաղկաման բույսով, 2. մեծ ծաղկաման կամ թաս դատարկ, 3. սառեցնող խառնուրդ (Տես ծանոթությունը):

Փորձ № 58

ԳՈՂՈՐՇԻՍՑՈՒՄԸ ՏԵՐԵՎԱԿԻՐ ԵՎ ՏԵՐԵՎԱԶՈՒՐԿ ՃՅՈՒՂԵՐԻՑ

Պետք է վերցնել երկու հավասար ճյուղ (օր. ուռնու) և նրանցից մեկի բոլոր տերևները հեռացնել: Այդ երկու ճյուղերը դնել առանձին բաժակների մեջ և ջրի մակերեսը ծածկել յուղով: Բաժակները դնել կշիռքի երկու նժարների վրա, ավազով հավասարակշռել և այդպես թողնել մինչև հաջորդ առավոտ: Հետևյալ օրը կտեսնենք, որ այն բաժակը, որի ճյուղը տերևներով է, շատ է թեթևացել մյուսից:

Աճեցածեց իրեր և նյութեր.

1. Երկու բաժակ, 2. ուռնու ճյուղեր, 3. կշիռք, 4. ավազ:

Փորձ № 59

ՄԱՇԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՂՈՐՇԻՍՑՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ

Վերցնել երկու խնձոր հավասար մեծությամբ և կշռել (կամ կարտոֆելի պալար). նրանցից մեկի կեղևը դանակով հեռացնել իսկ մյուսը թողնել կեղևով: Երկուսն էլ հավասարակշռել և թողնել կշիռքի վրա 24 ժամ: Այնուհետև նորից կշռել: Դուք կտեսնեք, որ մաշկը հեռացրած խնձորը (կամ կարտոֆելի պալարը) նեղ, որ մաշկը հեռացրած խնձորը (կամ կարտոֆելի պալարը) մաշկը պաշտպանում է ուժեղ գոլորշիացումից:

Աճեցածեց իրեր և նյութեր.

1. Երկու հատ խնձոր կամ կարտոֆելի պալար, 2. կշիռք, 3. ավազ, 4. դանակ:


Ք Ր Ք Գ Լ Ո Ւ Ն

Յ Ո Ղ Ո Ւ Ն

Փ ո Ր Ճ Ն Ե Թ

ՅՈՂՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բնափայտի կազմույթները դիտելու համար պետք է վերցնել լորենու ցողունի երկայնական հատվածը: Կարելի է վերցնել:



Նկ. 20. Բնափայտի կազմույթները:

Նեղ պատրաստի պրեպարատ Անհրաժեշտ է օւշազրույթուն դարձնել ջրատար անոթների վրա, որոնք դանազան ձեռի են: Նկարելի դիտածը:

Պարզ երևում են ջրատար անոթները դանազան հաստացումներով:

- 1) սպիրտալաձև,
- 2) օղակաձև,
- 3) կետավոր:

Փ ո Ր Ճ Ն Ե 1

ՅՈՂՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ՄՅԱՆԵՐԻ ԲԱՅՔԱՅԵՆԸ

(Ուսուցչի համար)

Վերջնել որևէ երկշաքիլ բույսի ցողուն (օր. բամբակի կամ լորենու), բաժանել մանր մասերի և եռացնել 10% խրոմաթթվի լուծույթի մեջ: Բալակիան երկար եփելուց հետո, կտորներից մեկը:

վանար, դնել առարկայակիր ապակու վրա, ասեղով բաժանել շատ մանր մասերի՝ թելերի, ծածկել ծածկապակով և դիտել մանրադիտակով: Մենք կտեսնենք մի շարք երկար բարակ խողովակներ, սպիրտալաձև, կետավոր և այլն, ինչպես կան պատրաստի պրեպարատի վրա: Ցողունը քայքայելու համար կարելի է եռացնել նաև կծու կալիի կամ նատրիի լուծույթի մեջ:

Աճեցման իբր և նյութեր.

- 1. Բամբակի կամ լորենու ցողուն, 2. լանցեա, 3. քրոմաթթվի 10%-ային լուծույթ կամ կծու կալիի խիտ լուծույթ, 3. կորբա, 5. սպիրտալորոց, 6. ասեղ:

Փ ո Ր Ճ Ն Ե 2

ԵՐԿՇԱՔԻԼ ԲՈՒՅՍՆԵՐԻ ՅՈՂՈՒՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ


Կիսել միավյա լորենու ցողունի լայնակաճ հատվածը

Լորենու լայնական հատվածի կազմույթները պետք է դիտել պատրաստի պրեպարատի վրա: Ուշադրույթուն պետք է դարձնել անոթաթելային խրճեթի վրա, որոնք դասավորված են օղակաձև: Կենտրոնական մասում տեղավորված է ծուծը: Կամբիումից դուրս գտնվում է լուբը, որի մեջ տեղավորված են մադանոթները, իսկ դեպի ներս ընկած են ջրատար անոթները:

Փ ո Ր Ճ Ն Ե 3

ԼՈՐԵՆՈՒ ԵՌԱՄՅԱ ՅՈՂՈՒՆԻ ԼԱՅՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ

Պատրաստի պրեպարատի վրա դիտել եռամյա լորենու ցողունի լայնական կտրվածքը: Այս պրեպարատի վրա բոլոր շերտերը շատ պարզ երևում են: Կեղևային մասում կարելի է տեսնել խցանի շերտը, որը շրջապատում է ցողունի արտաքին մասը: Իրա տակ ընկած է լուբը: Միջին մասում գտնվում է կամբիումի նուրբ բջիջների շերտը, որի գործունեութան հետևանքով ցողունն աճում է ըստ լայնութան: Կամբիումից դեպի ներս բնափայտն է, որի մեջ երևում են ջրատար անոթները և նշմարվում են տարեկան օղակները, բնափայտի միջով անցնում են ծուծային ճառագայթները: Կենտրոնում ծուծն է, որի բջիջները մեծ են:



Նկ. 27. Լորենու եռամյա ցողունի լայնական հատվածը:

Փ ո Ր Ճ № 64

ՊԱՏՐԱՍՏԵԼ ԵՌԱՄՅԱ ՅՈՂՈՒՆԻ ՊՐԵՊԱՐԱՏ

(Ուսուցչի համար)

Կտրել լորենու կամ ուռենու բարակ ճյուղեր և բաժանել մանր կտորների: Կտորներից մեկը պահել ձախ ձեռքում և անելիով կտրել որքան կարելի է բարակ հատվածներ: Այդ կտրվածքներից կտրելի է պատրաստել պրեպարատ: Վերցնել 2—3 բարակ հատված, ասեղի օգնությամբ տեղափոխել առարկայակիր ապակու վրա, որտեղ նախապես շուր կա կաթեղը: Ծածկել ծածկապակով և դիտել մանրադիտակի օգնությամբ: Ձեր պատրաստած պրեպարատի վրա կտեսնեք այն բոլոր շերտերը, որոնք տեսաք պատրաստի պրեպարատի վրա:

ԱՆՏՐԱՏԵՍ ԻՐԵՐ և ՅՈՒՐԵՐ.

1. Լորենու ցողուն (կտրելի է վերցնել և ուռենին),
2. անելի,
3. ասեղ,
4. պինցետ,
5. մանրադիտակ,
6. առարկայակիր ապակիներ,
7. ծածկող ապակիներ,
8. ապակյա ձողիկ:

Փ ո Ր Ճ № 65

ՄԻԱՇԱՔԻԼ ԲՈՒՅՍԻ ՅՈՂՈՒՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Դիտել եզրպտացորենի ցողունի լայնական հատվածը պատրաստի պրեպարատի վրա: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել անոթաթելային խրճեղի վրա, որոնք ցրված են, իսկ երկշաքիլ բույսերի ցողունի մեջ օղակաձև են դասավորված: Միաշաքիլ բույսերը կամ բիումի շերտ չունեն, իսկ երկշաքիլավորներն ունեն, ինչպես տեսանք լորենու 3 տարեկան ցողունի վրա:

Փ ո Ր Ճ № 66

ՊԱՏՐԱՍՏԵԼ ԵԳԻՊՏԱՅՈՐԵՆԻ ՅՈՂՈՒՆԻ ԼԱՅՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ՝ ՊՐԵՊԱՐԱՏ

(Ուսուցչի համար)

Մեկ ամիս առաջ պետք է ծաղկամանում ցանել եզրպտացորեն: Երբ բույսը բավականին կմեծանա, ցողունը մասերի վերածել և անելիով կտրել լայնական հատվածներ, որքան կարելի է բարակ:

Հատվածներից սովորականի նման պատրաստել պրեպարատներ և դիտել մանրադիտակով: Լավ երևում են անոթային խրճեղը, որոնք օղակաձև դասավորված չեն, այլ ցրված են: Դեպի կենտրոն խրճեղը թվով քիչ են, բայց մեծ են, իսկ պերիֆերայի մոտ թվով ավելի շատ են, և ավելի մանր:

ԱՆՏՐԱՏԵՍ ԻՐԵՐ և ՅՈՒՐԵՐ.


1. եզրպտացորենի ցողուն,
2. անելի,
3. պինցետ,
4. ասեղ կոթով,
5. առարկայակիր ապակիներ,
6. մանրադիտակ,
7. ծածկող ապակիներ,
8. ծաղկաման (ցանելու համար),
9. եզրպտացորենի հատիկներ:

Փ ո Ր Ճ № 67

ՅՈՂՈՒՆԻ ԱՃՄԱՆ ԿՈՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Պատրաստել պրեպարատ հետևյալ ձևով: Էլոդեյա ջրային բույսի երիտասարդ ճյուղը դնել առարկայակիր ապակու վրա, կտրած ծայրը ասեղով պահել, իսկ մյուս ասեղով պոկել գազաթի տերևները: Ծայրից կտրել 1—2 սմ երկարությամբ, դնել սպիրտի

մեջ, գունաթափելու համար: 10 ընկերից հետո տեղափոխել առարկայակիր ապակու վրա, ծածկել ծածկապակով և ղիտել մանրա-



Նկ. 28. Յողունի աճման կոնը:

ղիտակի օգնութեամբ: Դուր կտեսնեք աճման կոնը: Ուշադրութեամբ դարձնել գագաթի աճման կոնի վրա և տեսնել կողմնային ելուստները, որոնք ապագա տերևների սաղմերն են հանդիսանում:

Աճեցածեց իրեք և նյութեր.


1. Ջրային բույս (էլոդեյա), 2. սպիրտ 96 %-անոց, 3. ասեղներ (պրեպարատների համար), 4. լանցետ, 5. դանակ, 6. մանրադիտակ կամ լուպա, 7. առարկայակիր ապակի, 8. ծածկող ապակի:

Փ ո Ր Ճ № 68

ՎԵՐԵՆԵՆԻ ԵՎ ՎԱՐԻՉԱԿ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Վերցնել երկարութեամբ և հաստութեամբ իրար հավասար ճյուղեր: Հարմար են ուռենու ճյուղերը: Մի ճյուղի վրա անել բարակ օղակաձև կտրվածք, հեռացնել մաշկը, չլնասելով տակի շերտը: Զուր ճյուղի վրա այնպիսի կտրվածք անել, ինչպես 1-ինի վրա: Բայց ավելի խոր՝ մինչև բնափայտը և հանել մաշկը լուրի

հետ միասին: 3-րդը թողնել նույնութեամբ, որպես ստուգիչ (կոնտրոլ): Երեք ճյուղերն էլ դնել ջրով լի ամանի մեջ: 7 օրից հետո կատարել դիտողութեան: Այն ճյուղի վրա, որտեղ միայն մաշկն էր հանված, արմատներն առաջանում են օղակային կտրվածքից ցած: Զուր ճյուղի վրա, որտեղից հեռացված էր լուրը, արմատներն առաջանում են օղակային կտրվածքից վերև: Այդ փորձից երևում է հետևյալը. ցածից դեպի վեր զնացող հոսանքը երեք ճյուղերումն էլ արմատներից բարձրանում է դեպի տերևները, իսկ այն հոսանքը, որ վերևից ցած է իջնում և իր հետ օրգանական նյութեր է տա-



Նկ. 29. Ուռենու ճյուղի օղակային կտրվածքը (a), երևում են նոր առաջացած արմատները (b):

նում, լուրի բացակայության պատճառով չի անցնում Զուր ճյուղի միջով: Դրա համար Զուր ճյուղի վրա կտրվածքից ցած արմատներ չեն գոյանում, հետևապես վերելակ հոսանքը բարձրացնելով լուրը և նրա մեջ լուծված հանքային նյութերը, շարժվում է բնափայտով: Լուրի կտրելը չի ազդում ջրի բարձրացման վրա: Վարիջակ հոսանքը, որն օրգանական նյութեր է տանում, անցնում է լուրով և չի կարող բնափայտով իջնել: Մաշկի կտրելը չի ազդում ոչ առաջին և ոչ էլ Զուր ճյուղի վրա:

նում, լուրի բացակայության պատճառով չի անցնում Զուր ճյուղի միջով: Դրա համար Զուր ճյուղի վրա կտրվածքից ցած արմատներ չեն գոյանում, հետևապես վերելակ հոսանքը բարձրացնելով լուրը և նրա մեջ լուծված հանքային նյութերը, շարժվում է բնափայտով: Լուրի կտրելը չի ազդում ջրի բարձրացման վրա: Վարիջակ հոսանքը, որն օրգանական նյութեր է տանում, անցնում է լուրով և չի կարող բնափայտով իջնել: Մաշկի կտրելը չի ազդում ոչ առաջին և ոչ էլ Զուր ճյուղի վրա:

Աճեցածեց իրեք և նյութեր.

1. Ուռենու ճյուղ, 2. դանակ, 3. երեք բանիկ:

Փ ո Ր Ճ № 69

ՑՈՒՅՑ ՏԱԼ ՋՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԲՈՒՅՄԻ ՄԵՋ

(Ուսուցիչի համար)

Վերցնել ջրով լի բանիկ, ջուրը ներկել էոզինով կամ կարմիր թանաքով: Այնուհետև վերցնել երկու բույս միաշաքիլ և երկշաքիլ (լորու կամ սիսեոի ճյուղեր մթութեան մեջ աճեցրած), ջրի տակ ճյուղերը կտրել և տակի ծայրով դնել ներկված հե-


դուրի մեջ: Ճյուղերն անպայման ջրի տակ պետք է կտրել, որովհետև օդը մտնելով կտրված անցքերի մեջ՝ կարող է փակել անոթները: 1—2 ժամ հետո բույսը ներկվում է վարդագույն: Ամենից լավ ներկվում են ցողունները և տերևները ջրերը: Իմանալու համար՝ թե ցողունի որ շերտերն են ներկվել, կարելի է պատրաստել պրեպարատներ (լայնական հատվածներ): Միաշաքիլ բույսի լայնական հատվածի վրա կտեսնես կարմիր կետեր բոլոր մասերում: Երկշաքիլ կտրվածքի կարմիր կետերը մի օղակ են կազմում: Այդ կետերը անոթային խրճեղի բնափայտային մասերն են, որոնց մեջ կան ջրատար անոթներ: Ներկված ջուրը՝ անցնելով ջրատար անոթների միջով, պատերը ներկում է կարմիր գույնի: Այդպիսով պարզ երևում է ջրի ճանապարհը ցողունի մեջ:

Աճեցնելու իրեր և նյութեր.

1. Միաշաքիլ բույսի ցողուն (եգիպտացորեն), 2. երկշաքիլ բույսի ցողուն, (որբի), 3. ծաղկամաններ (սերմերը աճեցնելու համար), 4. էոզին կամ կարմիր թանաք, 5. աղակյա բանկա, 6. մանրադիտակ, 7. ածելի, 8. ասեղ պինդեղ, աղակյա ձողիկ, 9. առարկայակեր աղակիներ, 10. ծածկող աղակիներ:

Փ ո Ր Ճ Ա Յ 0

ԲՈՒՅՄԻ «ԼԱՅԸ»



Նկ. 30. Հյուսիս անջատումը կտրված ցողունից:

Կտրել մեկ ամսական եգիպտացորենի ցողունը: Հատվածը ջրով թրջել: Կտրած ծայրին հազցնել քեոտինե խողովակ, իսկ նրա ծայրին փոքր աղակյա խողովակ: Խողովակի մյուս ծայրը պետք է ծածկել բամբակով: 6—7 ժամից հետո կտեսնես, որ արմատային սիստեմի միջոցով ստացված ջուրը հանքային նյութերի հետ միասին դուրս է գալիս ցողունի խողովակների միջով և լցվում աղակե խողովակի մեջ: Նման երևիվոյթ դուք կտեսնես խաղողի այգիներում էտի ժամանակ: Կտրված տեղերում առաջանում են ջրի կաթիլներ, այս երևույթը կոչվում է բույսի «լաց»:

Աճեցնելու իրեր և նյութեր.

1. Ծաղկաման, 2. եգիպտացորենի դալար բույս, 3. սեռինե խողովակ, 4. աղակյա խողովակ, 5. դանակ:

Փ ո Ր Ճ Ա Յ 1

ԿՈՃՂԱՐՄԱՏՆԵՐ ԴԻՏԵԼ

Կոճղարմատ ունեն մի շարք բազմամյա խոտաբույսեր: Բանի օգնությամբ հողից պետք է հանել չայլրի կամ սեղի, արվանտակի, եղեղի, կամ մի որևէ այլ բույսի կոճղարմատը: Կոճղարմատ գտնելը դժվար է, դրա համար պետք է բանով քանդել մարգագետնի հողը և փնտրել հորիզոնական ուղղությամբ դնացող ստորերկրյա ցողունը: Դիտելու համար շատ հարմար է սնդրիկ կոչված բույսի կոճղարմատը: Այդ միաշաքիլ բույսը լայն տարածված է մեր անտառներում:

Գտնել կոճղարմատի վրա հանդույցները, տերևի հետքերը (թեփուկները), բողբոջները: Գտնել կոճղարմատի հին և անող ծայրերը:

Նկարեցեք Ձեր դիտած կոճղարմատը:

Հավաքած կոճղարմատները չորացրեք և պահեցեք: Եթե կոճղարմատը շատ է հաստ, դանակով երկարությամբ ճեղքեցեք և կեսերը չորացրեք առանձին:

Աճեցնելու իրեր և նյութեր.

1. Բան, 2. կոճղարմատներ, 3. դանակ, 4. բուսաբանական ցանց, 5. թուղթ:

Փ ո Ր Ճ Ա Յ 2

ԿԱՐՏՈՑԵԼԻ ՊԱԼԱՐԸ ՍՏՈՐԳԵՏՆԵՍ. ՅՈՂՈՒՆ Է

Վերցնենք կարտոֆելի մի քանի հաս առողջ պալար և որոշենք՝ արմատ են, թե ցողուն:

Դիտենք կարտոֆելի պալարը: Նրա վրա մենք տեսնում ենք փոս ընկած տեղեր, որոնք յրված են պալարի բոլոր մասերում: Յուրաքանչյուր փոսիկի մի կողմը կա նաև աղեղնաձև մի դիմ: Այդ փոսիկները կարտոֆելի պալարի աչքերը կամ ապագա բողբոջներն են, իսկ աղեղիկները տերևի հետքերը: Լավ դիտելով մենք կտեսնենք, որ բոլոր աղեղիկներն էլ մի կողմն են գտնվում: Կարող ենք մի աչքի կազմութամբ որոշել, թե որն է պա-

լարի հիմքը և որը գազաթիւ: Մենք գիտենք, որ աչքերը գտնու-
վում են ցողունի վրա, տերեխի վերև, նրա անութում: Ուրեմն կար-
տոֆելի պալարի հիմքը նա է, որի կողմը դանդում են տերեխե-
րի հետքերը և ընդհակառակը՝ ծայրը նա է, գեղի ուր դարձած է
աղեղիկների գոգավոր կողմը:

Մենք տեսնում ենք, որ հիմքի կողմում աչքերը նուր են
դասավորված, իսկ գազաթիւ մոտ ավելի խիտ: Վերգետնյա ցո-
ղունների վրա էլ գազաթիւ մոտ բողբոջներն ավելի խիտ են դա-
սավորված: Բացի դրանից, պալարի վրա հիմքի կողմում երևում է
այն ճյուղի հետքը, որին ամբացած է եղել պալարը:

Այժմ մի այսպիսի փորձ կատարենք: Ընտրենք մի երկա-
րավուն պալար և աչքերի մոտ լուցկիներ խրենք և նրանց վրա-
յով սկսած պալարի հիմքից մի թել անցկացնենք: Մենք կտես-
նենք, որ աչքերը կարտոֆելի վրա դասավորված են պարուրածի
կամ հերթական:

Կտրենք պալարը լայնությամբ. հատվածի վրա նշմարվում
է մի օղակ, որը գտնվում է կեղևից քիչ դեպի ներս: Մկալպիկի
կամ ասեղի ծայրով պոկենք այդ օղակի մասից մի փոքր կտոր
և պրեսպարատ պատրաստելով դիտենք մանրադիտակով: Մենք
կտեսնենք, որ այդտեղ կան անոթներ:

Այս բոլորից երևում է, որ կարտոֆելի պալարը ձևափոխ-
ված ցողուն է:

Նկարեցեք կարտոֆելի պալարը:

Նույն ձևով ուսումնասիրեցեք դեմոնստրանտորի պալարը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մանրադիտակ, 2. սկալպել, 3. ասեղ, 4. առարկայակիր աղակի, 5. ծածկապակի, 6. լուցիկ, 7. կարտոֆելի պալարներ, 8. դեմոնստրանտորի պալար-
ներ, 9. թել:

Փ ո Ր Ճ Ն 7 3

ՍՈՒԽԻ ԿՈՃՂԵՍԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Վերջնենք մի գլուխ սոխ և դանակով երկարությամբ կլի-
սենք: Կիսած կոճղեսի վրա մենք կտեսնենք կոճղեսատակը, որը
նրա ցողունն է: Կոճղեսատակի վրա նստած են մտալի թեփերը,
որոնք ձևափոխված տերեխեր են: Այդ թեփերի արանքներում
կամ տերեխերի անութներում կան մանր բողբոջներ:

Գնենք սոխի մի քանի կոճղես խոնավ կամ հրայի մեջ մի

նաք տեղ: Մի քանի օրից, երբ սոխը կսկսի ձլել, նույն ձևով
կտրենք երկարությամբ և դիտենք: Մենք կտեսնենք, որ բող-
բոջներից մեկը կամ մի քանիսը մեծացել և կանաչել են, իսկ
կոճղեսատակի վրա տակից սկսել են առաջանալ մի փունջ ար-
մատներ:

Նկարեցեք սոխի չծլած և ծլած կոճղեսի հատվածը:

Նույն ձևով դիտենք դանազան բույսերի կոճղեսներ (սպի-
տակ բանջար, սխտորուկ, սխտոր և այլն):

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Սոխի կոճղեսներ ծլած և չծլած, 2. այլ բույսերի կոճղեսներ, 3.
դանակ:

6-Ր Դ Գ Լ ՈՒ Խ

ԾԱՂԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Փ ո Ր Ճ Ն 7 4

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՇՈՒՏ ԲԱՅՎՈՂ ԾԱՂԻԿՆԵՐ

Ձմռան վերջին կամ վաղ գարնանը, երբ բնության մեջ
ծաղիկները դեռ չեն բացվել, սենյակում կարելի է արագաց-
նել բույսերի ծաղկելը:

1. Վերջնենք ուռենու, բալենու, տանձենու, խնձորենու,
ծիրանենու, դեղձենու կամ սալորենու ճյուղեր, դնենք տաք սե-
նյակում մի բաժակ ջրի մեջ: Երբ ջուրը պակասի, պետք է ա-
վելացնել: Ծուռով բողբոջները կսկսեն ուռչել և տաս-տասնև-
հինգ օրից հետո ծաղիկները կբացվեն այն ժամանակ, երբ դուրսն
այդ ծառերի վրա դեռ ևս ոչ մի ծաղիկ չի բացվել:

2. Կարելի է արագացնել նաև մի շարք վաղ ծաղկող կոճ-
ղեսավոր և պալարավոր բույսերի ծաղկելը: Իրա համար նախօ-
րոք գարնանը կամ աշնանը պետք է արմատով և հողով հանել
այդ բույսերը և տնկել ոչ խոր արկղների մեջ: Մկալում արկղները
պետք է պահել դուրսը, որ ձյունով ծածկվեն: Հետո՝ դեկտեմբե-
րին պետք է փոխադրել մի հով տեղ, որտեղ ջերմությունը +20-ից
+30 է ըստ Ցելսիուսի: Այդտեղ 10—11 օր պահելուց հետո տա-
նել տաք սենյակ և դնել լուսավոր պատուհանի առջև: Բույսերը
չուտով կծլեն և նայած տեսակին 15—20 օրում կծաղկեն: Վաղ
ծաղկեցնելու համար շատ հարմար է հակինթը (հիացինտ), որի
կոճղեսները կարելի է ձեռք բերել ծաղկի խանութներում:

3. Վաղ կարելի է ծաղկեցնել նաև բողբոջ կամ շաղգամբ: Դրա համար այդ բույսերի առողջ արմատները պետք է տնկել ծաղկամաններում և դնել տաք սենյակում լույսին մոտ: Նրեք չորս ամսվա ընթացքում նրանք ծաղկում են:

4. Վաղ գարնանը մեզ մոտ արդեն կարելի է գտնել մի շարք վայրի բույսեր ծաղկած դրուժյամբ. օրինակ՝ ճնճաղիկ (կամ խլոպուղ), պապկլոր (մուսկարի), սագասոխ (դագեա), դափ-բան կամ թեղի (վայրի քրքում), դամբախ և այլն:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Բահ,
2. արկղներ,
3. ծաղկամաններ,
4. հող,
5. Ներմաշափ,
6. կոճ-դեմներ,
7. կոճղարմատներ,
8. ալմատապտուղներ (բողբ, շաղգամ):

Փ ո Ր Ճ Ա 7 5

ՄԻԱՇԱՔԻԼ ԲՈՒՅՄԻ ԾԱՂԻԿԸ

Ձեռք բերենք հակիրթի (հիացինախ), սոխի, սագասոխի, ճնճաղիկ կամ որևէ այլ կոճղեսավոր բույսի ծաղիկներ: Եթե ծաղիկները մանր են պետք է դիտել խոշորացույցով:



Նկարագրենք, օրինակ, սագասոխի ծաղիկը, որը միշտ էլ կարելի է գտնել վաղ գարնանը մարդագետիններում և այգիներում:

Սագասոխի դեղին ծաղիկն ունի ծաղկակոթուց, որի վերևի մասը քիչ լայնացած է՝ ծաղկակալ: Ծաղկակալի վրա դրսևում են ծաղկաթերթերը, առեկները, և վարսանդը:

Սագասոխի ծաղկաթերթերը թվով վեց հատ են և բոլորն էլ համարյա միանման: Նրանք արտա-

Նկ. 31. Սագասոխ, աջ կողմում առանձին ծաղիկը կտրված:

քինից կանաչավուն են կամ ունեն կանաչ շերտ, իսկ ներսից՝ վառ դեղին:

Առեկները նույնպես վեց հատ են: Յուրաքանչյուր առեկ կազմված է թեկիկից և փոշանոթից:

Վարսանդը մեկ հատ է, բայց կազմված է երեք բնից: Դա տեսնելու համար պետք է սուր դանակով լայնությամբ կտրել սերմնարանը: Նրա ներսում կան շատ մանր սերմնաբողբոջներ: Այսպես են կազմված նաև հակիրթի, սոխի, ճնճաղիկի ծաղիկները, միայն թե ծաղկաթերթերն այլ դույնի են, սոխի ծաղկաթերթերը սպիտակ են, ճնճաղիկինը՝ սպիտակ կամ վարդագույն, հակիրթիինը լինում են դանազան գույնի:

Այլ կազմություն ունի դամբախի կամ հիրիկի ծաղիկը: Նրա ծաղկաթերթերը նույնպես վեց հատ են, սակայն մանուշակագույն կամ այլ գույնի, դրանցից երեքը դեպի դուրս են թեքված, իսկ մյուս երեքը՝ դեպի վեր ուղղված:

Առեկները միշտ էլ երեք հատ են: Վարսանդը մեկ հատ է և կազմված է երեք բնից: Կտրեցեք դանակով և դիտեցեք սերմնարանի ներքին կազմությունը: Դիտեցեք սերմնաբողբոջները:

Բոլոր միաշաքիլ բույսերին հատուկ է, որ ծաղիկի մասերը լինեն թվով երեք կամ վեց: Օրինակ, ցորենի ծաղիկն էլ ունի երեք առեկ:

Նկարեցեք ձեր դիտած միաշաքիլ բույսի ծաղիկը: Մի քանի ծաղիկ չորացրեք թղթերի մեջ կամ ավազով: (Տես գրքի վերջում հավելված 1.):

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Ծաղիկներ,
2. լուպա,
3. սկալպել կամ փոքր դանակ,
4. թուղթ,
5. բուսաբանական ցանց,
6. ավազ:

Փ ո Ր Ճ Ա 7 6

ԵՐԿՇԱՔԻԼ ԲՈՒՅՄԻ ԾԱՂԻԿԸ

1. Կերպենք նախ սալորենու կամ բալենու ծաղիկը: Ծաղկակոթը և ծաղկակալը շատ լավ երևում են: Ծաղկակալը և ծաղիկի մյուս մասերի դասավորությունն ավելի լավ դիտելու համար պետք է սուր դանակով կամ մատիտի սրիչով (ածելիի սայրով) կտրել ծաղիկը երկարությամբ վերից վար: Կտրած ծաղիկի վրա երևում է, որ ծաղկակալը գոգավոր է:

Ծաղկաթերթերը բնորոշ էլ իրար նման չեն, ինչպես ստիպանի: Մալորենու կամ բալենու ծաղկաթերթերը երկու տեսակ են: Արտաքին հինգ թերթերը կանաչ են և միասին կազմում են բաժակ: Իսկ ներքին թերթերը դուրսվոր են և կազմում են պակը:

Ուռնիկները թիփն այստեղ շատ է: Համարեցեք՝ քանի հատ են առեչները:

Վարսանդը մեկ հատ է և միայն մեկ բույն ունի: Կտրեցեք սերմնարանը և տեսեք, թե քանի սերմնարողքով կա մեջը:

Վարսանդը, ընդհանրապես, բացի սերմնարանից ունի նաև ստիպակ, որը թելանման է լինում և սպի, որը դանվում է վարսանդի ծայրին:

Մալորենու և բալենու վարսանդի սպին ուռնիկ է:



Նկ. 32. Ուռնի. 1. ոստը տերևներով, 2. ոստը ծաղկաբողբոջներով, 3. արական ծաղկաբույլը 4. առանձին արական ծաղիկը 5. իզական ծաղկաբույլը 6. առանձին իզական ծաղիկը 7. բացված պտուղը (կնգուղ):

սակի ծաղիկների ժողովածու: Ծաղկի ֆորմուլը (Տես հետևյալ

2. Նկարագրենք ուռնու ծաղիկը: Դրա համար պետք է ճշուրդեր կտրել տարբեր ծառերից և ջրի մեջ թողնել՝ մինչև որ ծաղիկները բացվեն:

Ուռնու ծաղիկները շատ պարզ կազմութուն ունեն: Երա ծաղիկները խմբված են և կազմում են կատվիկներ (փշիկներ): Յուրաքանչյուր ծաղիկ կազմված է կամ մի թեփուկից և երկու առեչից, կամ մի թեփուկից և մի վարսանդից: Ուռնու ծաղիկները միասեռ են, իսկ բալենունը երկսեռ:

Նույն ձևով նկարագրեցեք հոնի, ընկուզենու, ախլենու, խաղողի, ցորենի, լոբու, երեքնուկի և այլ բույսերի ծաղիկները:

Նկարեցեք ձեր դիտած ծաղիկները:

Թղթերի մեջ կամ ավագով չորացրեք ձեր հավաքած ծաղիկները և կազմեցեք զանազան տեսքերի Մոտը գրեք, թե ինչ բույս է և աշխատանքը):

Աճեցածես իբր և ճյուղեր.

1. Պաշտպանություն, 2. թուղթ, 3. ավաղ

Փ ո Ր ձ № 77

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԾԱՂԿԻ ՖՈՐՄՈՒԼԸ

Ծաղկի ֆորմուլը կազմելու համար պետք է հաշվել նրա մասերը և կրճատ նշանակել: Դրա համար վերցնում ենք ծաղկաթերթ բաժակ, պակ, առեչ և վարսանդ բառերի առաջին տառերը և մեծատառ գրում մի տողի վրա իրարից որոշ հեռավորության վրա՝ Մ—Բ—Պ—Մ—Վ: Այնուհետև համարում ենք ծաղկի մասերը և թվերը նշանակում համարատասխան տառերի հետ:

Օրինակ՝ սաղաստիի ծաղիկն ունեւր վեց ծաղկաթերթ, վեց առեչ և մեկ վարսանդ՝ կազմված երեք բնից: Ուռնին սաղաստիի ծաղկի ֆորմուլը կլինի Մ₆ Ա₆ Վ₍₃₎, փակագծերը ցույց են տալիս, որ վարսանդի երեք մասերն իրար միացած են:

Չամբախի կամ հիրիկի ծաղկի ֆորմուլը կլինի Մ₃₊₃ Ա₃ Վ₍₃₎: Մալորենու ծաղկի ֆորմուլը՝ Բ₅ Պ₅ Ա₅ Վ₁: Ա-ի մաս դրված նշանը ցույց է տալիս, որ առեչները շատ են:

Կարտոֆիլի ծաղկի ֆորմուլը՝ Բ₅ Պ₍₅₎ Ա₃ Վ₍₂₎:

Նույն ձևով կազմեցեք սոխի, ուռնու, լոբու, պամիդորի, տաքդեղի, բողկի, կաղամբի և այլ բույսերի ծաղիկները ֆորմուլը:

Փ ո Ր ձ № 78


ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԾԱՂԿԻ ԴԻՍԳՐԱՄԸ

Եթե վերցնենք ծաղկաբողբոջը բացվելուց քիչ առաջ, սուր դանակով կամ անկիի ծայրով լայնությամբ կտրենք, մենք կը տեսնենք ծաղկի բոլոր մասերը խիտ իրար մոտ դասավորված: Այժմ եթե զբուրում լայնությամբ թանաքոտենք այդ հատվածը և սպենք թղթի վրա, կստանանք ծաղկի հատակագիծը:

Ծաղկի ղեկագրամը կազմել՝ կնշանակի նկարել ծաղկի մասերը պայմանական նշաններով այնպես, ինչպես նրանք դասավորված են ծաղկի մեջ:

Դրա համար նախ կարկինի օդնությամբ գծենք մի քանի շրջանագծեր իրար մեջ միևնույն կենտրոնից. կարկինի սուր

ճայրը պետք է դնել մի կետում և ասյա գծող ճայրով գծել մի փոքր շրջանագիծ: Հետո սուր ճայրը նույն տեղում թողնելով՝ քիչ հեռացնենք գծող ճայրը և մի շրջան էլ գծենք՝ ավելի մեծ: Այս ձևով գծենք 4—5 շրջան: Մեջտեղի ամենափոքր շրջանում նկարենք վարսանդը՝ այնքան մասի բաժանած, քանի հատ որ բույն ունի նա: Այնուհետև նշանակենք առեչները երիկամի կամ լուբու ձևով և վերջապես ծաղկաթերթերը 1—2 օրական լուսնի նման (կամ փոքր փակագծերի ձևով՝ միայն հաստացրած): Բաժակաթերթերը նշանակում են մեծ փակագծի ձևով:



Մեծ մասամբ առեչները գտնվում են պսակաթերթերի արանքի դիմաց և պսակաթերթերն էլ բաժակաթերթերի արանքի դիմաց: Կազմեք սալորենու, դամբախի, սոխի ծաղիկների դեագրամը:

Փ ո Ր Ճ Ն Ե 79

Ծ Ա Ղ Կ Ա Փ Ո Շ Ի

Փոշանոթի մեջ գտնվում է ծաղկափոշին:

Ծաղկափոշու հատիկները շատ մանր են, նրանց պետք է դիտել մանրադիտակով:


Ծաղկափոշին դիտելու համար պետք է վերցնել նոր բացված ծաղիկներ և առեչները թափահարել առարկայակիր ապակու վրա կամ քսել նրան: Այնուհետև պետք է սկզբում առանց ջրի դիտել մանրադիտակով: Հետո պետք է ավելացնել մի կաթիլ ջուր և ծածկել ծածկապակով:

Իխտենք սալորենու, ծիրանենու, ցորենի, խաղողի, դդումի ծաղկափոշին չոր և թաց վիճակում և նկարենք: Ի՞նչ ձև ունեն աղկափոշու հատիկները: Ունեն արդյոք վրան քանդակներ, թե՞ հարթ են:

Նույն ձևով դիտել նաև այլ բույսերի ծաղկափոշին:

Ծաղկափոշու մշտական պրեպարատ պատրաստելու համար

պետք է վերցնել մաքուր առարկայակիր ապակի, վրան թափահարել ծաղկափոշի, ասյա մեջտեղը մի կաթիլ գլիցերին-ժելատին դնել և դրուշությամբ ծածկել մաքուր ծածկապակով: Մի



Նկ. 34. Ծաղկափոշու հատիկները մանրադիտակով դիտելիս. 1. ճարճատուկ, 2. դդում, 3. պատատուկ, 4. կանեփ, 5. սոճի, 6. մեխակ, 7. եղևապեղ:

քանի ժամից հետո, երբ գլիցերին-ժելատինը կսառչի, ծածկապակու եզրերը պետք է ծածկել ասվալտի լակով, որ ապակու տակի նյութը չչորանա: Այս ձևով պատրաստած պրեպարատը շատ երկար մնում է առանց փշանալու:

Աճեռածեռ իրեք և նյութեր.

1. Մանրադիտակ, 2. առարկայակիր ապակի, 3. ծածկապակի, 4. ծաղիկներ, 5. ասեղ, 6. սկալոյի, 7. գլիցերին-ժելատին, դնել պատրաստի (Պատրաստելը նկարագրված է կոմարովի գրքում), 8. ասվալտի լակ:

Փ ո Ր Ճ Ն Ե 80

ՇՆԵՑՆԵԼ ԾԱՂԿԱՓՈՇԻՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

(Ուսուցչի համար)

Այս աշխատանքը մենք բաժանենք երկու մասի, առաջին մասում նկարագրենք թե ինչպես են պատրաստում ծլեցնելու համար անհրաժեշտ հեղուկը, երկրորդ մասում՝ թե ինչպես պետք է դնել փորձը:

1. Ծաղկափոշին արհեստական կերպով ծլեցնելու համար անհրաժեշտ է պատրաստել հատուկ լուծույթ: Դրա համար վերցնում ենք քսան խորանարդ սանտիմետր երկաթ ջուր և մեջը

լուծում ենք 2—3 գրամ շաքար: Մտացվում է 10—15 տոկոսանոց շաքարի լուծույթ:

Այս լուծույթը լցնում ենք մաքուր սրվակի մեջ և բերանը խցանով կամ մաքուր բամբակով ծածկում:

2. Վերցնում ենք մի ծածկապակի, մաքրում ենք և ասպակե ձողիկով վրան կաթեցնում պատրաստած շաքարի լուծույթից և որևէ նոր բացված ծաղիկի փոշանոթները հղում կաթիլի մակերեսին: Ծաղկափոշին թափվում է կաթիլի վրա և ցրվում: Ծատ հարմար է վերցնել սալորենու, ծիրանենու, բալենու կամ մի այլ ստղատու ծառի ծաղկափոշի: Այնուհետև մոմից կամ պա-



Նկ. 35. Պրեպարատ կախած կաթիլով. n—առարկայակիր սպալի, m—ծածկապակի, k—մոմի օղակ կամ ոտքեր, ծն—կախված կաթիլ:

րաֆինից պատրաստում են չորս հատ իրար հավասար փոքրիկ գնդիկներ և կպցնում ծածկապակու ծայրերին: Արագ շուռ ենք տալիս ծածկապակին և դնում մաքուր առարկայակիր ապակու վրա. ծածկապակին չի կպչում առարկայակիր ապակուն, այլ մնում է մոմե ոտքերի վրա սեղանի նման: Կաթիլը մնում է կախված. նա չպետք է կպչի առարկայակիր ապակուն: Մանրադիտակով ստուգել ծաղկափոշի կա հեղուկի վրա, թե ոչ: Եթե պետք է, ավելացնել:


Այս ձևով պատրաստած պրեպարատը պետք է տեղափոխել խոնավ կամ երայի մեջ և վերջինս դնել մի տաք տեղ (Տես հավելված 3): Խոնավ կամ երան կարելի է պատրաստել նաև այնպես, ինչպես նկարագրված է փորձ № 27-ում, միայն թե գիպսի փոխարեն պետք է վերցնել որևէ այլ իր, օրինակ՝ բաժակ, ապակու կտորներ և այլն:

Կես ժամ հետո պետք է պրեպարատը հանել խոնավ կամ երայից և ստուգել մանրադիտակով կամ 20 անգամ մեծացնող խոշորացույցով: Եթե ծաղկափոշու հատիկները դեռ չեն ձևեր նորից պետք է դնել խոնավ կամ երայի մեջ: Այսպես պետք է կես ժամը մեկ անգամ ստուգել մինչև որ կձևեն:

Եթե 2—3 ժամվա ընթացքում ծիլեր չեն երևում, պետք է նոր պրեպարատ պատրաստել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Չուտ շաքարի լուծույթը հեղուկ է: Ա-

վելի հարմար է պատրաստել այնպիսի լուծույթ, որը կարող է ամրանալ: Դրա համար վերցնում են նախապես եռացրած և սառեցրած ջուր 20 խորանարդ սանտիմետր, մեջն անում են կես գրամ ժելատին և կեսից—մեկ ժամ թողնում են, որ վերջինս ուռչի: Ապա ավելացնում են 2—3 գրամ շաքար, ապակե ձողիկով խառնում են և 10—15 րոպեով ամանը պահում են եռացրած ջրի մեջ, որ տաքանա:



Նկ. 36. Ծրած ծաղկափոշի

Այս հեղուկը ապակե ձողիկով կաթեցնում են ծածկապակու վրա և նույն ձևով կատարում փորձը:

Ժելատինով պատրաստած հեղուկը կարելի է կաթեցնել նաև ուղղակի առարկայակիր ապակու վրա: Այս դեպքում ծածկապակի և մոմ հարկավոր չեն: Մնացածը պետք է կատարել նրկարգրված ձևով:

ԱՅՈՒՐԱԾԵՍ ԻՐԵՐ և ԳՅՈՒՔԵՐ.

1. Ծաքար, 2. եռացրած ջուր, 3. կլորա, 4. ապակե ձողիկ, 5. ժելատին, 6. ծաղիկներ, 7. մանրադիտակ կամ խոշորացույց, 8. առարկայակիր և ծածկող ապակիներ, 9. խոնավ կամ երա:


Փ ո Ր Ձ № 81

ԾԱՂԿԻ ՄԱՍԵՐԸ ՁԵՎԱՓՈՒՍՎԱԾ ՏԵՐԵՎՆԵՐ ԵՆ

Ձուր բերենք սովորական մայիսյան վարդի ծաղիկներ և ուսումնասիրենք նրա կազմությունը: Հատուկ ուշադրություն դարձնենք պսակաթերթերի վրա: Նրանք շատ են՝ եղրինն ավելի մեծ, իսկ դեպի կենտրոն փոքրանում են: Պոկենք ամենամեծը թերթերը, նրանց վրա մենք կտեսնենք փոքրիկ փոշանոթներ: Սա սույն է տալիս, որ առեչներն աստիճանաբար փոխվելով դառնում են պսակաթերթ, իսկ վերջիններս էլ շատ նման են տերևներին:

Գտեք առեչից դեպի պսակաթերթ ըստը անցումները՝ օրինակ սովորական առեչ, առեչ քիչ ավելի տափակ թելիկով, թելիկն ավելի լայն, նեղ պսակաթերթ փոշանոթներով, լայն պսակաթերթ փոշանոթներով, պսակաթերթ առանց փոշանո-

թի: Ծաղկի այդ ընտրած մասերը չորացրեք սովորական ձևով (բուսաբանական ցանցով կամ հաստ գրքի մեջ) և կողք կողքի կպցրեք սպիտակ թղթի վրա:



Նույն ձևով դիտեցեք, եթե ձեռք բերեք, նաև ջրային սափորիկի ծաղկի կազմութունը*:

Աճնրածնչս իբր և ցյութեր.

1. Վարդի ծաղիկներ, 2. պինցիտ,
3. ասեղ, 4. խոշորացույց, 5. թուղթ,
6. բուսաբանական ցանց, 7. գուժմար-րաբիկ:

Փ ո Ր Ճ Ա Յ 2

Նկ. 37 Ջրային սափորիկի ծաղկաթերթերի աստիճանական անցումն առեցնելի:

ԻՆՔՆԱՓՈՇՈՏՎՈՂ ԵՎ ԽԱՉԱՉԵՎ
ՓՈՇՈՏՎՈՂ ԲՈՒՅՄԵՐ

Այս փորձը պետք է կատարել այն ժամանակ, երբ արդեն շատ ծաղկած ծառեր և խոտաբույսեր կան:

Պետք է ընտրել մի քանի տարբեր տեսակի ծառ և խոտաբույս, օրինակ՝ տանձենի, խնձորենի, սալորենի կորիզավոր թրթենի, երեքնուկ, ցարեն, գարի, եգիպտացորեն: Այնուհետև պետք է այդ բույսերի ծաղկավոր ճյուղերից մեկը կամ երկուսը ծածկել թանդիֆի տողրակով քանի դեռ ոչ մի ծաղիկ չի բացվել: Յորենի և գարու հասկերն ավելի հարմար է ծածկել պերզամենտ կոչվող թղթից կարած պարկերով: Պարկի ցածի մասում ցողունի շուրջը պետք է բամբակի փաթաթել, պարկի եզրերը մտնեցնել և թելով կապել:

Թանդիֆի կամ թղթի պարկերով ծաղիկներ ծածկելը կոչվում է մեկուսացում. այս միջոցով չենք թույլ տալիս, որ գրսից ծաղկափաշի ընկնի մեր բույսերի ծաղիկների վրա:

Ծաղիկները մեկուսացած պետք է պահել մինչև որ մյուս ծաղիկներից սկսի պտուղ առաջանալ: Այդ ժամանակ պետք է պարկերը հանել և տեսնել, թե որ բույսերն են պտուղ տվել:

*) Մեզ մոտ ջրային սափորիկն աճում է կոտում և Ապարանում՝ վաղը լճակներում:

պարկի մեջ և որոնք չեն տվել, Պաշաձև փոշոտվող բույսերը մեկուսացման դեպքում պտուղ չեն տալիս:

Պարզեցեք, թե ինչու թթենու մեկուսացած ծաղիկները պտուղ չեն տվել, նրա ծաղիկը երկսեռ է, թե միասեռ:

Ի՞նչպես են ծաղիկները խաչաձև փոշոտվում բնության մեջ:

Աճնրածնչս իբր և ցյութեր.

1. Թանդիֆ, 2. պերզամենտի պարկեր, 3. բամբակ, 4. թել:

Փ ո Ր Ճ Ա Յ 3

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՓՈՇՈՏՈՒՄ

Արհեստական փոշոտում կատարելիս պետք է նախ հեռացնել առեցնելը և ապա մի այլ բույսից ծաղկափոշին փոխադրել վարսանդի սպիտի վրա:

1. Վերցնենք օրինակ խնձորենին: Ընտրենք մի ճյուղ, որի վրա ծաղիկները դեռ չեն բացվել: Առավոտյան կամ երեկոյան հով ժամանակ պետք է սրածայր պինցետով բացել ծաղիկները և խոշորացույցով ստուգել՝ փոշին հո չի թափվել: Եթե փոշանոթները դեռ չեն բացվել, պետք է պոկել և հեռացնել բոլոր առեցնելը: Դրա համար պետք է պինցետով բռնել առեցնաթելից, պոկել և քսել թևին կամ ձախ ձեռքին, որ փոշանոթն ընկնի պինցետի վրայից:

Երբ ծաղիկի բոլոր առեցնելը կհեռացնենք, պետք է խոշորացույցով դիտել վարսանդի սպին՝ հո ծաղկափոշու հատիկներ չկան վրան: Ստուգելուց հետո պետք է հեռացնել մյուս ծաղիկների առեցնելը: Այս զործողությունը կոչվում է կաստացիա կամ ամուլացում:

Այդ ճյուղի վրա պետք է պերզամենտի թուղթ կախել և վրան գրել, թե կաստացիան երբ է կատարված:

2. Կաստացիայից հետո պետք է ճյուղը փաթաթել թանդիֆով և կապել, որ քամուց չբացվի:

3. Այնուհետև պետք է մի այլ խնձորենուց վերցնել հատուկացած, բայց դեռ չբացված փոշանոթներ և հավաքել ապակե փոքր բաժակի մեջ: Որոշ ժամանակից հետո փոշանոթները կչորանան, կբացվեն և ծաղկափոշին կսկսի թափվել:

4. Կաստացիայի հետևյալ օրերը պետք է թանդիֆը բացել և տեսնել սպին հասունացել է, թե ոչ: Հասունացած սպին ծածկված է լինում՝ մածուցիկ հյութով և սկսում է փայլել:

5. Երբ սպին կհասունանա, պետք է մաքուր գրչածայրով կամ վրձինով բաժակից փոշին տեղափոխել սպիտ վրա և նորից ծածկել թանդիֆով: Մի օր անց նույն ծաղիկները նորից պետք է փոշոտել: Սոչորացույցով ստուգել՝ սպին փոշոտվել է, թե ոչ:

6. Այնուհետև պետք է մի քանի օր սպասել, ապա բացել թանդիֆը և ստուգել, թե փոշոտած ծաղիկներից քանիսն են բեղմնավորվել և պտուղ տվել: Որոշեցեք, թե ձեր փոշոտած ծաղիկների որ տոկոսն է սկսում պտուղ տալ:

Նույն ձևով արհեստական կերպով փոշոտեցեք տանձի, դեղձի, ցորենի, լոբու ծաղիկները:

Թթենու, ընկուղձու, դոմի, վարունգի ծաղիկներն արհեստական կերպով փոշոտելիս կասարացիա հարկավոր չէ կատարել, որովհետև այդ բույսերի ծաղիկները միասեռ են:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Պինցետ,
2. բաժակ,
3. թանդիֆ,
4. թել,
5. պերլամենտի պարկ,
6. խոչորացույց:

Փ ո Ր Ճ № 84

ԲԱԶՄԱՅՈՒՄ ՊԱՆՈՒՆԵՐՈՎ ԵՎ ԿՈՃՂԵՄՆԵՐՈՎ

1. Վերցնենք կարտոֆելի առողջ պալար և դանակով կտրուտենք այնպես, որ յուրաքանչյուր կտորի վրա 2—3 աչք լինի: Փըռենք այդ կտորները բացօթյա մինչև որ կտրվածքները չորանան: Ապա տեղափոխենք մուլթ և խոնավ տեղ: Մի քանի օրից հետո աչքերը կսկսեն ծլել: Եթե այժմ դրանց տեղափոխենք առանձին ծաղկամանների մեջ, ապա ամեն կտորից կստացվի մի նոր բույս:

Նույն ձևով բաղմացրեք գետնախնձորի պալարները:

2. Վերցնենք նաև սխտորի կամ վայրի սխտորուկի մի կոճղես: Սխտորի կոճղեսը կաղմված է մանր կոճղեսներից, իսկ վայրի սխտորուկի կոճղեսի վրա, մեծ կոճղեսի կողքին, առաջանում են բազմաթիվ մանր կոճղեսիկներ՝ ձագեր: Անջատենք այդ ձագերը և տնկենք մի արկղի մեջ 5 սմ հեռավորություն վրա: Յուրաքանչյուր փոքր կոճղեսից մի նոր բույս կառաջանա:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Կարտոֆելի և գետնախնձորի պալարներ,
2. սխտորի և վայրի սխտորուկի կոճղեսներ,
3. հող արկղով,
4. ծաղկամաններ,
5. դանակ,
6. փոքր բահ:

Փ ո Ր Ճ № 85 ԲԱԶՄԱՅՈՒՄ ԿՏՐՈՆԵՐԸ

Փարնանը կտրենք ուռնու ճուղեր և դնենք մի բաժակ ջրի մեջ ու տեղավորենք տաք տեղ: Մի քանի օրից հետո, ճյուղերի ստորին ծայրին կսկսեն առաջանալ արմատներ:

Ուռնու մի քանի ճյուղ կտրենք և տնկենք ծաղկամանի մեջ: Երկու օրը մեկ անգամ մեկ ճյուղ հանենք և ստուգենք՝ արմատներ առաջացել են, թե ոչ: Այս փորձի համար հարմար է ծաղկամանները լցնել՝ ոչ թե հողով, այլ մաքուր լվացած ավազով: Բաղմացման համար վերցրած ճյուղերը կամ նրանց կտորները կոչվում են կտրուկ:

Նույն ձևով կտրուկներով կարելի է բազմացնել մի շարք բույսեր: Այս փորձի համար հարմար է վերցնել սենյակային բույսերից արազեսկանցիա, ֆուքսիա, բեզոնիա, որոնք շատ սովորական են և կարելի է գտնել համարյա բոլոր տներում: Այդ բույսերի կտրած ճյուղերը կամ կտրոնները հեշտությամբ արմատակալում են խոնավ ավազի կամ հողի մեջ: Նրանց հենց այդ ձևով էլ բազմացնում են:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Արկղ հողով,
2. ծաղկամաններ հողով,
3. լվացած ավազ,
4. դանակ,
5. դանազան բույսերի կտրոններ:

Փ ո Ր Ճ № 86

ԲԵԳՈՆԻԱՅԻ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ ՏԵՐԵՎՈՎ

Փորձի համար պետք է անպայման վերցնել բեզոնիա ռեֆու կոչված սենյակային բույսը: Այդ բույսն ունի մեծ տերևներ կարմիր բծերով:

Կտրենք բեզոնիայի երկու մեծ տերև: Նրանցից մեկը դնենք ծաղկամանում խոնավ ավազի վրա և տեղ տեղ կտրենք գլխավոր ջղերը: Վրան դնենք մի քանի հատ մանր քարեր, որ տերևը մնա ավազին կպած: Այնուհետև տերևը ծածկենք բաժակով կամ ապակե զանգով, որ չչորանա: Դնենք տաք տեղ:

Մյուս տերևը կտրտենք սեպաձև այնպես, որ ամեն մասում անկյուն կազմող հաստ ջղեր լինեն և նեղ մասով մի սմ խորությամբ տնկենք խոնավ ավազի մեջ և ծածկենք բաժակով կամ ապակե զանգով: Դնենք տաք տեղ:

Թե առաջին և թե երկրորդ դեպքում բեզոնիայի տերևի

վրա փորը ծիլերը կտրածանան, սրանք հետո կարմատակալին և առանձին բույս կդառնան: (Նկարը տես բուսաբանությունից դասագրքում):

Աճեցնելու իրեր և նյութեր:

1. Բեզնիա սեքս (սենյակային բույս), 2. Ֆազիամանով ալագ, 3. Բաժակ կամ ալակե զանգ, 4. դանակ և մկրատ:


7-ր Դ Գ Լ Ո Ի Խ

Տ Ր Ո Ռ Ի Զ Մ Ն Ե Ր

Փ ո Ր ձ № 87

Գ Ե Ո Տ Ր Ո Պ Ի Զ Մ

Վերցնել սովորաբար կամ փայտյա մի շրջան: Վրան հասար հեռավորություն վրա եզրին գնդասեղով ամրացնել սիսեռի վեց հատ ծլած սերմ այնպես, որ նրանց արմատիկները զանազան կողմ ուղղված լինեն: Յուրաքանչյուր սերմի տակը պետք է դնել մի կտոր թրջած բամբակ և շրջանը ամրացնել պատին:



Մյուսեհատե երեք օր շարունակ յուրաքանչյուր առավոտ և երեկո շրջանը պտտեցնել 1/4 պտույտ: Երեք օրից հետո դուք կնկատեք, որ արմատներն աճում են նույն ուղղությամբ, ինչպես մենք սկզբում դրել ենք: Համողվելու համար արմատիկները սկզբնական ուղղությունը զծել շրջանի վրա: Բամբակը միշտ թրջած պահել:

Նույնը կարելի է ցույց տալ այլ փորձով: Վերցնենք սիսեռի մի քանի ծլած սերմ և գնդասեղով ամրացնենք խոնավ կամերայի պատին կպցրած խցանին (խցանը կպցնել ամանի չոր պատին կնքամոմով՝ սուրգուչով կամ, ավելի լավ է, մենդելեյեյան դամազկայով): Օրական երկու անգամ սերմի դիրքը փոխել՝ պտտելով քորոցի հետ: Դիտել, թե ինչ ուղղությամբ է աճում արմատիկը:

Աճեցնելու իրեր և նյութեր:


1. Սովորաբար կամ փայտե շրջան, 2. սիսեռի ծլած սերմեր, 3. գրանց:

դասեղ, 4. հիպոսկոպիկ բամբակ, 5. մեկ շրջանը պատին ամրացնելու համար, 6. խոնավ կամերա: 7. սուրգուչ կամ մենդելեյան դամազկա (գնել պատրաստի):

Փ ո Ր ձ № 88

Ֆ Ո Տ Ո Տ Ր Ո Պ Ի Զ Մ

Ծաղկամանի մեջ ցանել ցորենի, սիսեռի կամ այլ սերմեր և դնել մութ տեղ՝ ծիլերը 1—2 ավ դառնալուց հետո, ծաղկանոթը տեղափոխել ֆոտոտրոպիկ կամերայի մեջ, որի անցքն ուղղված է դեպի լուսամուտ:



Նկ. 39. Ֆոտոտրոպիկ կամերա երկու բաժանմունքով:

Եթե ծիլերը առողջ են, 2—3 ժամից հետո նրանք կթեքվեն դեպի լույսը:

Ծաղկամանը շրջել այնպես, որ ծիլերը թեքված լինեն լույսի հակառակ կողմը: Շատ շուտով նրանք նորից կթեքվեն լույսի կողմը:

Դուք ձեր տանը հաճախ կտեսնեք, որ լուսամուտում դրված բոյսերը թեքվում են դեպի լույսը:

ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.—Ֆոտոտրոպիկ կամերան կարելի է պատրաստել արկղից՝ այնպես մեծությամբ, որ ծաղկամանը բույսի հետ ազատ տեղավորվի: Մի կողմում բանալ բարակ ձեղք: Արկղի վերին երեսն այնպես պետք է պատրաստել, որ բույսը հանելու և դնելու համար բացվի: Արկղը ներսից ներկել սև գույնի:

Աճեցնելու իրեր և նյութեր:

1. Ծաղկաման, 2. սիսեռի սերմեր, 3. հելիոտրոպիկ կամերա: Փ ո Ր ձ № 89

Հ Ի Դ Ր Ո Տ Ր Ո Պ Ի Զ Մ

Խոնավ կամերայի մեջ գնդասեղի օգնությամբ ծիլն այնպես ամրացնել, որ արմատները ուղղված լինեն դեպի ցած: Ուրոշ ժամանակից հետո կնկատվի հետևյալը՝ արմատիկը աճելով կուղղվի դեպի խոնավ թուղթը: Թուղթը խոնավ պահելով արմատը կարելի է աճեցնել այնքան ժամանակ, մինչև հասնի պատին:

Աճեցնելու իրեր և նյութեր:


1. Խոնավ կամերա (Տես գրքի վերջում), 2. սիսեռի ծիլեր, 3. գնդասեղ:

Մ Ա Ս Բ.
ԲՈՒՍԱԿԱՆ ԽՄԲԵՐ
ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ

Փ ո ը & № 90

ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

Բակտերիաները շատ դանազան ձևեր ունեն։ Բակտերիաների ձևերին ծանոթանալու համար պատրաստենք և դիտենք հետևյալ պրեպարատը։ Եղունդով քերենք տտամիլի վրա եղած փառը հիմքին մոտ և քերած լորձուկը տեղափոխենք առարկայակիր ապակու վրա մի կաթիլ ջրի մեջ։ Դիտենք պրեպարատը մանրադիտակով։ զրա համար անհրաժեշտ է խոշորացնել առնվազն 500 անգամ։ Բակտերիաները թափանցիկ են, նրանց պարզ տեսնելու համար պետք է դիաֆրագմայի օգնությամբ թուլացնել սեղանիկի վրա ընկնող լույսը։ Պրեպարատի վրա կը տեսնենք երկար և կարճ ձողիկներ, ոլորված թելիկներ, մանր գնդիկներ, զրանք զանազան ձևի բակտերիաներ են։



Նկ. 40. Ատամի փառի բակտերիաները։

Նկարեցեք պրեպարատի վրա տեսած բակտերիաների ձևերը։

Աճհրածես իբր և ցյութեր.

1. Մանրադիտակ մեծ խոշորացմամբ (500 և ավելի անգամ), 2. առարկայակիր ապակի, 3. ջուր և ապակե ձողիկ։


Փ ո ը & № 91

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ԽՈՏԱՅՈՒՊԻԿ

Խոտացուլիկի սպորները դանվում են խոտի վրա։ Բայց խոտի վրա լինում են նաև ուրիշ շատ բակտերիաներ։ Խոտացուլիկն առանձնացնելու համար հետևյալ կերպ են վարվում։

Վերցնում են մի քիչ չոր խոտ։ ածում բոժակի մեջ, վրան ջուր ավելացնում և դնում տաք տեղ (8 20°—30°)։

Հետևյալ օրը խոտաջուրն ածում են մաքուր կոլբայի մեջ, վրան ջուր ավելացնում, բերանը բամբակ խցում և եռացնում։ Բամբակի խցանը պետք է այնպես պատրաստել, որ եռացնելու ժամանակ կոլբայի օդը կարողանա անցնել։ Պետք է եռացնել բավական երկար՝ 20 րոպեից մինչև մեկ ժամ։ Եռացնելու ժամանակ բոլոր բակտերիաները և նրանց սպորները ոչնչանում են, իսկ խոտացուլիկի սպորները դիմանում են։ Եթե կոլբան առանց խցանը հանելու դնենք տաք տեղ (8 20°—30°), ապա մեկ կամ երկու օրվա ընթացքում կառաջանան բազմաթիվ խոտացուլիկներ։ Նրանք շարժուն են։ Որոշ ժամանակից հետո խոտաջրի երեսին կկազմվի հասարակ աչքով տեսանելի փառ, որն ամբողջովին խոտացուլիկներից է կազմված։ Փառի մեջ խոտացուլիկները դասավորված են կողք կողքի՝ շարված շղթաների ձևով։ 1000 անգամ մեծացնելու դեպքում փառի բակտերիաների մեջ կարելի է տեսնել նաև սպորները։



Նկ. 41. Խոտացուլիկի փառը 300 անգամ մեծացրած։

Աճհրածես իբր և ցյութեր.

1. Մանրադիտակ, 2. առարկայակիր և ծածկող ապակիներ, 3. բաժակ, 4. կոլբա, 5. բամբակ, 6. խոտ։

Փ ո ը & № 92

ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պարզելու համար, թե ինչ պայմաններ են անհրաժեշտ բակտերիաների աճման և բազմացման համար, կատարենք հետևյալ փորձը։ Պատրաստենք խոտաջուր, ինչպես նկարագրված է նախորդ փորձում։ Վերցնենք վեց փորձանոթ, լցնենք խոտաջրով և բամբակով ծածկենք։ Փորձանոթներից մեկի մեջ ածենք մի քանի կաթիլ աղաթթու կամ ծծմբաթթու, մյուսում, լվացքի սոդա, երրորդում՝

փորձակներ, չորքորդում սող, լուկ հինգերորդ փորձանոթում ոչինչ
չածենք: Դեննք այդ հինգ փորձանոթները տաք տեղ: Վեցերորդ
փորձանոթը դեննք սառը տեղ (Ց 0°—5°):

Մեկ կամ երկու օր անց դիտենք, թե որի մեջ է փառ
առաջացել: Փառ առաջանում է միայն այն փորձանոթի մեջ,
որը զրված էր տաք տեղ և որի մեջ ոչ մի թուչն և այլ չէինք
ածել: Փառը ստուգել մանրադիտակով: Փորձանոթները չխտունե-
լու համար պետք է համարակալել: Դրա համար կան հատուկ մո-
մե մատիաներ, որոնցով կարելի է գրել աղակու վրա:

Այս փորձի հիման վրա նկարագրեք, թե ինչ պայմաններ
են անհրաժեշտ բակտերիաների աճման և բազմացման համար:

Անհրաժեշտ իրեր և նյութեր:

1. Պոտ,
2. կոլբա,
3. բաժակ,
4. ապակե ձողիկ,
5. բամբակ,
6. աղաթթու:
7. ծծմբաթթու,
8. Ֆորմալին,
9. աղ,
10. մանրադիտակ,
11. առարկայակիր և
ձածկող ապակիներ,
12. մոմե մատիտ ապակու վրա գրելու համար:

Փ ո Ր Ճ № 93

ՆԵՆՄԱՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ

Ինչպես հայտնի է, նեխումը կատարվում է որոշ բակտե-
րիաների միջոցով, ամեն նեխման տեղում էլ կարելի է բակտե-
րիաներ տեսնել:

Վերցնենք մի քիչ ձիու աղը և խառնենք մի բաժակ ջրի
մեջ: Երբ աղը կհաստի հատակին պղտոր հեղուկը զգուշությամբ
ածենք մի այլ ամանի մեջ և դեննք մի տաք տեղ (Ց 20°—30°):
Մի քանի օրից հետո մի կաթիլ կաթեցնենք առարկայակիր ապակե
վրա, ծածկենք ծածկապակով և դիտենք: Բակտերիաները պարզ
տեսնելու համար պետք է գործածենք մեծ խոշորացում՝ 500 և
ավել: Մենք կտեսնենք բազմաթիվ և զանազան ձևի բակտե-
րիաներ: Նրանցից մի քանիսը բավական մեծ են: Երևում է, թե
ինչպես որոշ տեսակներ շատ արագ շարժվում են: Ինչպես դա
նրանց իսկական արագությունը չէ, այլ մանրադիտակով մե-
ծացրած. իսկականում բակտերիաները շարժվում են այնքան
անգամ դանդաղ, որքան անգամ խոշորացնում է մանրադիտակը:

Նկարեք բակտերիաների տարբեր ձևերը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր:

1. Մանրադիտակ մեծ խոշորացմամբ,
2. առարկայակիր և ձածկող ա-
պակիներ,
3. բաժակներ,
4. ապակյա ձողիկ,
5. ձիու աղը:

Փ ո Ր Ճ № 94

ՆԵՆՄԱՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻՆ ՕԴ Է ԱՆՀՐԱՃԵՇՑ

Վերցնենք մի քանի հատ ոլոռնի կամ սիսեռի սերմ, ածենք
մի բաժակի մեջ և վրան այնքան ջուր ալիկացնենք, որ սեր-
մերը ծածկվեն: Դեննք բաժակը տաք տեղ մինչև որ սերմերը
սկսեն նեխել: Որքան տեղը տաք լինի (30°), այնքան սերմերը
շուտ կսկսեն նեխել:

Մի քանի օրից հետո, երբ բաժակի ջուրը լավ պղտորված
կլինի, մի կաթիլ դեննք առարկայակիր ապակու վրա, ծածկենք
և դիտենք մանրադիտակով: Մենք կտեսնենք բազմաթիվ մանր
ձողիկներ, որոնք արագ շարժվում են: Որոշ ժամանակից հետո
կնկատենք, որ մի քանիսը սկսում են կանգ առնել: Եթե պրե-
պարատն ուշադրություն դիտենք, կտեսնենք որ նախ կանգ են
առնում կենտրոնում եղած բակտերիաները: Բացի դրանից, մենք
կնկատենք նաև, որ բակտերիաները հավաքվում են ծածկապա-
կու եզրերի մոտ, որտեղ օդն ավելի առատ է և թարմ:

Եթե ծածկապակու տակ օդի բշտիկներ կան, ապա նրանց
շուրջն էլ են հավաքվում բակտերիաները: Այս փորձը ցույց է
տալիս, որ նեխման բակտերիաներին թթվածին է անհրաժեշտ:

Անհրաժեշտ իրեր և նյութեր:

1. Մանրադիտակ մեծ խոշորացմամբ (500 և ավել),
2. առարկայակիր և
ձածկող ապակիներ,
3. բաժակ,
4. ոլոռնի կամ սիսեռի սերմեր:

Փ ո Ր Ճ № 95

ԳԱՑԱԽԱԹԹՎԱՅԻՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ

Հայտնի է, որ եթե գինին բաց դեննք տաք տեղ, նա կը-
քացախի: Այս երևույթը կատարվում է բակտերիաների ազդեցու-
թյան տակ:

Վերցնենք մի բաժակ գինի (ձախու գինու մեջ կա մոտ
12—13° սպիրտ), ածենք շշի մեջ և վրան նույնքան ջուր ավե-
լացնենք: Այժմ վերցնենք երկու կոլբա 250—300 խ. սմ տարու-
ղությամբ: Նոսրացրած գինին ածենք այդ կոլբաների մեջ հա-
վասար, կոլբաներից մեկը խցանով ծածկենք և դեննք հով տեղ,
իսկ մյուսը բերանը բաց կամ նոսր բամբակով ծածկած դեննք
իսկ մյուսը բերանը բաց կամ նոսր բամբակով ծածկած դեննք
տաք տեղ (Ց 20°—30°): Մի քանի օր անց, թե համից և թե հո-
տից կերևա, որ երկրորդ կոլբայում գինին թթվել է: Ստուգել
լակմուսի թղթով:

Երկար թթվեցնելու դեպքում հեղուկի երեսին առաջ կգտնվի փառս Եթե այդ փառից մի քիչ դնենք թարմ գինու վրա, նա ևս կսկսի թթվել և քացախ կդառնա:

Վերցնենք մի կաթիլ քացախած գինի, մի քիչ փառս, առանձին երկու պրեպարատ պատրաստենք և մանրադիտակով դիտենք (մեծ խոշորացումով):

Նույն ձևով վարակենք 5⁰ սպիրտի լուծույթը և դնենք տաք տեղ: Նա ևս կքացախի:

ԱճԻՐԱԾԵՑ ԻՐԵՐ և ԳՅՈՒՔԵՐ.

1. Գինի, 2. սպիրտ, 3. բաժակ, 4. շիշ, 5. կուլաներ 250-300 խ. սմ,
6. կապույտ լակմուսի թուղթ, 7. մանրադիտակ, 8. առարկայակիր և ծածկող ապակիներ:

ԶՐԻՄՈՒՌՆԵՐ

Փ ո Ր Ճ № 96

ԽԼԱՄԻԴՈՄՈՆԱԴ

(Ուսուցչի համար)

Խլամիդոմոնադը միաբջջի, շարժուն, փոքր շրիմուռ է, որը հանդիպում է դանդաղահոս առուներում, լճակներում, գոլթերում: Խլամիդոմոնադ գտնելու համար պետք է վերցնել մի քանի սրվակ և մի բաժակ ու գնալ դեպի այդ ջրերը: Պետք է բաժակով վերցնել ջուրը և նայել լույսի դեմ, եթե ջուրը կանաչավուն է, ապա այդտեղ կարող է խլամիդոմոնադ լինել: Ամեն մի ջրից վերցրած կանաչավուն ջուրը պետք է լցնել առանձին սրվակի մեջ և դասարանում ստուգել, թե որ սրվակում խլամիդոմոնադ կա: Երկար պահել չի կարելի, որովհետև այդ միաբջջի շրիմուռները սրվակի մեջ 1—2 օրվա ընթացքում ոչնչանում են:

Խլամիդոմոնադը շարժվում է մտրակների ուղղությամբ իր մարմնի առանցքի շուրջը պտտվելով: Նրա կազմութունը պարզ երևում է մանրադիտակով դիտելիս: Երևում են քրոմատոֆորը, կորիզը, վակուոլը:

Նկարել խլամիդոմոնադը:

ԱճԻՐԱԾԵՑ ԻՐԵՐ և ԳՅՈՒՔԵՐ.


1. Բաժակ, 2. սրվակներ, 3. մանրադիտակ մեծ խոշորացմամբ, 4. առարկայակիր և ծածկող ապակիներ, 5. ազակե ձողիկ:

Փ ո Ր Ճ № 97

ՊԼԵՎՐՈՆԿԿ

Ջրիմուռները ջրային բույսեր են: Նրանց մեծ մասը միշտ էլ ջրում է ապրում, սակայն կան և «ցամաքային» ջրիմուռներ, որոնք ապրում են խոնավ տեղերում՝ ծառերի, դանկապատի, աղյուսի, քարի, հողի վրա: Վերցնենք կանաչ ջրիմուռներ (դանակի կամ մուրճի օգնությամբ) այն նյութի հետ, որի վրա նրանք ապրում են:

Սկայլեղի կամ դանակի օգնությամբ զգուշությամբ քիչ ջրիմուռ փոխադրենք առարկայակիր ապակու վրա, մի կաթիլ ջուր ավելացնենք, ծածկենք և դիտենք մանրադիտակով: Մենք կտեսնենք անշարժ կանաչ բջջիներ՝ մեկական, երկուական, երեքական կամ չորսական իրար հետ: Այս ջրիմուռը կոչվում է պլևրոկոկ: Նա չունի մտրակներ և անշարժ է: (Նկարը տես բուսաբանության դասագրքում):



Նկ. 42. Խլամիդոմոնադը խիստ մեծացրած. 1. Կորիզ, 2. քրոմատոֆորը, 3. վակուալը:

ԱճԻՐԱԾԵՑ ԻՐԵՐ և ԳՅՈՒՔԵՐ.

1. Պլևրոկոկի փառ ծառի կեղևի կամ հողի վրա, 2. դանակ, 3. մուրճ, 4. սկայլեղ, 5. մանրադիտակ, 6. առարկայակիր և ծածկող ապակիներ, 7. ջուր և ազակե ձողիկ:

Փ ո Ր Ճ № 98

ՃՅՈՒՂԱՎՈՐ ԹԵԼԱԶԵՎ ԶՐԻՄՈՒՌ ԿԼԱԴՈՖՈՐԱ

Մեզ մոտ առուներում և կանգնած ջրերում ամենատարածված թելածե ջրիմուռը կլադոֆորան է: Նա ճյուղավոր է, մի ծայրից կպած է քարին կամ ստորջրյա այլ առարկայի և ձգվում է հոսանքի հետ: Կանգնած ջրերում նա ամպաձև կանաչ մասսա է

կազմում: Մասներով արորելիս նա բավական կողիտ է թվում համեմատած հետեյալ ջրիմուռի՝ սպիրոգիրայի հետ (Տես փորձ № 99): Մկրատով կամ պինդեղով մի քիչ կտրենք կլադոֆորայի թելերից և պրեպարատ պատրաստենք: Մանրադիտակով դիտենք նախ փոքր խոշորացմամբ (60—100 անգամ), ապա ավելի մեծացրած (300—400 անգամ):



Նկ. 43. Կլադոֆորան փոքր խոշորացմամբ:

Փոքր խոշորացմամբ տեսնում ենք, որ կանաչ ճյուղավոր ջրիմուռը կազմված է ձգված բջիջներից: Ամեն մի բջիջ ունի իր առանձին թաղանթը:

Մեծ խոշորացմամբ պարզ երևում է բջջի կազմությունը, առանձին երևում են թաղանթը, բազմաթիվ կորիզները և ցանցաձև մեծ քրոմատոֆորը:

Նկարեցեք կլադոֆորան փոքր խոշորացմամբ և նրա բջիջը մեծ խոշորացմամբ:

ԱՆՏՐԱԾԵՑ ԻՐԵՐ և ԵՅՈՒՔԻՐ.

1. Կլադոֆորա ջրիմուռ մի բաժակ ջրի մեջ, 2. մկրատ, 3. պինդեղ, 4. մանրադիտակ, 5. առարկայակիր և ծածկող ապակիներ, 6. բաժակով ջուր և ապակե ձողիկ:

Փ ո Ր Ճ № 99


ԹԵԼԱԶԵՎ ԶՐԻՄՈՒՌ ՍՊԻՐՈԳԻՐԱ

Մեր կանգնած և դանդաղ հոսող ջրերում լայն տարածված է նաև մի այլ թելաձև ջրիմուռ՝ սպիրոգիրան: Այս ջրիմուռը մասներով շփելիս շատ ավելի նուրբ է, քան կլադոֆորան և մետաքսի տպավորություն է թողնում: Բացի դրանից, սպիրոգիրան կազմ է ունի իրի, այլ ազատ է ջրի մեջ: Նրա գույնը բաց կանաչ է:

Մի քիչ սպիրոգիրայի թել կտրենք մկրատով, դնենք առարկայակիր ապակու վրա, մի կաթիլ ջուր ավելացնենք, ծածկենք և դիտենք նախ փոքր և ապա մեծ խոշորացմամբ: Մենք կտեսնենք, որ սպիրոգիրայի թելերը ճյուղավորված չեն: Մեծ խոշորացմամբ կտեսնենք, որ բջիջն ունի իր առանձին թաղանթը,

մեկ հատ կտրիլ և մեկ կամ մի քանի կանաչ քրոմատոֆոր, որոնք սպիրալաձև ոլորված են:

Նկարենք սպիրոգիրայի թելը և մեկ բջիջը խոշորացրած:



Նկ 44. Սպիրոգիրայի բջիջը մեծ խոշորացմամբ:

ԱՆՏՐԱԾԵՑ ԻՐԵՐ և ԵՅՈՒՔԻՐ.

1. Սպիրոգիրա, 2. մանրադիտակ, 3. առարկայակիր և ծածկող ապակիներ, 4. ապակե ձողիկ, 5. մկրատ կամ պինդեղ:

Փ ո Ր Ճ № 100

ԶՍԱՍԶԱՆ ԶՐԻՄՈՒՌՆԵՐ

Զրիմուռները շատ բազմազան են: Նրանց մի քանի ձևերը տեսնելու համար պատրաստենք պրեպարատ տիպի վրա եղած կանաչ խավից: Այդտեղ մենք կտեսնենք շատ տեսակի ջրիմուռներ, որոնցից հաղիպում են.

1. Կապտականաչ թելիկներ, որոնք շարժվելու հատկություն ունեն:
2. Կանաչ նոր լուսնի ձևի միաբջիջ ջրիմուռներ:
3. Քառաբջիջ 4 եղջյուրով կանաչ բջջաթմբեր (զաղութներ):
4. Նավակաձև ղեղին կամ բաց դարչնագույն, միաբջիջ երկփեղկ ջրիմուռներ, որոնք նույնպես կարողանում են ինքնուրույն շարժվել զանազան ուղղությամբ:
5. Հաճախ կարելի է հանդիպել նաև էվգլենային, որը մեկ մտրակով կանաչ միաբջիջ ջրիմուռ է: Նրա մարմինը ջրի մեջ կարող է որդի նման կծկվել և գալարվել: Գրգռելիս նա կծկվում և ընդունում է գնդի ձև: Էվգլենան հաճախ այնքան է բազմաչուր (գարնանը), որ կանգնած ջուրը ստանում է մուգ կանաչ նուր (գարնանը), որ կանգնած ջուրը ստանում է մուգ կանաչ

գույն: նա առանձնապես լավ է բազմանում այն ջրերում, որոնց մեջ նեխում է կատարվում: Էվգլենայի բջջի մեջ կա մի կարմիր բիծ, որով նա զգում է լույսը: Մթնացրած ամանում էվգլենան լողում է դեպի լույսը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.


1. Տիղմ կանգնած ջրերից, 2. մանրադիտակ, 3. առարկայակիր և ծածկող ապակիներ, 4. ապակե ձողիկ:

Փ ո Ր ձ № 101

ՍՊԻՐՈԳԻՐԱՅԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

(Ուսուցչի համար)

Սպիրոգիերայի բազմացումը դիտելու համար, պետք է նրան դնել այնպիսի պայմաններում, որ սկսի սևուկան բջջիներ առաջացնել:



Իրա համար պետք է պատրաստել 2—4% շաքարի լուծույթ, մեջն ամել սպիրոգիերայի շատ թելեր և ամանը դնել արևի տակ: Մի քանի օրից կնկատենք, որ թելերը դառնում են գանգուր:

Այդ ժամանակ մկրատով մի քիչ թելեր կտրենք և պրեպարատ պատրաստենք: Մանրադիտակի օգնությամբ սկզբում փոքր և ապա մեծ խոշորացմամբ դիտելով կտեսնենք, որ սպիրոգիերայի թելերը զույգ-զույգ միացել են, որովհետև իրար դիմաց գտնվող բջջիների պատերն արտափքվել են և իրար կպել: Հետո միացած տեղերում նրանց մեջ անցք է բացվում և մի բջջի պարունակությունն անցնում է դիմացի բջջի մեջ և միաձուլվում նրա պարունակության հետ: Մտացվում են զիգոտներ կամ հանգստացող սպորներ:

Նկ. 45. Սպիրոգիերայի հանգստացող սպորների առաջացումը:

Այս պրոցեսի բոլոր աստիճանները կարելի է տեսնել պրեպարատի վրա:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Շաքարի լուծույթ (2—4%), 2. սպիրոգիերա, 3. մանրադիտակ, 4. առարկայակիր և ծածկող ապակիներ, 5. մկրատ և պինցետ:

Ս Ն Կ Ե Ր


Փ ո Ր ձ № 102

ՍՏԱՆԱԼ ՍՊԻՏԱԿ ԲՈՐԲՈՍ

Վերցնենք ձիու թարմ աղբ, ածենք կավե պնակի մեջ (կարելի է ափսեի մեջ), փայտե ձողիկով կամ սկալպելով խառնենք և հարթենք: Ապա ձիու աղբը թրջենք, ծածկենք ապակով և դրենք տաք տեղ:

Երեք-չորս օրից հետո ձիու աղբը կծածկվի բորբոսի բարակ թելիկներով: Այնուհետև կերևան նաև մուգ գույնի փոքր գնդիկներ մեկ և ավել սանտիմետր երկարությամբ կոթերի վրա:

Պինցետով վերցնենք քիչ բորբոս մուգ գնդիկների հետ և պատրաստենք պրեպարատ: Ծածկող ապակու տակ մուգ գնդիկ-



Նկ. 46. Սպիտակ բորբոս. 1. սնկի մարմինը սպորանոթներով, 2. սպորանոթը սպորներով, 3. հանգստացող սպոր:

ները կապիթեն և նրանցից կթափվեն մեծ քանակութեամբ մանր սպորներ: Այդ գնդիկները սպիտակ բորբոսի սպորանոթներն են:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Կովե պնակ կամ ափսե, 2. ապակե կափարիչ, 3. ձիու թարմ աղբ, 4. մանրադիտակ մեծ խոշորացմամբ. 5. առարկայակիր և ծածկող անակիներ, 6. ապակե ձողիկ, 7. պինցետ:

Փ ո Ր Ճ № 103

ԱՃԵՑՆԵԼ ՍՊԻՏԱԿ ԲՈՐԲՈՍԸ ՀԱՅԻ ՎՐԱ.

Վերջնենք ժամացույցի ապակի, մեջը քիչ ջուր անենք, ապա պինցետով անկենք մուկորի սպորանոթները որոշ ժամանակ խառնենք ջրի մեջ և թելերը հեռացնենք: Այժմ վերջնենք երկու միանման կտոր հաց, մի կտորը թրջենք սպորախառը ջրով, իսկ մյուս կտորը՝ մաքուր ջրով: Հացի կտորներն առանձին-առանձին դնենք ապակե ամանների մեջ, ծածկենք և տեղավորենք տաք տեղ:

Երկու կամ երեք օրից հետո սպորախառը ջրով թրջած հացը կծածկվի բորբոսի խիտ թելերով, իսկ մաքուր ջրով թրջածը համարյա չի ծածկվի: Որոշ ժամանակից հետո կբորբոսի նաև մաքուր ջրով թրջած հացը: Մա ցույց է տալիս, որ մուկորի սպորները տարածված են ամեն տեղ. նրանք կան օդի մեջ և այդտեղից նստում են զանազան առարկաների վրա:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մուկորի սպորանոթներ, 2. ժամացույցի ապակի, 3. հաց, 4. բաժակներ կամ կավե պնակներ, 5. ջուր, 5. պինցետ:

Փ ո Ր Ճ № 104

ԴԻՏԵԼ ՄՈՒԿՈՐԻ ՍՊՈՐԻ ԾՆԵԼԸ

(Ուսուցչի համար)

Պատրաստենք 5% թելատինի և 10% շաքարի լուծույթ, ինչպես նկարագրված է № 80 փորձում: Վերջնենք մեկ գրամ թելատին կտրտենք և անենք 20 խոր. ամ նախապես եռացրած ջրի մեջ: Կես ժամ հետո, երբ թելատինը կուռչի, ավելացնենք 2 գրամ շաքար և ամանը գնենք եռացրած ջրի մեջ և ապակե ձողիկով խառնենք:

Երբ որ հեղուկը կսառչի, ձողիկով կաթեցնենք առարկայակիր ապակու վրա: Մի քանի րոպեից հետո թելատինը բոլորովին կուռչի և կամրանա:

Այժմ մուկորի մի քանի սպորանոթ խառնենք մի կաթիլ ջրի մեջ ժամացույցի ապակու վրա: Ասեղը թաթախենք այդ ջրի մեջ և զգուշութեամբ քսենք սառած թելատինի մակերեսին: Այսպես վարակենք մի քանի պրեսպարատ և դնենք խոնավ կամերայի մեջ: Տաք տեղում սպորները շուտով կակսեն ծղել և կառաջացնեն բարակ թելերից կազմված ոստայնաձև մարմին, որը կոչվում է սնկի մարմին կամ միցելիում:

Ժամանակ առ ժամանակ մանրադիտակով նայելով կարելի է տեսնել սպորի պայթելը, ծլելը, միցելիումի դարգացումը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մուկորի սպորանոթներ, 2. թելատին, 3. շաքար, 4. կտրա, 5. աման եռացրած ջրով, 6. ապակե ձողիկ, 7. առարկայակիր ապակիներ, 8. խոնավ կամերա, 9. մանրադիտակ:

Փ ո Ր Ճ № 105

Պ Ի Լ Ո Բ Ո Լ Ո Ի Ս

Եթե շարունակենք ձիու աղբի վրա դրած փորձի դիտողությունը (Փորձ № 102) մենք կտեսնենք, որ որոշ ժամանակից հետո մուկորը ոչնչանում է և առաջ են գալիս նոր սնկեր:

Մուկորից հետո առաջանում է պիլոբոլուս սունկը: Սա էլ մուկորի նման բարակ թելերից կազմված մարմին ունի: Հաստակ կազմութուն ունի պիլոբոլուսի սպորանոթը և նրա ոտքը: Սպորանոթը սև, փոքր մարմին է, որը գտնվում է կոթի ծայրին: Սպորանոթի տակը կոթը գնդաձև ուռած է, երբ կոթը շատ ջուր է ծծում և ուռչում է, այդ ժամանակ սպորանոթը պոկվում է և նետվում: Այս ձևով են տարածվում պիլոբոլուս սնկի սպորները: Պիլոբոլուսը պետք է դիտել խոշարացույցով:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Ձիու աղբ պիլոբոլուսներով, 2. խոշորացույց, 3. պինցետ, 4. առարկայակիր ապակիներ:

Փ ո Ր Ճ № 106


ՊԻԼՈՐՈԼՈՒՍԻ ՍՊՈՐԱՆՈՐՆԵՐԸ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ ԵՆ ԹԵԲՎՈՒՄ

Վերջնենք մի փոքր ամանում ձիու աղբ, սպասենք մինչև որ պիլոբոլուսներ առաջանան ու դնենք հեխոտորոպիկ արկղի մեջ:

Արկղի անցքին ամրացնենք մի կտոր թափանցիկ թուղթ, որի վրա թիրախի ձևով շրջաններ գծենք: Իրա համար պետք է վերցնել մի կտոր թափանցիկ թուղթ, կարկինի սուր ծայրը դնել մեջտեղը և մատիտով մի փոքր շրջանագիծ գծել: Այլա քիչ բացել կարկինը և նույն կենտրոնից մի փոքր ավելի մեծ շրջանագիծ քաշել: Այսպիսով գծել 5—6 շրջանագիծ նույն կենտրոնից: Այս թուղթն ամրացնել արկղի անցքին ներսի կողմից այնպես, որ կենտրոնն ընկնի անցքի ճիշտ մեջ տեղը:

Մեկ օր անց՝ ժամը 10-ին կամ 11-ին բացենք արկղը:

Մենք կտեսնենք, որ պիլոբուլուսի սպորանոթները թեքված են դեպի անցք: Թղթի վրա մենք կտեսնենք բազմաթիվ սև կետեր: Իրանք սպորանոթներ են: Նրանք ավելի խիտ են միջին շրջանագծի մեջ: Դեպի եզրերը նրանք ավելի նոսր են դասա-



Նկ. 47.

Պիլոբուլուսը ֆոտոտրոպիկ արկղում: վորված:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մի աման ձիու աղբ պիլոբուլուսներով,
2. թափանցիկ թուղթ,
3. կարկին,
4. հեղիաբուսիկ արկղ:

Փ ո ը ձ № 107

ԶՐԱՐՈՐԲՈՍԸ ՄԵՌԱՄ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՎՐԱ

Մի բաժակ ջրի մեջ զցենք մի քանի հատ մեռած միջատներ՝ ճանճեր, բզեզներ և դնենք տաք տեղ:

Երեք չորս օրից հետո կտեսնենք, որ միջատները ծածկվել են ինչ որ սպիտակ փառով, որը բորբոսի շատ նման է: Իա սապրոբզնիա կոչված սուսնկն է, որը մեռած միջատների կամ որդերի վրա է ապրում:

Պինցետով վերցնենք սնկի մի մասը և պրեպարատ պատրաստենք: Մանրադիտակով մենք կարող ենք տեսնել, որ ջրաբորբոսը նույնպես կաղմված է բարակ թելիկներից: Նրա որոշ թելերի ծայրի մասն ուռած է, որի մեջ գտնվում են մլուրակավոր մանր սպորներ: Զգուշուժյամբ սեղմենք ծածկապակին. մենք կտեսնենք, թե ինչպես դուրս են գալիս և լողում

այլ սպորները. նրանք շարժուն են: Այդպիսի սպորները կոչվում են զոոսպոր:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Բաժակ,
2. մեռած միջատներ,
3. մանրադիտակ,
4. առարկայակիր և ծածկող ապակիներ,
5. պինցետ,
6. սկալպեր:

Փ ո ը ձ № 108

Շ Ա Ք Ա Ր Ա Ս Ն Կ Ե Ր

Շաքարասնկերը միաբջիջ սնկեր են և հասարակ աչքով անտեսանելի: Նրանք շատ տարածված են: Առանձնապես շատ լինում են պտուղների վրա:

Շաքարասնկերը տեսնելու համար վերցնենք մամլած շաքարասնկեր, որը կարելի է գնել դեղատանը (կոչվում է նաև «գրոժ»): Մի կտոր դնենք ափսի մեջ, վրան ջուր ավելացնենք և արորենք այնքան, որ խյուս դառնա:

Այդ խյուսից մի կաթիլ դնենք առարկայակիր ապակու վրա, ծածկենք և դիտենք մանրադիտակով: Մենք կտեսնենք կլոր անգույն բջիջներ, դրանք շաքարասնկերն են: Շաքարասնկերի բջիջները շատ արագ բազմանում են՝ բողբոջներ տալով:



Նկ. 48

Շաքարասնկեր

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մամլած չոր շաքարասնկեր,
2. ափսի,
3. ջուր,
4. մանրադիտակ,
5. առարկայակիր և ծածկող ապակիներ,
6. ապակե ձողիկ:

Փ ո ը ձ № 109

Խ Մ Ո Ր Ո Ի Մ

Վերցնենք հիսուն գրամ մամլած չոր շաքարասունկ և արորենք քիչ ջրի մեջ: Այնուհետև վերցնենք նույնպես եռացրած և սառեցրած կես լիտր գոլ ջուր, մեջը լուծենք մի գդալ մեղր կամ շաքար և ավելացնենք սրորած շաքարասունկը: Լավ խառնելուց հետո այդ հեղուկն ածենք երեք սրվակների մեջ, բերանը բամբակով խցենք և դնենք մեկը տաք և մուլթ տեղ, մյուսը՝ տաք և լույս տեղ, երրորդը՝ մուլթ և ցուրտ տեղ (կարելի է ուղղակի սառույցի վրա դնել):

Ժամանակ առ ժամանակ դիտենք, թե ինչ փոփոխություն

ներ են կտատարվում սրվակների մեջ: Ո՞ր սրվակի մեջ և երբ է հեղուկը պղտորվում: Կազ առաջանում է, թե ոչ: Փարձեցնք, թե որ սրվակի մեջ է փոխվում քաղցր համը և ինչ համ ու հոտ է ստանում:

Սմորման ժամանակ՝ տաք տեղ դրված հեղուկի մեջ շաքարանկերը սկսում են ապրել և բազմանալ: Նրանք քայքայում են շաքարը և առաջացնում են սպիրտ և ածխածին գազ, որը պղպղակների ձևով դուրս է գալիս հեղուկից: Միաժամանակ առաջանում է նաև ջերմություն, որը կարելի է ստուգել ձեռքով: կամ ջերմաչափով:

Մանրադիրտակով դիտենք, թե ինչպես են բազմանում շաքարանկերը:

Աճեցման իրեր և նյութեր.

1. Չոր մամլած շաքարանկեր,
2. շաքար կամ մեղր,
3. սրվակներ,
4. մանրադիրտակ,
5. առարկայակիր և ծածկող ապակիներ,
6. ապակե ձողիկ,
7. Ջերմաչափ:

Փ ո ը & № 110

ԳԻՏԵՆՔ ՄՐԻԿԱՍՆԿԻ ԵՎ ԺԱՆԳԱՍՆԿԻ ՍՊՈՐՆԵՐԸ

Հավաքենք մրիկով և ժանգով վարակված հացաբույսերի հասկեր, հուրաններ և տերևներ:

Ինչպես հայտնի է մրիկանների սպորները մեր հացաբույսերի վրա զարգանում են սերմնարանի մեջ, որի հետևանքով ըստացվում է մրիկ: Մրիկը շարժենք առարկայակիր ապակու վրա մի կաթիլ ջրի մեջ, հեռացնենք հատիկի կեղևը, պրեպարատը ծածկենք և դիտենք փոքր խոշորացմամբ: Մենք կտեսնենք բազմաթիվ գնդաձև սպորներ, որոնք ունեն հաստ թաղանթ: Այդ սպորները կարելի է ծեցնել շաքարի և ժելատինի լուծույթի մեջ առարկայակիր ապակու վրա:

Ժանգը բոլորովին այլ հիվանդություն է: Ժանգասունկը մի քանի տեսակ սպորներ է առաջացնում: Հացաբույսի տերևների վրա սկզբում առաջանում են ամառային միաբջիջ սպորներ, այդ ժամանակ տերևի վրա երևում են ժանգագույն (կարմրագույն) բծեր: Ավելի ուշ առաջանում են երկբջիջանի ձմեռային սպորներ, այդ ժամանակ նույն բծերը սևանում են:

Ասեղի կամ դանակի ծայրով քերենք ամառային և ձմեռային սպորներն առանձին առարկայակիր ապակիների վրա, մեկական կաթիլ ջուր ավելացնենք, ծածկենք և դիտենք փոքր խոշորացմամբ: Մենք կտեսնենք բազմաթիվ գնդաձև սպորներ, որոնք կարելի է ստուգել ձեռքով: կամ ջերմաչափով:

Նկարենք մրիկանների և ժանգասունկի սպորները:

Աճեցման իրեր և նյութեր.

1. Մրիկով վարակված հատիկներ,
2. ժանգով վարակված տերևներ և ցողուններ,
3. մանրադիրտակ,
4. առարկայակիր և ծածկող ապակիներ,
5. տեղ կամ դանակ:


Փ ո ը & № 111

ԳԼԽԱՐԿԱՎՈՐ ՍՆԿԵՐ

Գլխարկավոր սնկերը տարածված են ամենուրեք, որտեղ կան փոսոց նյութեր: Նրանք առանձնապես շատ են լինում գոմաղբով կամ փիթող բուսական մնացորդներով հարուստ խոնավ, տեղերում, մանավանդ անձրևներից հետո:

Գլխարկավոր սնկեր կարելի է ստանալ գոմաղբի վրա: Եթե մուկոթի և պելլուրոլուսի համար դրած գոմաղբը մի քանի օր էլ պահենք, նրա վրա կառաջանան փոքր, նուրբ գլխարկավոր սնկեր, որոնք կոչվում են կոպրինուս կամ գոմաղբասունկ:

Դոմաղբասունկի մարմինը նույնպես կազմված է բարակ ոստայնանման թելիկներից, որոնք տարածված են գոմաղբի մեջ: Գլխարկավոր մասը նրա բազմացման օրգանն է: Կոճղի վրա գտնվում է հովանոցաձև



Նկ. 40. Գլխարկավոր սնկի թիթեղի լայնական հատվածը. 1. թիթեղ, 2. սպորներ:

գլխարկը, որի տակը կան բազմաթիվ թիթեղներ: Գլխարկը կոճղի հետ միասին կոչվում է պրոդամարին: (Նկարը տես բուսաբանության դասագրքում):

Մանրադիրտակով դիտենք որևէ մեծ գլխարկավոր սնկի թիթեղի լայնակցած հատվածը պատրաստի պրեպարատի վրա: Նրա վրա մենք կտեսնենք բազմաթիվ մանր սպորներ:

Նկարենք գլխարկավոր սնկի պոդամարմինը և թիթեղի հատվածը:

Անհրաժեշտ իրեր և նյութեր:

1. Գլխարկավոր սնկեր,
2. Թիթեղի լայնական հատվածի պրեպարատ,
3. մանրադիրտակ,
4. ձիու դոմաղբ:

Փ ո ը ձ № 112

ՄՏԱՆԱԼ ԳԼԽԱՐԿԱՎՈՐ ՄՆԿԻ ՍՊՈՐՆԵՐ

Գլխարկավոր սնկի սպորները ստանալու համար պետք է ընտրել որևէ սնկի թարմ պտղամարմին, գլխարկը զգուշութամբ անջատել և դնել մի թիթեղ մաքուր թղթի վրա՝ թիթեղները դեպի ցած: Թուղթը սնկի հետ դնել ափսեի վրա և ծածկել բաժակով, կամ որևէ այլ ամանով, որպեսզի տակը խոնավ և ապահով լինի:

Հետևյալ օրը բարձրացնենք բաժակը և զգուշութամբ վերցնենք սնկի գլխարկը: Մենք կտեսնենք, որ թիթեղների արանքների դժով բազմաթիվ սպորներ կան թափված: Եթե ուզում ենք, որ սպորները կպած մնան թղթի վրա, պետք է թուղթը նախապես ծածկենք սոսնձի (զուսիարաբիկ) նոսր հեղուկով:

Սոսնձած թղթի վրա ստացած սպորների տիպը կարելի է չորացնել, երեսից ծածկել բարակ թղթով և պահել զբքի մեջ (ավելի լավ է ապակու տակ):

Դանակի ծայրով վերցնենք թղթի վրա թափված սպորներին, փոխադրենք առարկայակիր ապակու վրա մի կաթիլ ջրի մեջ և խառնենք: Ծածկենք և դիտենք մանրադիրտակով:

Նկարեցեք սնկի սպորները:

Անհրաժեշտ իրեր և նյութեր:

1. Մսկի պտղամարմին,
2. սոսնձած թուղթ,
3. ափսե, բաժակ,
4. մանրադիրտակ,
5. առարկայակիր և ծածկող ապակիներ,
6. ապակե ձողիկ,
7. բարձակով ջուր:


ՔԱՐԱՔՈՍԵՐ

Փ ո ը ձ № 113

ՔԱՐԱՔՈՍԵՐ ԿԱԶՄՎԱԾ Է ՍՈՒՆԿԻՑ ԵՎ ԶՐԻՄՈՒՌԻՑ

Քարաքոսի մարմնի կազմութունն ուսումնասիրելու համար կարելի է վերցնել բոլոր տեսակները, սակայն ամենից հարմարն են թերթաձև քարաքոսերը. սրանց մարմինը սափակ է: Վերցնենք մի այսպիսի թերթաձև քարաքոս, ածելիով լայնական

քարակ հատվածներ պատրաստենք և գցենք ջրի մեջ: Ընտրենք այդ հատվածներից ամենաբարակը, տեղափոխենք առարկայակիր սաղակու վրա մի կաթիլ ջրի մեջ, ծածկենք և դիտենք մանրադիրտակով: Մկզբում փոքր և ապա մեծ խոշորացմամբ դիտելով կարելի է տեսնել, որ քարաքոսի մարմինը կազմված է շատ բարակ սպիտակ կամ թափանցիկ թելիկներից և նրանց մեջ ցրված կանանչ գնդաձև բջիջներից: Թափանցիկ թելիկները պատկանում են սրնկին, իսկ կանանչ գնդիկները ջրիմուռի բջիջներ են:



Նկ. 50 Քարաքոսի լայնական հատվածը. 1- ջրիմուռի բջիջները, 2. սնկի թելիկները:

Հաճախ այսպիսի պրեպարատի մեջ օդի բշտիկ է լինում, որը խանգարում է դիտելուն: Օդը հեռացնելու համար պետք է պրեպարատը տաքացնել սպիրտայրոցի վրա (զգուշանալ, որ չայրվի):

Թերթաձև քարաքոս կարելի է դնել անտառներում ծառերի վրա և խոնավ տեղերում մեծ քարերի վրա:

Անհրաժեշտ իրեր և նյութեր:

1. Չանազան քարաքոսեր,
2. թերթաձև քարաքոս,
3. ածելի,
4. սաղակու կայակիր և ծածկող ապակիներ,
5. ժամացույցի սաղակի:

Փ ո ը ձ № 114

ՔԱՐԱՔՈՍԻ ԶՐԻՄՈՒՌԻՑ ԱՆՁԱՍԵԼ ՄՆԿԻՑ

Ապացուցելու համար, որ քարաքոսի սպիտակ կամ թափանցիկ թելերը և կանանչ բջիջները տարբեր բույսերի են պատկա-

նում, կարելի է նրանց անջատել. անջատ վիճակում էլ նրանք պետք է շարունակեն ապրել:

Վերցնենք նախապես եռացրած և սրացրած ջուր և ածենք երկու մաքուր բաժակների մեջ: Այնուհետև վերցնենք որևէ քարաքոս, լվանանք նախապես եռացրած ջրով, մկրատով մանր կտրտենք կամ չորացնենք և մանրենք ձեռքով: Մանրած քարաքոսը ածենք բաժակներից մեկի մեջ և բերանը ծածկենք: Ստուգելու համար վերցնենք որևէ կանաչ բույսի տերև, նույնպես լվանանք, կտրտենք ածենք մյուս բաժակի մեջ և ծածկենք: Երկու բաժակներն էլ որևէ ձևով նշան անենք (մոմե մատիտով, սուռով կամ թղթեր կալցնելով):

Մի քանի օր անց մենք կտեսնենք որ երկու բաժակում էլ բույսերը սկսում են քայքայվել: Ավելի ուշ կնկատենք, որ այն բաժակում, որտեղ քարաքոսի կտորներն էին ածած, պատի վրա կանաչ ջրիմուռներ կառաջանան, իսկ մյուս բաժակում չեն առաջանա: Զրի մեջ քարաքոսը քայքայվում է, նրա սնկային թելիկները ոչնչանում են, իսկ ջրիմուռի բջիջները շարունակում են իրենց կյանքը ջրում: Այս փորձը տեղում է մոտավորապես 20—30 օր:

Երբեմն ավելի ուշ կանաչում են նաև տերև պարունակող բաժակի պատերը, այստեղ ջրիմուռներն ընկնում են օդից կամ տերևի հետ:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Քարաքոս և տերևներ, 2. բաժակներ, 3. ապակե թիթեղներ

Մ Ա Մ Ո Ւ Ռ Ն Ե Ր

Փ ո Ր Ճ № 115

Մ Ա Մ Ո Ւ Ռ Ի Կ Ա Ջ Մ Ա Թ Յ Ո Ւ Ն Ը

Մամուռները համարյա ամեն տեղ էլ տարածված են: Մեր փորձի համար պետք է փնտրել խոնավ տեղերում աճող լայնատերև մամուռներ: Ուսումնասիրենք մամուռի օրգանները՝ տերևը, ցողունը և արմատի դեր կատարող մաղիկները:

Պինցետով կտրենք մի տերևիկ, պրեպարատ պատրաստենք և դիտենք նախ խոշորացույցով ապա մանրադիտակով: Մենք կտեսնենք, որ մամուռի տերևը շատ պարզ կազմութուն ունի: Նա կազմված է միայն մի շերտ բջիջներից: Տերևի միջին գծով

հիմքից մինչև գագաթը դասավորված են նեղ և երկար բջիջներ, որոնք միմյանից տերևաջղի են նմանում: Մյուս բջիջներին երկարութունը և լայնութունը համարյա հավասար են իրար: Նույնպիսի պարզ կազմութուն ունի նաև ցողունիկը, որը պետք է դիտել պատրաստի պրեպարատի վրա: Ցողունիկի հիմքում գտնվում են բարակ մաղիկներ, որոնք արմատի դեր են կատարում: Նրանք կոչվում են ուղղիկներ: Ռիզոյիդները մի շարք բջիջներից կազմված անզույն ճյուղավոր թելիկներ են:



Նկ. 50. Մամուռ

Անհրաժեշտ իրեր և նյութեր.


1. Մամուռներ, 2. խոշորացույց, 3. մանրադիտակ, 4. պինցետ, 5. անարկայակիր և ծածկող ապակիներ, 6. բաժակով ջուր, 7. ապակե ձողիկ:

Փ ո Ր Ճ № 116

Մ Ա Մ Ո Ւ Ռ Ի Կ Ա Ջ Մ Ա Ց Մ Ա Ն Օ Ր Գ Ա Ն Ն Ե Ր Ը

(Ուսուցչի համար)

Մամուռ բույսի գագաթին առաջանում են հատուկ արական և իգական օրգաններ: Այդ օրգանները տեսնելու համար պետք է մամուռները հավաքել և խոշորացույցով դիտել: Այդ ժամանակ դեռ երկար կոթուններով սպորանոթներ չկան: Մենք կտեսնենք երկու տեսակի օրգաններ՝ գնդաձև կամ երկարավուն ձվաձև արական և երկար վղով շրձաձև իգական:



Նկ. 51. Մամուռի բազմացման օրգանները. ձախ կողմը՝ իգական, աջ կողմը՝ արական:

Մատեներով սեղմենք մամուռի գազաթիւ, որտեղ հտնվում են բազմացման օրգանները, նրա վրա կերևա հեղուկի մի փոքրիկ կաթիլը Փոխադրենք այդ կաթիլը առարկայակիր ապակու վրա, ծածկենք և մանրադիտակով նայենք: Եթե պրեպարատը հաջող է պատրաստված, մենք կտեսնենք մամուռի բազմացման արական բջիջները, որոնք նեղ ու երկար ձև ունեն, ոլորված են և ծայրին կրում են մի զույգ մտրակ:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մամուռներ, 2. խոշորացույց, 3. պինցետ, 4. մանրադիտակ, 5. առարկայակիր և ծածկող ապակիներ:

Փ ո Ր Ճ № 117

ՄԱՄՈՒՌԻ ՍՊՈՐԱՆՈՐԸ

(Ուսուցչի համար)

Մամուռի գազաթին գտնվող բազմացման օրգանների մեջ կատարված բեղմնավորութունից հետո՝ իզական օրգանից առաջինում է սպորանոթը երկար կամ կարճ կոթունի վրա: Հավաքենք սպորանոթով մամուռներ և խոշորացույցով դիտենք սպորանոթի կազմութունը: Նախ կտեսնենք, որ սպորանոթը ծածկված է մի թասակով: Պինցետով զգուշությամբ հեռացնենք թասակը: Սպորանոթն ունի նաև երկրորդ ավելի փոքր կափարիչ: Ապա կտեսնենք, որ սպորանոթի բերանի շուրջը կան բարակ երկար մասեր, որոնք փակում են սպորանոթի բացվածքը: Եթե սպորանոթը դնենք արևի տակ կամ այլ ձևով չորացնենք՝ այդ թելանման մասերը կուղղվեն և սպորանոթի բերանը կբացվի: Իսկ եթե շնչենք սպորանոթի վրա, խոնավութունից այդ մասերը դեպի ներս կթեքվեն և կփակեն սպորանոթը:



Նկ. 52. Մամուռի սպորանոթը:

վում քամու միջոցով:

Հասունացած սպորանոթն ասեղով պատռենք առարկայա-

կիր ապակու վրա, մի կաթիլ ջուր ավելացնենք, ծածկենք և դիտենք մանրադիտակով:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մամուռի հասունացած սպորանոթներ, 2. պինցետ, 3. խոշորացույց, 4. մանրադիտակ, 5. առարկայակիր և ծածկող ապակիներ:

Փ ո Ր Ճ № 118

ՄԱՄՈՒՌԻ ՍՊՈՐԱՆՈՐԻ ԾԼԵՑՆԵԼԸ

(Ուսուցչի համար)

Մամուռի սպորները ծլցնելը դժվար չէ: Դրա համար պետք է վերցնել մի կտոր տորֆի թիթեղ և եռացնել ջրի մեջ, որպեսզի բակտերիաները և սնկերի սպորները ոչնչանան: Հետո պետք է վերցնել մամուռի հասած սպորանոթներ՝ (նախապես մանրա-



Նկ. 53. Մամուռի նախածիլը բողբոջներով:

դիտակով ստուգել հասունացած սպորներ կան, թե չկան), կափարիչը հեռացնել և սպորները ցանել տորֆի թիթեղի վրա: Այնուհետև տորֆի թիթեղը դնել խոնավ կամերայում: Տաս կամ տասնհինգ օրից հետո սպորները կսկսեն ծլել և տորֆի վրա կարելի է տեսնել բարակ կանաչ թելիկներ. դրանք մամու-


ռի նախածիլերն են: Որոշ ժամանակից հետո նախածիլի թելիկների վրա կառաջանան նաև բողբոջներ: Բողբոջներից կաճեն մամուռներ ցողունիկով, տերևիկներով և ուղղոյիղներով:

Մամուռի սպորները կարելի է ծլցնել նաև խոնավ հողի վրա: Թոնավ պահելու համար հողը պետք է ծածկել բաժակով:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Մամուռի հասունացած սպորանոթներ, 2. պինցետ, 3. տորֆի թիթեղ, 4. խոշորացույց, 5. մանրադիտակ, 6. խոնավ կամերա:

Եթե կարողանանք ձեռք բերել տորֆամաձուռ, կատարենք հետևյալ փորձերը (այս փորձերը կարելի է կատարել նաև մամլած տորֆի թիթեղի վրա, միայն թե պետք է նախապես քանդել):



Նկ. № 54. Տորֆամաձուռի տերևի կազմութունը մեծ խոշորացմամբ դիտելիս:


Նրա մեջ կան նեղ ու երկար բլիճներ (ա), որոնք կենդանի վիճակում ունեն քլորոֆիլային հատիկներ, նրանց արանքներում կան խոշոր և դատարկ բլիճներ (6): Այդ բլիճների պատերը որոշ մասերում հաստացած են: Դատարկ բլիճների վրա կան անցքեր (b), որոնցով ներս է ծծվում ջուրը, երբ տորֆամաձուռն ընկղմում ենք ջրով լի բաժակի մեջ:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Տորֆ մամլած կամ տորֆաթիթեղ,
2. պինցիտ,
3. բաժակ ջրով,
4. մանրադիտակ,
5. առարկայակեր և ծածկող ապակիներ:

ՊՏԵՐ

Պտերանմանները մեծ մասամբ խոնավասեր բույսեր են և աճում են խոնավ ու մութ անտառներում, ժայռերի ձեղքերում, ջրերի մոտ: Գտնենք անտառում կամ ժայռերի վրա աճող որևէ փետրածե տերևներով պտեր: Բուսաբանական բահիկի օգնությամբ քանդենք հողը և ամբողջությամբ հանենք բույսը: Մենք կտեսնենք, որ ցողունը հողից չի բարձրանում: Նա բազմամյա է, տարածվում է հողի մեջ և տալիս է մի քանի տերև դեպի վեր: Արմատները հաստ են և ճյուղավոր:



Նկ. 55. Պտեր. 1. ամբողջ բույսը, 2. տերևի ստրեխ երեսը թմբիկներով, 3. թմբիկի լայնական հատվածը (մեծացրած):

Պտերի տերևները նոր առաջանալիս խլրխունջաձև ոլորված են: Աճելու հետ միասին նրանք բացվում են: Տերևները սովորաբար փետրածե են,

պարզ կամ կրկնակի կտրված մասերով:


Ամռան կեսերին տերևների տակի մակերեսի վրա առաջանում են թմբիկներ, որոնք սկզբում սպիտակ են, հետո մգանում և դեղնում կամ սևանում են: Դրանք սպորանոթների փնջեր են, որոնք ծածկված են լինում բարակ, թափանցիկ թեփուկներով:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Պտեր,
2. բուսաբանական բահ,
3. խոշորացույց:

ՊՏԵՐԻ ՍՊՈՐԱՆՈՒԹԸ

Ասեղի կամ սկալպելի օգնութեամբ քերենք պտերի սպորանոթներն առարկայակիր ապակու վրա, մի կաթիլ ջուր ավելացնենք, ծածկենք և նայինք մանրադիտակով: Մենք կտեսնենք սպորանոթները փակ կամ բաց: Վերջին դեպքում սովորաբար սպորանոթի մոտ օդի բշտիկ է լինում, որը խանգարում է դիտողութեանը: Օդի բշտիկները կարելի է հեռացնել պրեպարատը տաքացնելով սպիրտայրոցի վրա: Պրեպարատի վրա կտեսնենք, որ սպորանոթը մի պարկ է: Նրա մի ծայրին կա կոթ: Պարկի



Նկ. 56. Պտերի սպորանոթը մեջքից և կողքից:

վրա՝ սկսած կոթից, կա հաստապատ բշտիկների մի շերտ, որը պատում է սպորանոթը. բայց մյուս կողմում չի հասնում մինչ կոթը: Այդ մասում սպորանոթի պատը բարակ է: Չորանալիս հաստապատ բշտիկների շերտը ձգվում է դեպի ետ և պատում է բարակ պատը, որի հետևանքով սպորները թափվում և քամու

միջոցով տարածվում են:

Ընտրենք մի այնպիսի պրեպարատ, որի մեջ սպորանոթները հասունացած են, բայց դեռ չեն բացվել: Զգուշութեամբ վերցնենք ծածկող ապակին, ծծան թղթով հեռացնենք ջուրը: Ապա մի կաթիլ գլիցերին ավելացնենք, նորից ծածկենք և դիտենք մանրադիտակով: Դիցերինը հատկութեամբ ունի ջուրը կլանելու: Դրա հետևանքով սպորանոթները կչորանան և կպատռվեն: Մանրադիտակով կարելի է տեսնել, թե ինչպես են դեպի ետ բացվում և նորից ծալվում սպորանոթների պատերը:

Նկարեցեք պտերի սպորանոթները և սպորները:

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

- 1. Պտեր, 2. առարկայակիր և ծածկող ապակիներ, 3. մանրադիտակ, 4. ասեղ կամ սկալպել, 5. գլիցերին, 6. սպիրտայրոց:


ԻՆՉՊԵՍ ԵՂԵՑՆԵԼ ՊՏԵՐԻ ՍՊՈՐՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՆԱԼ ՆԱԽԱԾԻԿ

(Ռուսացի համար)

Պտերի սպորները կարելի է ծլեցնել նույն ձևով, ինչպես և մամուռի սպորները: Դրա համար նախապես ջրի մեջ եռացնում ենք տորֆի թիթեղը, ցանում պտերի սպորները և դնում խոնավ կամերայի մեջ տաք տեղ, ուժեղ լույսից հեռու: Սպորները ստանալու համար պետք է պտերի տերևը դնել թղթի վրա՝ ստորին երեսը ցած. չորանալով սպորանոթները կբացվեն և սպորները կթափվեն թղթի վրա:

Պտերի սպորները շատ դանդաղ են ծլում: Նրանց ծլելու համար հարկավոր է 1—3 ամիս: Սկզբում տորֆաթիթեղի մակերեսը կանայում է, ապա ավելի ուշ նրա վրա կանաչ կետեր են առաջանում և ապա կանաչ տափակ թիթեղներ: Հենց այդ թիթեղներն էլ պտերի նախածինն են:

Նախածինը սրտաձև փոքրիկ թիթեղ է, որի վերին երեսը հարթ է, իսկ ստորին երեսի վրա գտնվում են սիգոյիդները (մաղիկներ) և բազմացման օրգանները: Սիգոյիդները գտնվում են սուր ծայրին մոտ: Իգական օրգանները տեղավորված են հակառակ ծայրին մոտ, իսկ արական օրգանները ցրված են միջին մասում:



Նկ. 57. Պտերի նախածինի ստորին երեսը. 1. իգական սեռական օրգանները, 2. արական սեռական օրգանները, 3. սիգոյիդները:


Ավելի երկար պահելու դեպքում նախածինի վրա տեղի է ունենում բեղմնավորություն, և առաջ է գալիս պտերի ծիլը տերևով, ցողունով և արմատներով: Անհրաժեշտ իրեր և նյութեր.

- 1. Պտեր, 2. տորֆի թիթեղ, 3. խոնավ կամերա, 4. խոշորացույց, 5. պինցետ կամ ասեղ:

ՉԻԱԶՆՏԻ ՍՊՈՐՆԵՐԸ

Չիաձեսները եղևնու նրման օդակաձև դասավորված ճյուղերով բարակ խոտաբույսեր են:

Նրանք աճում են խոնավ հողի վրա. շատ հաճախ դեռի կամ առվի եզերքին: Գտնենք ձիաձեռի սպորատու հասկը, որը տեղավորված է լինում ցողունի զազաթին և դնենք թղթի վրա մի ապահով տեղ: Որոշ ժամանակից հետո թղթի վրա կգտնենք սպորներ: Քիչ սպորներ ածենք առարկայակիր ապակու վրա և առանց ծածկելու, առանց ջրի դիտենք մանրադիտակով:



Նկ. 58. Ձիաձեռի սպորները. 1. չոր վիճակում, 2. խոնավության դեպքում:

Մենք կտեսնենք, որ ձիաձեռի սպորը գնդաձև մարմնիկ է, որի վրա կան ծայրը լայնացած չորս հատ ժապավեն: Մանրագիտակով նայելիս կարելի է նկատել, որ այդ ժապավենները մերթ ընդ մերթ բացվում կամ կծկվում են: Դա տեղի է ունենում մեր շնչառության հետևանքով: Երբ մենք արտաշնչում ենք, սպորները մեր արտաշնչած գոլորշուց խոնավանում են և ներանց ժապավենները կծկվում են: Իսկ հետո նրանք չորանում և բացվում են:

Ձիաձեռի սպորները կարելի է ծլեցնել տորֆի թիթեղի կամ խոնավ հողի վրա (Տես փորձ № 118): Տաք և ոչ շատ լուսավոր տեղում սպորները մի քանի օրից հետո ծլում են (սովորաբար ծլում են 2—3 օրվա ընթացքում):

Անհրաժեշտ իրեր և նյութեր.

1. Ձիաձեռի սպորատու հասկեր,
2. խոշորացույց,
3. մանրադիտակ,
4. տորֆի թիթեղ կամ ծաղկամանով հող,
6. խոնավ կամերա,
7. առարկայակիր ապակի:

ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ

ԻՆՁՊԵՍ ՈՐՈՇԵԼ ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԸ

Ծաղկավոր բույսերի որոշումը կայանում է նրանում, որ հատուկ աղյուսակների օգնությամբ գտնում ենք բույսի անունը:

Ծաղկավոր բույսը որոշելու համար նախ պետք է լավ դիտել և հատուկ հարցաթերթի օգնությամբ նկարագրել: Այնուհետև պետք է ուշադրությամբ կարդալ համապատասխան աղյուսակը մինչև որ կգտնենք նրա անունը:

Օրինակ՝ ցանկանում ենք իմանալ թե պամիդորը որ ընտանիքին է պատկանում: Դրա համար բացում ենք «Ծաղկավոր բույսերի ընտանիքների որոշման աղյուսակը» և կարդում № 1 կետը, որը կազմված է երկու պարբերությունից: Երկու պարբերությունն էլ կարդալով, տեսնում ենք, որ մեր բույսը համապատասխանում է երկրորդ պարբերության մեջ նկարագրածին: Այստեղ իմանում ենք, որ պամիդորը երկշաքիլ բույս է: Այդ նույն տեղում գրված է 4 թվանշանը. դա ցույց է տալիս, որ շարունակությունը պետք է կարդալ № 4 կետում: Քանի որ պամիդորի ծաղիկները խմբված չեն ընդհանուր ծաղկակալի վրա, այլ ցրված են, այդ պատճառով էլ մենք ընտրում ենք 6 թվանշանը և անցնում № 6 կետին: Այստեղ առանձին տողում գրված է, որ պսակը բաժանաթերթիկ է, իսկ երկրորդ տողում՝ պսակը ձուլաթերթիկ է, պամիդորի պսակը ձուլաթերթիկ է, դրա դիմաց գրված է 11: Անցնում ենք № 11 կետին, որն այս աղյուսակի վերջին կետն է: Այս կետում նկարագրված է երկու ընտանիք: Քանի որ պամիդորի ծաղիկները կանոնավոր են, պսակաթերթիկը և առեջները հնդական են և տերևներն էլ հերթադիր, ուրեմն նա պատկանում է մորմազգիների ընտանիքին:

Բալի ընտանիքը որոշելու համար կարդում ենք նույն աղյուսակի 1, 4, 6, 7, 8, 9 կետերը և իմանում ենք, որ բալը պատկանում է վարդագգիների ընտանիքին:

Ցորենի ընտանիքը որոշելու համար կարդում ենք 1, 2, 3 կետերը:

Սոխի ընտանիքը որոշելու համար կարդում ենք 1, 2 կետերը և հասնում ենք շուշանագգիների ընտանիքին:

Դիցուե՛ք մեզ աված է որոշելու համար եղևնու մի ճյուղ (որի անունը չգիտենք): Մենք կարդում ենք մերկասերմ բույսերի որոշման աղյուսակի 1, 2, 4, 5, 6 կետերը և գտնում ենք, որ այդ բույսը կոչվում է եղևնի:

Դիցուե՛ք որոշելու համար տրված է վիկը (որի անունը չգիտենք) նախ որոշում ենք ընտանիքը (ընտանիքների որոշման աղյուսակով): Կարդում ենք 1, 4, 6, 7, 10—իմանում ենք, որ մեր բույսը պատկանում է քիթոնաձաղիկների ընտանիքին:

Քացում ենք թիթեռնածաղիկ բույսերի որոշման աղյուսակը, կարդում ենք 1, 5, 7 կետերը և դառնում ենք, որ մեզ տված բույսը կոչվում է վիկ:

ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծաղկավոր բույսն ուսումնասիրելու և որոշելու համար պետք է նախ նկարագրել: Դրա համար պետք է ունենալ բույսի բոլոր մասերը, լավ դիտել և պատասխանել հետևյալ հարցերին:

1. Արմատը (առանցքային, փնջածև, հաստացած):
2. Ստորգետնյա ցուլուն (կոճղարմատ, պալար, կոճղեա):
3. Վերգետնյա ցուլուն (խոտային է, թե փայտային):
4. Տերևները՝ ա) պարզ են, թե բարդ, բ) թիթեղի ձևը, գ) ցանցաձև է, թե զուգահեռաձև, դ) տերևների դասավորությունը ցողունի վրա:
5. Ծաղիկները.
 - ա) ծաղկապատը պարզ է, թե կրկնակի (բաժակ և պսակ).
 - բ) ծաղիկը կանոնավոր է, թե անկանոն.
 - գ) բաժակը (բաժակաթերթերի թիվը, միացած են, թե ազատ).
 - դ) պսակը (պսակաթերթերի թիվը, միացած են, թե ազատ, ի՞նչ գույնի են).
 - ե) առեչները (թիվը, միացած են, թե ազատ).
 - զ) վարսանդը (թիվը).
 - է) սերմնարանը (վերնադիր, ցածրադիր, կիսացածրադիր) բնների թիվը.
 - ը) սունակ (թիվը).
 - թ) ծաղկի ֆորմուլը Ծ... Բ... Գ... Ա... Վ...:
 - ժ) ծաղկի դիագրամը (գծել):

6. Ծաղկաբույլը (հասկ, ողկույզ, հովանոց, հուբան և այլն):
 7. Պտուղը (կորիզավոր, հատիկ, կնգուղ և այլն):
- Բացի այդ հարցերից պետք է իմանալ և գրի առնել նաև թե՛
1. Որտեղ է աճում բույսը (քաղաք, շրջան, գյուղ):
 2. Ինչպիսի տեղում է աճում (մարզ, անտառ, ճահիճ և այլն):
 3. Ինչպես է հարմարված շրջապատին (խոնավությունը, լույսին, ջերմությունը, հողին) և ինչպես է բազմանում

(ինքնափոշոտում, խաչածև փոշոտում, միջատներով կամ քամով փոշոտում, միամյա, երկամյա, բազմամյա և այլն):

4. Ինչ նշանակություն ունի անտեսություն համար (մուլախոտ, պտղատու, բանջարաբույս, դեղաբույս և այլն):
5. Բույսի անունը (որոշելուց հետո):
6. Նրբ է գտնված և որոշված:
7. Հավաքողի ստորագրությունը:
8. Որոշողի ստորագրությունը:

ՄԵՐԿԱՍԵՐՄ ԲՈՒՅՍԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

1. Փոքր թփեր հատվածավոր ճյուղերով, բավական նման ձիաձետներին: Տերևները մանր են, թեփուկանման, նստած են հակադիր: Միշտ էլ աճում են ժայռերի ձեղքերում էֆեդրա
- Ծառեր կամ թփեր, բայց ճյուղերը հատվածավոր չեն 2
2. Տերևները մանր, թեփուկանման, խիտ շարված ճյուղերի վրա 3
- Տերևներն ասեղնածև են, բավական երկար 4
3. Բարձր ծառեր, ճյուղերը դեպի վեր բնին սեղմված: Թեփուկանման տերևները դասավորված երկարությունով չորս շարքով: Մեղ մոտ աճեցնում են որպես զեկորատիվ բույսեր Նոնի
- Թփեր կամ փոքր ծառեր, թեփուկանման տերևները նստած օղակաձև երեքական հատ: Մեղ մոտ վայրի վիճակում աճում են անտառներում կամ թփուտներում Ցրտենի
4. Տերևները դասավորված փնջերով 2—5-ական հատ: Բարձր ծառեր, հանդիպում են նաև մեր անտառներում Սոնի
- Տերևները դասավորված են հատ-հատ 5
5. Ասեղնատերևները կեսից մինչև երկու սանտիմետր երկարությամբ, դասավորված օղակներով երեքական հատ: Թփեր և փոքր

ձառեր, հանդիպում են մեր անտանհե- րում և թփուտներում	Գլխի	
Ասեղնատերևները հերթադիր	6	
6. Ասեղնատերևները քառանկյունի, քառանիստ Ասեղնատերևները տափակ	Եղեվնի	7
7. Ասեղնատերևների գագաթը գոգավոր, ստո- րին երեսին կան երկու սպիտակ շերտեր, պտուղը կոն, չոր	Մայրի	
Ասեղնատերևների գագաթը գոգավոր չէ, ստորին երեսին սպիտակ շերտեր չկան: Պտուղը մսալի, կոբիզավոր, կարմիր	Կենի	

**ԾԱՂԿԱՎՈՐ (ԾԱՂԿԱՍԵՐՄ) ԲՈՒՅՍԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ՈՐՈՇՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ**

1. Տերևները պարզ, գուգահեռաձևից կամ ա-
ղեղնաձևից, ծաղկի մասերը մեծ մասամբ ե-
րեքական (3,6) Միաշափիլ բույսեր... 2
- Տերևները մեծ մասամբ ցանցաձև կամ թա-
թածակ շղավորված: Ծաղկի մասերը մեծ
մասամբ 4 կամ 5-ական երկշափիլ բույսեր... 4
2. Ծաղիկները մեծ մասամբ վառ գույնի
(սպիտակ, կարմիր և այլն): Ծաղկապատը
պարզ, 6 թերթիկից: Առեկները 6 հատ,
սերմնարանը վերնադիր Շուշանագգիների ընտանիք
Ծաղիկներն աննշան, կանաչավուն կամ
թուխ, առանց բաժակի և պսակի, ծածկված
թեփուկներով: Ծաղիկները խմբված հաս-
կիկներով 3
3. Ցողունը զլանաձև, սնամեջ (ծղոտ) հանգույ-
ցավոր: Տերևի թիթեղի և տերևածոցի սահ-
մանի վրա լեզվակաձև հավելված կա Հացաբույ-
սերի ընտանիք
Ցողունը հաճախ եռանիստ, լիքը, առանց
հանգույցների: Տերևները մեծ մասամբ ա-
ռանց լեզվակի Բոշխերի ընտանիք
4. Բազմաթիվ ծաղիկները խմբված ընդհա-
հանուր ծաղկակալի վրա՝ հիմքում պատ-

- | | | |
|---|--|----|
| ված ծաղկակալից տերևների վաթաթուցով: | | |
| Ծաղկաբույլը զամբյուղ | | 5 |
| Բույսեր այլ հասկանիչներով | | 6 |
| 5. Յուրաքանչյուր ծաղկի մեջ կա հինգ առեկ,
որոնց փոշանոթները միաձուլվելով խողո-
վակ են կազմում վարսանդի շուրջը (դիտել
խոշորացույցով): Առանձին ծաղիկը կանաչ
բաժակ չունի, որի փոխարեն մաղիկներ,
խողաններ կամ թաղանթիկներ կան Բարդա-
ծաղիկների ընտանիք | | |
| Յուրաքանչյուր ծաղկի մեջ կա չորս հատ
ազատ առեկ: Ծաղիկն ունի կրկնակի բա-
ժակ, ստորինը թաղանթային, վերինը՝
կազմված խողաններից Գնդածաղիկների ընտանիք | | |
| 6. Պսակը բաժանաթերթ է | | 7 |
| Պսակը ձուլաթերթ է | | 11 |
| 7. Ծաղկի մեջ առեկները շատ (12-ից ավելի) | | 8 |
| Ծաղկի մեջ առեկները 12-ից ավելի չեն ... | | 10 |
| 8. Առտարույսեր նարնջագույն, դեղին կամ
սպիտակ կաթնահյութով, որը ծորում է բույ-
սը վերավորվելիս: Պսակը կազմված 4
(հազվադեպ ավել) թերթից: Բաժակը կազմ-
ված է երկու թերթից, որոնք շատ շուտ
թափվում են: Վարսանդը մեկ հատ է Պուտազ-
գիների ընտանիք | | |
| Բույսեր առանց կաթնահյութի | | 9 |
| 9. Բաժակ կամ չունեն կամ թե բաժակը կազմ-
ված 3—5 թերթից: Առեկներն ամրացած
են ծակակալին: Տերևներն առանց տերևա-
կիցների Հրանունիկների ընտանիք
Բաժակը հաճախ 8—12 կտրվածք ունի
(կրկնակի է): Տերևներն ունեն տերևակից-
ներ: Առեկները ամրացած բաժակի հիմ-
քին Վարդածաղիկների ընտանիք | | |
| 10. Պսակը կանոնավոր: Պսակաթերթերը և
բաժակաթերթերը չորսական: Առեկները 6
հատ: Պտուղը պտուիճ է Խաչածաղիկների ընտանիք
Պսակն անկանոն, թիթեռնատիպ (սոռ- | | |

կաստ, թիակներ, նախակ): Առեչները 10 հատ, բոլորը կամ 9-ը իրար հետ միացած: Պտուղն ունդ . . . Թիքեռնաձաղիկների ընտանիք

11. Ծաղիկները կանոնավոր են, մեծ մասամբ հընգաննամ օղակներով (5 առեչ, 5 պսակաթերթ և այլն): Տերևները հերթադիր: Մորմազգիների ընտանիք
Ծաղիկներն անկանոն, երկշուրթ: Առեչները չորս հատ: Տերևները հակադիր: Ցուշուռնը քառանիստ . . . Երթնաձաղիկների ընտանիք

ՀԱՅՍՏԱՆԻ ՑՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Հացաբույսերը որոշելու համար պետք է դիտել ամբողջ բույսը: Բայց առանձնապես կարևոր է ունենալ ծաղկած հասկը կամ հուրանը: Կարելի է որոշել նաև հատիկը հասած ժամանակ:

1. Բույսի վրա երկու տեսակ ծաղկաբույլ կա, արականը գտնվում է գագաթին, իսկ իգականը՝ կողքին . . . Մայիս (եզիպտացորեն) 2
Բույսերի վրա մի տեսակ ծաղկաբույլ կա . . . 2
2. Յուրաքանչյուր հասկիկի մեջ մի ծաղիկ, ծաղկաբույլը հուրան . . . 3
Յուրաքանչյուր հասկիկի մեջ երկու և ավելի ծաղիկ . . . 4
3. Ծաղկաբույլը ցրված կամ խիտ հուրան-խոշոր բույսեր . . . Սորգո
Ծաղկաբույլը խիտ հուրան, ավելի փոքր բույսեր . . . Կորեկ
4. Ծաղկաբույլը հուրան . . . Կարասկ
Ծաղկաբույլը հասկ . . . 5
5. Յուրաքանչյուր հասկիկի մեջ մի ծաղիկ, բայց հասկիկները նստած են փնջերով 2-ական կամ 3-ական իրար հետ: Երբեմն փնջի 2 կողքի հասկերը չեն զարգանում . . . Գարի
Յուրաքանչյուր հասկիկի մեջ 2 և ավել ծաղիկ: Հասկիկները նստած են առանձին . . . 6

6. Յուրաքանչյուր հասկիկի մեջ 2 կամ 3 ծաղիկ: Հասկիկի թեփուկի եզրն ատամնավոր է . . . Տարեկան
- Յուրաքանչյուր հասկիկի մեջ 2—5 ծաղիկ: Հասկիկի թեփուկի եզրը հարթ . . . Յոթեն

ԹԻԹԵՌՆԱԾԱՂԻԿ ԲՈՒՅՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Թիթեռնաձաղիկ բույսերը որոշելու համար անհրաժեշտ է անպայման տերևը, ծաղիկը, ծաղկաբույլը և ունդը:

1. Տերևները կաղմված 3 տերևիկից . . . 2
Տերևները փետրածե են . . . 5
2. Միամյա բույս, առեչախողովակը և սունակը պարուրածն ոլորված . . . Լորի
Բազմամյա խոտաբույսեր, առեչախողովակը և սունակը ոլորված չեն . . . 3
3. Տերևի մեջ բոլոր տերևիկներն ունեն հավասար կոթուններ, ծաղկաբույլը գնդաձև գլուխիկ . . . Երեքնուկ
Տերևի մեջ զազաթի տերևիկն ունի ավելի երկար կոթուն . . . 4
4. Ծաղկաբույլը զլխիկ, ունդը մանգաղաձև կամ խթունջաձև ոլորված . . . Առվույտ
Ծաղկաբույլը ողկույզ . . . Իշառվույտ
5. Տերևները կենտ փետրածե, զազաթին ունեն տերևիկ . . . 6
Տերևները զույգ փետրածե, զազաթին ունեն թեղիկ . . . 7
6. Միամյա բույս, մանր, գորշականաչ տերևներով . . . Սիսեռ
Բազմամյա խոտաբույս ավելի խոշոր վառ կանաչ տերևներով . . . Կորնգան
7. Տերևակիցներն ավելի խոշոր են քան տերևիկները: Սովորաբար փաթաթվող բանջարանոցային բույս է . . . Ոլոռն
Տերևակիցները տերևիկներին շատ փոքր են . . . Կիկ

Որոշելու համար անհրաժեշտ է ունենալ ծաղիկները և պտուղները: Պետք է նաև ծանոթ լինել ամբողջ բույսին:

1. Վարսանդը կազմված մեկ պտղատերևիկից, պտուղը կորիզավոր է	2
Վարսանդը կազմված մի քանի պտուղներից	6
2. Ծաղիկները նստադիր են կամ համարյա կոթունն չունեն	3
Ծաղիկներն ունեն բավական երկար կամ երկար կոթուն	5
3. Տերևները համարյա սրտաձև	Ծիրան
Տերևները նեղ և երկար նշտարաձև	4
4. Պտուղը չոր, թաղիքապատ	Նուշ
Պտուղը մսալի, թավշամաղ	Դեղձ
5. Պտուղը ծածկված զորշ փառով, կորիզը ձըվածն կամ երկարավուն	Սալոր
Պտուղն առանց փառի, կորիզը համարյա դնդաձև	Բալ
6. Վարսանդը կազմված հինգ պտղատերևից	7
Վարսանդը կազմված բազմաթիվ պտղատերևներից	9
7. Պաղի յուրաքանչյուր բնում երկուսից ավել սերմ, ծաղիկները խոշոր են և նստած առանձին	Սերկիխի
Պաղի յուրաքանչյուր բնում 1--2 սերմ	8
8. Սունակները մինչև հիմքը ազատ, փոշանոթները մանուշակագույն	Տախն
Սունակները հիմքում միացած, փոշանոթները դեղին	Խնձոր
9. Պաղատերևները գտնվում են փակ ծաղկակալի մեջ, պտուղները չոր, իսկ ծաղկակալը հետո դառնում է հյութալի	Մալբեխ
Պաղատերևները գտնվում են ուռուցիկ ծաղկակալի վրա, պտուղը կազմված մանր կորիզապտուղներից, հյութալի	Մոշ

1. Ծաղիկները նստած առանձին, պտուղը կրկար, չոր, սկզբում կանաչ, ապա կարմրում է	Պղպեղ կամ տափեղ
Ծաղիկները նստած խմբերով (ծաղկաբույլ են կազմում)	2
2. Պտուղը կնգուղ բազմաթիվ մանր սերմերով	Ծխախոտ
Պտուղը հյութալի, սերմերը տափակ	3
3. Պսակը դեղնավուն, առեչները կպած իրար	Պամիկոր
Պսակը սպիտակավուն կամ մանուշակագույն, փոշանոթները թեև դասավորված կոնաձև, բայց իրար կպած չեն	4
4. Բաժակը և պսակը կազմված են 6--9 բլբլթակից, պտուղները խոշոր, երկարավուն կապույտ	Բաղրջան
Պտուղները մանր, ոչ մեծ 2--3 սմ-ից	5
5. Տերևները կենսա և ընդհատ փետրաձև, ունի ստորգեանյա պալարներ	Կարտոֆել
Տերևները պարզ: Պտուղները սև, նարնջագույն կամ կարմիր, ոչ մեծ մեկ սանտիմետրից	Մորմ

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ն Ե Ր

I

ՓՈՐՁԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Տերևներ քլորոֆիլային լուծույթ ստանալու համար: Եթե թարմ կանաչ տերևներ գտնելը դժվար չէ, ապա քլորոֆիլային լուծույթը կարելի է ստանալ փորձում նկարագրված ձևով: Իսկ եթե այդ աշխատանքը կատարվում է ձմռանը, պետք է նախօրոք տերևներ չորացնել: Դրա համար շատ հարմար է եղինջը: Պետք է կտրել եղինջի ճյուղերը տերևներով, փռել արևի տակ, որ լավ չորանան, փշրել և լցնել լայնբերան սրվակի մեջ: Վերջինը պետք է խցանով ծածկել, որպեսզի տերևները խոնավություն չծծեն:

Քլորոֆիլային լուծույթ ստանալու համար մի քիչ չորացրած տերև ենք ածում հավանգի մեջ, լավ մանրում մինչև փոշիանալը և վրան սոլիքոս լցնում: Այնուհետև փորձը կատարվում է այնպես, ինչպես նկարագրված է թարմ տերևների համար (Տես փորձ № 48):

2. Ստորգետնյա ցողուններ: Կոճղարմատները կարելի է ամուսնից կամ աշնանից հավաքել և սովորական ձևով չորացնել թղթերի արանքում և պահել թղթերի մեջ: Պալարները և կոճղեանները պետք է պահել արկղի մեջ ավազով կամ թեփով ծածկված: Արկղը պետք է դնել $+1^{\circ}$ կամ $+2^{\circ}$ ջերմության տակ: Ջերմության աստիճանը բարձրանալու դեպքում պալարները և կոճղեանները կսկսեն ծլել: Մանր կոճղեանները նույնպես կարելի է պահել թղթերի արանքում:

3. Վարդը կարելի է պահել չորացրած վիճակում, թղթերի արանքում: Թարմ վարդ կարելի է ձեռք բերել ծաղկանոցներում և ծաղկի խանութում: Վարդի փոքր թփեր կարելի է պահել ծաղկամաններով կենդանի անկյունում: Վարդը նույն ձևով պահե-

լու համար կարելի է չորացնել ավաղի մեջ: Դրա համար պետք է գետի վացած մանր ավաղ. ավաղն այնքան պետք է լվանալ, մինչև որ ջուրը չպղտորվի: Վերցնում ենք մի փոքր արկղ, հասակին լցնում մի շերտ չոր ավազ, ապա տեղավորում վարդը կոթը դեպի ցած և թերթիկներն ուղղելով զգուշությամբ ածում ենք ավաղը մինչև որ կծածկվի: 4—5 օրից հետո ավաղը քիչ հետ սալ և ստուգել թերթիկները չորացել են, թե ոչ, եթե չորացել են հանել վարդը և պահել ապակե երեսով արկղի մեջ: Մտաք է նա փտալին ածել, որ միջատները չփչացնեն:

Այս ձևով կարելի է չորացնել և պահել նաև այլ ծաղիկներ:

4. Զրային սափորիկը մեզ մոտ հազվագյուտ բույս է: Հայկական ՍՍ Ինստիտուտիկայի տարածության վրա նա աճում է Լոռու և Ապարանի մի քանի լճակներում: Զրային սափորիկը շատ տարածված է Միուլթյան հյուսիսային շրջաններում, որտեղից և կարելի է դուրս գրել նրա ծաղիկները կամ թերթիկների պատրաստի հավաքածուն:

5. Սենյակային բույսեր: Սենյակային բույսերից շատերը կարելի է գտնել համարյա ամենուրեք. այդպիսին են օրինակ՝ արագեականցիան, բեգոնիան, դերանիումը (խոզդենի), պելարգոնիումը, ֆուքսիան: Այդ բույսերը հեշտությամբ բազմանում են կտրոններով (ճյուղերով) և շատ լավ աճում են սենյակում: Այդ բույսերը պետք է տնկել այգու փոխք լավ հողի մեջ և դնել պատուհանի առաջ: Զրել ըստ կարիքի, ամառն ավելի հաճախ: Ցանկալի է ունենալ նաև այլ սենյակային բույսեր օրինակ՝ ֆիլոդենդրոն, ֆիլոս, արում, որոնք՝ նույնպես հեշտությամբ բազմանում են ճյուղերով (կտրոններով): Շատ լավ են պահվում նաև սլեյմուլան, հակինթը (հիացինտը) և մի շարք կոճղեսալոր բույսեր:

6. Զրիմուռներ: Քանի դեռ ջրերը չեն սառել, ջրիմուռներ միշտ էլ կարելի է գտնել կանգնած և դանդաղ հոսող ջրերում: Մի քանիսը կարելի է հանդիպել նաև արագ հոսող ջրերում: Նրանց մեծ մասը կարելի է պահել սենյակում ակվարիումի մեջ, դրա համար պետք է ունենալ 1—5 լիտրանոց բաժակաձև կամ քառանկյուն անոթներ: Հատակին ածել գետի վացած ավաղ: Ջուրը ժամանակ առ ժամանակ փոխել:

խլամիդոմոնազը երկար չի մնում սենյակային պայմաններում: Նրան պետք է հավաքել մի օր առաջ, կարելի է գտնել կանաչած ջրերում համարյա բոլոր կղանակներին: Ստուգել մանրապղիտակով:

Պլեբոկոկը շատ տարածված է դրսում գտնվող խոնավ առաքիլաների՝ աղյուսի, հողի, ցանկապատի վրա: Միշտ կարելի է գտնել:

Կլադոֆորան շատ լավ աճում և բազմանում է սենյակում ակվարիումի մեջ: Համարյա միշտ էլ կարելի է գտնել գետակներում, նույնիսկ սառույցի տակ:

Սպիրոգլերան ավելի շուտ է ոչնչանում թե բնության մեջ և թե սենյակի պայմաններում: Սենյակում սպիրոգլերա կարելի է պահել միայն լայն ամաններում, սննդաբար հեղուկի մեջ, որը պետք է երբեմն թարմացնել ավելացնելով մի քանի կաթիլ թարմ սննդաբար հեղուկ (Տես փորձ № 34): Չտաքանալու համար ամանները պետք է կիսով չափ թաղել խոնավ ավազի մեջ, դնել հյուսիսային պատուհանի մոտ:

7. Շաքարասնկերը չոր մամլած վիճակում «դրոժ» անվան տակ ծախում են ղեղատներում: Շաքարասնկեր կարելի է տեսնել նաև զարեջրի տականքի մեջ (զարեջրի գործարանում): Դրոժը կարելի է դնել նաև թարմ մամլած վիճակում:

8. Մրիկոտ հատիկներ կարելի է հավաքել չլսած սերմացույցից: Ամբողջ մրիկոտ հասկեր կարելի է գտնել դաշտերում հացաբույսերի հասունանալու ժամանակ: Մրիկոտ հասկերը դեպի վեր են ցցված լինում, մինչդեռ առողջ հասկերը կորացած են լինում դեպի ցած: Մրիկոտ հասկերը և հատիկները կարելի է պահել թղթերի կամ ապակե լայնբերան սրվաղի մեջ:

9. Ժանգը լինում է զլխավորապես տերևների թիթեղի և տերևածոցերի վրա: Պետք է հավաքել վարակված տերևները՝ դեղին և սև բծերով և չորացնել սովորական ձևով թղթերի մեջ:

10. Կլխարկավոր սնկերը կարելի է հավաքել խոնավ եղանակին: Առանձնապես շատ սնկեր լինում են անտառներում: Սնկերը պետք է պահել ֆորմալինի 4—5% լուծույթի կամ 75% — անոց սպիրտի մեջ: Կլխարկավոր սնկեր (կոպրինուսներ) առաջանում են նաև գոմաղբի վրա, երբ վերջինս բավական հասունում է:

11. Բարաբոսերը կարելի է հավաքել և նույն վիճակում էլ պահել տուփի մեջ: Չորանալիս նրանք իրենց կենսունակութունը չեն կորցնում. խոնավանալուց հետո նրանք սկսում են նորից ապրել և աճել:

12. Մամուռները միշտ էլ կարելի է գտնել խոնավ հողի, ծառերի կամ քարերի վրա: Մամուռներ շատ կան անտառներում

և խոնավ ձորերում՝ նրանց պահելը դժվար չէ. պետք է մամուռի բարձիկները դնել խոնավ ավազի վրա և որևէ ապակե անոթով ծածկել՝ որ չչորանան: Այդ վիճակում մամուռները երկար ապրում են:

13. Պտերները տարածված են զլխավորապես անտառներում: Պետք է հավաքել նրա տերևները սպորանոթների խմբերով և չորացնել սովորական ձևով թղթերի մեջ, պահել նույնպես թղթերի մեջ: Որոշ ժամանակից հետո պտերի տակը թղթի վրա դեղին փոշի կնկատենք. դա հենց պտերի սպորներից է կազմված, որը և կարելի է ցանել:

Պտերի սպորները պետք է ցանել եռացրած տորֆի թիթեղի կամ հողի վրա և ծածկել ամանով: Ցանքսը պետք է կատարել դասից 2—3 ամիս առաջ: Հետևել, որ տորֆի թիթեղը կամ հողը միշտ խոնավ լինի:

14. Ջրածնոցները կարելի է գտնել առուների ու զետերի ափերին և ճահճոտ վայրերում: Պետք է հավաքել ամբողջ բույսերը՝ արմատով, ցողունով և սպորահասկիկով և սովորական ձևով թղթերի մեջ չորացնել ու պահել:

15. Ծաղկավոր բույսերը պետք և հավաքել հետևյալ զլխում նկարագրված ձևով և չորացնել: Բացի այդ, պետք է հավաքել շրջապատող բույսերի սերմերը, կոճղեսները, պալարները: Այդ բույսերից հետաքրքիրները պետք է աճեցնել ծաղկամաններում կամ դպրոցական հողամասի վրա: Սերմերի և կոճղեսների մի մասը պետք է ցանել և տնկել աշնանը, մյուս մասը գարնանը: Մի քանի բույս կարելի է ծլեցնել և աճեցնել նաև ձմռանը՝ սենյակում:

16. Սերմեր: Պետք է ձեռք բերել հետևյալ սերմերը. լոբի, սիսեռ, ցորեն, գարի, կանեփ, արևածաղիկ, եգիպտացորեն, ուլուն, վիկ:

17. Զրաբույսեր: Էլոդեա, վալխաներիա և այլ ջրաբույսեր կարելի է պահել ակվարիումի մեջ:

II.


ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՔԵԼ ԵՎ ՉՈՐԱՅՆԵԼ ԲՈՒՅՄԵՐԸ ՀԵՐԲՄՐԻՈՒՄԻ ՀՄՄՍԸ

Անիբաժեշտ պարագաներ

Բույսերը հավաքելու և չորացնելու համար պետք է ունենալ մի քանի հասարակ առարկաներ: Բույսերը հավաքելու և հողից հանելու համար անհրաժեշտ են՝ բուսաբանական բահիկ, այ-

գեղարձական մկրատ, փոքր սրաց: Հավաքած բույսերը տեղափո-
րելու և տուն հասցնելու համար պետք է ունենալ բուսարկղ, կամ
ավելի լավ է բուսապանակ: Բուսարկղը պատրաստում են թիթե-
ղից և ներկում՝ կանաչ կամ այլ գույնի: Նրա մեջ բույսերը
դնում են իրար վրա: Չկեղտոտվելու համար պետք է նախապես
արմատներից հողը հեռացնել և ցեխը լվանալ:

Բուսապանակը կազմված է երկու կտոր սովորաթղթից, ու-
րոնց միջոցով անցնում են երկու փոկեր (նկ. 82): Բուսապա-
նակի մեջ դնում են թերթեր և հավաքած բույսերը տեղափո-
րում թերթերի մեջ: Սովորաբար բուսապանակի մեծութունը
լինում է 30×50 սմ: Նա ավելի հարմար է քան բուսարկղը.
բուսապանակի մեջ ավելի շատ բույս կարելի է տեղափորել:



Նկ. 59. Բուսապանակ

պետք է դնել տախտակ և ծանրություն: Բույսերը թղթերի մեջ
դարձած կարելի է չորացնել նաև բուսաբանական ցանցի մեջ
(նկ. 83):

Ինչպես հավաքել բույսերը


Մանր բույսերը պետք է վերցնել ամբողջությամբ արմա-
տով: Ավելի մեծ բույսերը մինչև մեկ մետր մեծության նույն-
պես պետք է վերցնել ամբողջովին: 50 սանտիմետրանոց թղթի
մեջ տեղափորելու համար երկար բույսը կարելի է մեկ կամ եր-
կու տեղից ծալել, բայց չկտրել: Եթե խոտաբույսերը շատ մեծ
են, պետք է վերցնել ծաղիկաբույսը կամ նրա մի մասը, վերին
տերևները ցողունի հետ, ստորին տերևներից 1—2-ը և արմատի
մի մասը: Ծառերից և թփերից պետք է վերցնել տերևած ճյու-
ղեր: Պետք է աշխատել ձեռք բերել նաև ծաղիկները և պտուղ-
ները: Ցանկալի է ունենալ նաև ծառի փայտի մի մասը, որը
կարելի է կտրել սղոցով:

Յուրաքանչյուր բույսի համար պետք է գրել էտիկետ Սպ

մի կտոր քառանկյուն թուղթ է, որի վրա գրում ենք բույսի ա-
նունը, տեղական անունը, որտեղ է հավաքված (որ շրջանում և
գյուղում), ինչպիսի միջավայրից, երբ է հավաքված և ով է հա-
վաքել:

Ինչպես չորացնել բույսերը

Բույսերը չորացնելու ամենասովորական ձևը հետևյալն է:
Սեղանի վրա դնում են մեկ կամ երկու հատ բազմածալ թուղթ:
Ապա նրա վրա դնում են մեկ հատ երկծալ թուղթ, բացում են
և մի երեսի վրա շարում բույսերը որքան կտեղավորվի: Պետք
է աշխատել, որ նույն թերթում լինեն միանման բույսեր: Բույ-
սերը պետք է ուղղել, որ տերևները և ճյուղերն իրար վրա չընկ-
նեն և ծալված չլինեն: Երբ թերթը լցվի, մի անկյունում պետք
է մատիտով գրել ամենաանհրաժեշտ տեղեկությունները տեղի,
ժամանակի, միջավայրի մասին: Այնուհետև թերթը պետք է ծած-
կել, վրան դնել մեկ հատ բազմածալ թուղթ: Նորից դնել երկ-
ծալ թուղթ, բացել, մի երեսին շարել բույսերը, ուղղել, նշանա-
կել տեղեկությունները, ծածկել, վրան դնել բազմածալ թուղթ:
Այդպես շարունակել մինչև որ հավաքած բոլոր բույսերը կգասա-
վորենք թղթերի մեջ: Երբ բոլոր բույսերը կտեղավորենք թղթե-
րի մեջ, վրան դնենք
մի տախտակ և ծան-
րություն, որպեսզի
բույսերը միշտ ճընշ-
ման տակ լինեն և
հարթ մնան:



Նկ. 60. Բուսաբանական ցանց:

Բույսերը մինչև
չորանալը փնում են
նույն երկծալ թղթե-
րի մեջ. իսկ արանքի
բազմածալ թղթերը
փոխում ենք սկզբում
օրական երկու անգամ, հետո մեկ անգամ: Թաց բազմածալ թղթ-
թերթը չորացնում և նորից գործ են ածում: Թղթերի մեջ գասա-
վորած բույսերը կարելի է նաև տեղափորել բուսաբանական ցան-
ցի մեջ և պարանով կամ փոկով ամուր կապել: Ցանցը պետք է
կախել կամ դնել քամոտ տեղ՝ սովորում: Նայած եղանակին բույ-
սերը չորանում են 3—7 օրում:

Ստուգելու համար, թե բույսերը չորացնել են թե ոչ, բացում ենք երկծալ թղթերը և բարձրացնում բույսերից սրկէ մեկը: Եթե բույսը չորացել է, նա չի կախվում, այլ ուղիղ մնում է: Չորացած լինելը կարելի է ստուգել նաև շրթունքներով: Եթե բույսը սառն է թվում, կնշանակի նա դեռ չի չորացել: Չորացած բույսը տաք է թվում:

Պետք է ինկատի ունենալ, որ ցանցի մեջ եզրի թերթերն ավելի շուտ են չորանում, քան թե մեջտեղի թերթերը: այդ պատճառով էլ պետք է թերթերի տեղը փոխել: Բացի այդ՝ պետք է ցանցի մեջ շատ բույս չդնել: որքան թերթերի թիվը փոքր լինի, այնքան բույսերն արագ և լավ կչորանան:

Չորանալուց հետո բազմաձև թղթերն առանձնացնում ենք, իսկ երկծալ թղթերը բույսերի հետ միասին փաթաթում ենք թղթով և թելով կապում:

Ինչպես պահել չորացած բույսերը

Հերբարիումի համար չորացրած բույսերը պետք է կարել 27×45 սանտիմետր մեծությամբ հաստ թղթի վրա: Նույն թերթի վրա կարելի է կարել միայն մի տեսակի բույս: Այդ թերթի աջ ստորին անկյունում ստնծով (գումիարաբրիկով) կպցնում են էտիկետը: Սա մաքուր թուղթ է 7×12 սանտիմետր մեծությամբ, որի վրա գրում են բույսի անունը, որտեղ է հավաքած, ինչ միջավայրում, երբ է հավաքված և ով է հավաքել ու որոշել: Օրինակ.

Ս Ո Ճ Ի	
Դիլիջան, սոճու անտառ, արևմտյան	
, թերթություն	
Հավաքեց՝	Վ. Արսեմյան
Որոշեց՝	Կ. Բաղայան
12/8—1939 թ.	

Եթե բույսերը գործնական պարպումունքի համար են չորացրած, այդ դեպքում նրանց դասավորում են՝ նմաններն իրար հետ և պահում են կապոցներով: Կապոցի վրա պետք է գրել թե

ինչ բույսեր կան նրա մեջ: Կարած բույսերը դարձյալ դնում են երկծալ թղթի մեջ և պահում կապոցներով պահարանի մեջ:

Չորացրած բույսերի թղթերի մեջ պետք է միշտ նափտալին անել, որպեսզի ցեցը և այլ միջատներ չփչացնեն հավաքած բույսերը:

III.

ՌԵԱԿՏԻՎՆԵՐԻ ՊՍՏՐՍՍՏԵԼԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՍՍՐՔԵԼԸ

1. Մեթիլեն կանաչ: Այս ներկի փոշին կարելի է գտնել դեղատանը կամ լաբորատորական իրերի խանութում: Պետք է պատրաստել 20% ալյուր լուծույթ: Դրա համար պետք է կշռել 2 գրամ մեթիլեն կանաչ և լուծել 100 խոր: սանտիմետր թորած ջրի մեջ: Գործ է ածվում բուսական հյուսվածքներ ներկելու համար: Շատ լավ ներկում է բջջակորիզները: Մեթիլեն կանաչ չունենալու դեպքում կարելի է գործածել մանուշակագույն թանաքը («քիմիական» թանաքը):

2. 96% ալյուր մաքուր սպիրտ: Կարելի է գտնել դեղատանը: Գործադրվում է բուսական հյուսվածքներն ամրացնելու համար: Սպիրտի 70% ալյուր լուծույթի մեջ կարելի է պահել դանազան բուսական մասեր՝ սնկի պտղամարմին, պտուղներ, արմատներ և այլն:

3. Յոդի լուծույթ: Դեղատանը ծախում են յոդի սպիրտային լուծույթը: Մեր փորձերի համար դա այնքան էլ հարմար չէ, պետք է ունենալ յոդի լուծույթը յոդ կալիումի մեջ: Դրա համար պետք է վերցնել 100 խ. սմ ջուր, մեջը լուծել 1,5 գրամ յոդ կալիում (KN), խառնել և ավելացնել 0,5 գրամ մետաղական մաքուր յոդ և նորից խառնել: Պատրաստի լուծույթը պետք է պահել գունափոք ապակուց պատրաստած սրվակի մեջ լույսից հեռու, հակառակ դեպքում կարող է փշանալ: Այս լուծույթը գործ է ածվում օսլան հայտնաբերելու համար:

4. Նքեր: Կարելի է ձեռք բերել դեղատանը: Պետք է պահել կրակից հեռու: հակառակ դեպքում կարող է հրդեհ առաջանալ: Գործ է ածվում ճարպերը հայտնաբերելու համար. ճարպերը լուծվում են եթերի մեջ:

5. Օսլա: Կարելի է գտնել դեղատանը: Փոխարեն կարելի է գործածել կարտոֆիլի ալյուր: Օսլայի շն (կլեյստեր) պատրաստելու համար մի գրամ օսլա կամ կարտոֆելի ալյուր լուծել 20

10. Խ. սմ սառ ջրի մեջ և խառնել 80 խ. սմ եփած ջրի հետ (նախապես եռացնել կտրայի մեջ սպիրտայրոցի վրա) և սպասել, որ սառչի: Գործ է ածվում գիսատազի ազդեցությամբ լուծելու օսլայի վրա փորձելու համար:

6. Կրաջուր: Մի լիտրանոց շիշը շիշով լցնել ջրով, ավելացնել մանրած չհանգցրած կիր և խառնել մինչև որ 2—3 սանտիմետր նստվածք ստացվի: Գործածելուց առաջ ֆիլտրել: Ֆիլտրատն, այսինքն ծծան թղթով անցած սյարզ հեղուկը կրաջուրն է, որն անխաթթու գազից պղտորվում է:

Ստուգելու համար պետք է կրաջուրը լցնել բաժակի մեջ և ապակյա խողովակով փչել մեջը, եթե կրաջուրը թարմ է, նա կպղտորվի: Մեր փորձերում կրաջուրը գործ ենք անում ցուլց տալու համար, որ ծլած սերմերն անխաթթու գազ են արտադրում:

7. Տուշ: Կարելի է գտնել գրախանութներում: Տուշ չլինելու դեպքում արմատները վրա կարելի է դնել սև թանաքով:

8. Շափարի լուծույթ: Շաքարի 5%-ային լուծույթը գործ է ածվում օսմոսի երևույթն ուսումնասիրելու համար: 100 խ. սմ ջրի մեջ լուծում են 5 գրամ շաքար: Ծաղկափոշին և սնկերի սպորները ձևացնելու համար գործ են անում 5—20%-ային շաքարի լուծույթ: Երբեմն շաքարի լուծույթին ավելացնում են նաև 2% ժելատին: Դրա համար կշռում են ժելատինը, անում ջրի մեջ: Ծաղկափոշին ձևացնելու համար պետք է վերցնել 100 խ. սմ ջուր, 2 գրամ ժելատին և 5—20 գրամ շաքար: Այս հեղուկը շատ շուտ բորբոսում և նեխում է:

9. Կոլոդիում: Կարելի է գտնել դեղատանը: Նրա մեջ կա եթեր, այդ պատճառով էլ պետք է զգուշանալ կրակից: Գործ է ածվում փոքր քսակներ պատրաստելու համար: Կոլոդիումից պատրաստած բարակ շերտը գործում է սրպես «պրհեստական բուսական թաղանթ»:

10. Լակմոսի բուլք: Կարելի է ձեռք բերել լաբորանորական իրերի խանութում: Կապույտ լակմոսի թուղթը թթվից կարմրում է (վարզագույն է դառնում), իսկ կարմիրը հիմքից կապտում է: Մեր փորձերի համար հարկավոր է կապույտ լակմոսի թուղթ, արմատների քաքայիչ հատկությունը հայտնաբերելու համար:

11. Պարաֆին: Գտնել դեղատանը: Գործ է ածվում ջրային կուլտուրաների համար պատրաստած խցանները պարաֆինելու

համար: Դրա համար սպիրտայրոցի վրա որևէ ամանի մեջ հալում են պարաֆինը և մեջը պահում խցանները մինչև որ լավ կներծծվեն: Պարաֆինած խցանները չեն բորբոսում և նրանց վրա բակտերիաներ չեն առաջանում:

Պարաֆինը գործ է ածվում նաև գոլորշիացման փորձերի համար պատրաստած գործիքների փոքր անցքերը և ձեղքերը փակելու համար:

12. Զրային կուլտուրաների համար անհրաժեշտ են հետևյալ աղերի 5%-ային լուծույթները: Դրա համար պետք է ունենալ 5 հատ սրվակ: Յուրաքանչյուրի մեջ ածել 100-ական խ. սմ ջուր: Ապա մեկում ավելացնել 5 գրամ $\text{Ca}(\text{NO}_3)_2$, մյուսում՝ 5 գրամ MgSO_4 (անգլիական կամ դառն աղ), երրորդում՝ 5 գրամ KH_2PO_4 , չորրորդում՝ 5 գրամ, KCl , հինգերորդում՝ 0,5 գրամ երկաթի լիմոնաթթվային աղը:

13. Կարպտի բուլք: Պատրաստում ենք CoCl_2 -ի 5%-ային լուծույթ, 5 գրամ կորալտ քլորիդ լուծում ենք 100 խ. սմ ջրի մեջ: Այդ լուծույթի մեջ թրջում ենք ֆիլտրի թղթերը և չորացնում վառարանի մոտ կամ արևի տակ և պահում էքսիկատորի մեջ, որպեսզի չոր մնան: Այդ ձևով պատրաստված կորալտի թուղթը չոր ժամանակ կապույտ է, իսկ խոնավանալիս դեղնում է վարզագույն:

14. Քրոմաքթուն պետք է պահել գունավոր սրվակի մեջ, բերանն ամուր փակած, որովհետև չոր քրոմաթթուն օդից կլանում է խոնավությունը: Փորձերի համար պետք է կշռել 10 գրամ չոր քրոմաթթու և լուծել 100 խ. սմ ջրի մեջ:

15. Էոզինը կարմիր ներկ է. պատրաստում են 1%-ային լուծույթ՝ լուծելով 1 գրամը 100 խ. սմ ջրի մեջ:

16. Ասպիրատոր: Ասպիրատոր պատրաստելու համար հարկավոր է երկու հատ 4—5 լիտրանոց բանկա: Բանկաների բերանին հարմարեցնել երկանցքանի խցաններ. յուրաքանչյուր անցքի մեջ սարքել մեկ ծնկաձև խողովակ: Մեկ բանկայի ծնկաձև խողովակները հասնում են մինչև անոթի հատակը, իսկ մյուսինը՝ շատ կարճ են: Երկար խողովակներ ունեցող բանկան լցնում են ջրով և դնում սեղանի կամ պատվանդանի վրա, մյուսը դատարկ դնում են ավելի ցածր: Այնուհետև ջրով լի բանկայի մի խողովակի ծայրը ռետինե խողովակով միացնում են դատարկի մի խողովակին: Այդ բերանով փչում են վերևի բանկայի մյուս խողովակից մինչև որ ջուրը սկսի հոսել դեպի դատարկ բանկան:

Այնուհետև ջուրը ինքը հոսում է մինչև վերևի բանկայի դա-
տարկվելը: Այդ հոսանքի հետևանքով վերևի բանկան ծծում է
օդը, իսկ ստորինը դուրս փչում օդը:

17. Խոնավ կամերա: Խոնավ կամերան պետք է պատրաստել
հետևյալ ձևով: Վերցնել մի բաժակ, ներսից պատերը ծածկել ֆիլա-
րի թրջած թղթով, բերանին դնել ապակի, որը նույնպես ներ-
սից ծածկել ֆիլարի թաց թղթով:

Խոնավ կամերան կարելի է պատրաստել նաև այսպես: Վերց-
նել մեկ խոր ափսե, մեջը ջուր ամել, մեջտեղը դնել մի որևէ ա-
ռարկա, որը ջրից ավելի բարձր լինի: Այնուհետև վերցնել մի
մեծ բաժակ կամ բանկա (շատ հարմար է բուռնգենի մեծ բաժա-
կը կամ ապակյա զանգ) և ծածկել այնպես, որ եզրերը մտնեն
ջրի մեջ: Նախապես պետք է բաժակի մեջ ներսից պատին կպցը-
նել ֆիլարի թրջած թուղթ: Ծլեցնելու համար սերմերը կամ պրե-
պարատը պետք է դնել զանգի տակը՝ ամանի մեջտեղը տեղա-
վորված առարկայի վրա:

18. Գիպսի բիթեղ: Վերցնել գիպսի փոշի, շաղախել ջրով և
լցնել ափսեի կամ որևէ տուփի մեջ: Կարճ ժամանակից հետո
ջուրը կկլանվի գիպսի կողմից և վերջինս կամրանա: Կստաց-
վի գիպսի ֆիթեղ, որը օդադարձում են սերմերի ծլման համար:

IV.

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ, ՌԵԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ

Գործիքներ և ամանեղեն

1. Մանրադիտակ մինչև 600 անգամ մեծացնող,
2. խոշո-
րացույց,
3. պատրաստի սրեպարատների կոմպլեկտ (բուսա-
բանության),
4. առարկայակիր ապակիներ,
5. ծածկող ապակի-
ներ,
6. պինցետներ,
7. լանցետներ,
8. մկրատներ,
9. ասեղներ
կոթով,
10. ամելի,
11. սպիրտայրոցներ,
12. Էքսիկատոր,
13. կը-
շեռք անխնիկական,
14. կշռաքարեր,
15. ապակյա ձողիկներ,
16. կրիտատլիզատորներ,
17. ձաղարներ,
18. փորձանոթներ,
19. Պետրի թասեր,
20. ապակյա թիթեղներ,
21. հալանոց,
22. մենզուրկա, 23. ջերմաչափ (-10° — $+100^{\circ}$ Ց), 24. մաղ
(փոքր), 25. գիպսի թիթեղ, 26. շտատիվ Բուռնգենի, 27. խցանձա-
կիչներ զանազան մեծության, 28. կրոստինկա, 29. չորացնող

- պահարան, 30. փայտյա բունիչներ (շպիլակներ), 31. բանկաներ
ապակյա, 32. զանգեր ապակյա, 33. բաժակներ 200 և 300 խ. սմ,
34. կոլբաներ 200 և 300 խ. սմ, 35. խողովակներ ապակյա 5 մմ,
36. Մ-աձև խողովակներ, 37. սրվակներ, 38. թասեր ապակյա,
39. թասեր ֆարֆորի, 40. բահիկ բուսաբանական, 41. դույլ,
42. ցանց բուսաբանական, 43. բուսապանակ, 44. կարկին,
45. ալգեգործական մկրատ, 46. մութ արկղ, 47. պրիմուս,
48. բուսաբանական քարտեզներ. ա) մորֆոլոգիական, բ) անա-
տոմիական, գ) ֆիզիոլոգիական, դ) սխեմատիկական:

Նյութեր և ռեակտիվներ

1. Սողովակ ռետինյա, 2. խցաններ ռետինյա, 3. խցաններ
կեղևի, 4. մարմարե կտորներ հղկված, 5. թուղթ սև, 6. մեխեր,
7. ստվարաթուղթ, 8. գնդասեղներ, 9. կնոպկաներ, 10. թելեր,
11. թուղթ հերբաբիոմի համար, 12. թուղթ բույսեր չորացնելու
համար, 13. ծաղկամաններ, 14. արկղներ, 15. այգու հող, 16. գե-
տի ավազ լվացված, 17. բամբակ հիդրոսկոպիկ, 18. բամբակ
ոչ հիդրոսկոպիկ, 19. մառլա (թանդիֆ), 20. թուղթ ֆիլարի,
21. կոլորում, 22. այրած կիր, 23. շաքար սովորական, 24. թուղթ
լակմուսի (Վապուլյա), 25. պարաֆին, 26. օսլա լուծվող, 27. ա-
լյուր կարտոֆելի, 28. սերմեր, 29. մեթիլեն կանաչ, 30. էոլին,
31. սպիրտ 96%, 32. յոդ բյուրեղային, 33. ազոտաթթվական
կալցիում, 34. ծծմբաթթվական մագնեզիում, 35. ֆոսֆորաթթվա-
կան կալիում, 36. կալիում յոդիդ, 37. կալիում քլորիդ, 38. երկաթ
և քլորիդ 39. կոբալտ քլորիդ, 40. ծծմբաթթու, 41. աղաթթու,
42. քրոմաթթու, 43. տանին, 44. բենզին, 45. կծու կալի,
46. սոդա, 47. գլիցերին, 48. աղ սեղանի, 49. ֆորմալին, 50. ժե-
լատին, 51. սերգամինտի թուղթ, 52. լուցիկ, 53. սուրբուչ կամ
մենդելեևյան դամազկա, 54. գլիցերին-ժելատին, 55. սավալաի
լակ:

Փորձ № 51.	Ջրի գոլորշիացումը տերևների միջոցով	42
» » 52.	Ջրի գոլորշիացումը	42
» » 53.	Ջրի գոլորշիացման դիտումը	43
» » 54.	Դիտել Ջրի գոլորշիացումը տերևից կտրալտի թղթի միջոցով	45
» » 55.	Գոլորշիացման կախումը զանազան պայմաններից	45
» » 56.	Բույսերի թատամելը	46
» » 57.	Տերևների թառամումը հողում գտնվող Ջրի սառչելու հետևանքով	46
» » 58.	Գոլորշիացումը տերևակիր և տերևազուրկ ճյուղերից	47
» » 59.	Մաշկի նշանակությունը գոլորշիացման պրոցեսում	47

5-րդ ԳԼՈՒԽ. Յ Ո Ղ Ո Ի Ն

Փորձ № 60.	Ցողունի ներքին կազմությունը	48
» » 61.	Ցողունը կազմող մասերի քայքայելը	48
» » 62.	Երկշաքիլ բույսերի ցողունի կազմությունը Դիտել միամյա լորենու ցողունի լայնական հատվածը	49
» » 63.	Լորենու եռամյա ցողունի լայնական հատվածը	49
» » 64.	Պատրաստել եռամյա ցողունի պրեպարատ	50
» » 65.	Միաշաքիլ բույսի ցողունի կազմությունը	51
» » 66.	Պատրաստել եգիպտացորենի ցողունի լայնական հատվածի պրեպարատ	51
» » 67.	Ցողունի աճման կոնի կազմությունը	51
» » 68.	Վերելակ և վարիջակ հոսանքներ	52
» » 69.	Ցույց տալ Ջրի ճանապարհը բույսի մեջ	53
» » 70.	Բույսի «լացը»	54
» » 71.	Դիտել կոճզարմատներ	55
» » 72.	Կարտոֆելի պալարը ստորգետյա ցողուն է	55
» » 73.	Սոխի կոճղեսի կազմությունը	56

6-րդ ԳԼՈՒԽ. ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՄԵՐԻ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ

Փորձ № 74.	Ինչպես ստանալ շուտ բացվող ծաղիկներ	57
» » 75.	Միաշաքիլ բույսի ծաղիկը	58
» » 76.	Երկշաքիլ բույսի ծաղիկը	59

Փորձ № 77.	Ինչպես կազմել ծաղկի ֆորմուլը	61
» » 78.	Ինչպես կազմել ծաղկի դիագրամը	61
» » 79.	Ծաղկափոշի	62
» » 80.	Ծլեցնել ծաղկափոշին արհեստական միջավայրի վրա	63
» » 81.	Ծաղկի մասերը ձևափոխված տերևներ են	65
» » 82.	Ինքնափոշոտվող և խաչաձև փոշոտվող բույսեր	66
» » 83.	Արհեստական փոշոտում	67
» » 84.	Բազմացում պալարներով և կոճղեսներով	68
» » 85.	Բազմացում կտրոններով	69
» » 86.	Բեզոնխայի բազմացումը տերևով	69

7-րդ ԳԼՈՒԽ. Տ Ր Ո Պ Ի Զ Մ Ն Ե Ր

Փորձ № 87.	Գեոտրոպիզմ	70
» » 88.	Փոտոտրոպիզմ	71
» » 89.	Հիդրոտրոպիզմ	71

Մաս Բ. Բուսական խմբեր

• Բ Ա Կ Տ Ե Ր Ի Ա Ն Ե Ր

Փորձ № 90.	Բակտերիաների ձևերը	72
» » 91.	Ինչպես ստանալ խոտացուպիկ	72
» » 92.	Բակտերիաների բազմացման պայմանները	73
» » 93.	Նեխման բակտերիաներ	74
» » 94.	Նեխման բակտերիաներին օդ է անհրաժեշտ	75
» » 95.	Բացախաթթվային բակտերիաներ	75

Ջ Ր Ի Մ Ո Ւ Ռ Ն Ե Ր

Փորձ № 96.	Սլամիդոմոնադ	76
» » 97.	Պլևրոկոկ	77
» » 98.	Ճյուղավոր թելաձև ջրիմուռ կլադոֆորա	77
» » 99.	Թելաձև ջրիմուռ սպիրոգիրա	78
» » 100.	Չանազան ջրիմուռներ	79
» » 101.	Սպիրոգիրայի բազմացումը	80

Ս Ն Կ Ե Ր

» » 102.	Ստանալ սպիրտակ բորբոս	81
» » 103.	Աճեցնել սպիրտակ բորբոսը հացի վրա	82

Փորձ № 104. Դիտել մուկորի սպորի ծխելը	82
» » 105. Պիլորոլուա	83
» » 106. Պիլորոլուաի սպորանոթները դեպի լույս են նետվում	83
» » 107. Զրարորոսը մեղած միջատների վրա	84
» » 108. Շաքարասնկեր	85
» » 109. Խմորում	85
» » 110. Դիտել մրիկասնկի և ժանգասնկի սպորները	86
» » 111. Գլխարկավոր սնկեր	87
» » 112. Ստանալ գլխարկավոր սնկի սպորներ	88

Ք Ա Ր Ա Ք Ո Ս Ե Ր

» » 113. Քնարաքոսը կազմված է սունկից և ջրիմուռից	88
» » 114. Քարաքոսի ջրիմուռն անջատել սնկից	89

Մ Ա Մ Ո Ւ Ռ Ն Ե Ր

» » 115. Մամուռի կազմութունը	90
» » 116. Մամուռի բնագոյացման օրգանները	91
» » 117. Մամուռի սպորանոթը	92
» » 118. Մամուռի սպորների ծլեցնելը	93
» » 119. Տորֆամամուռ	94

Պ Տ Ե Ր Ա Ն Մ Ա Ն Ն Ե Ր

» » 120. Պտեր	95
» » 121. Պտերի սպորանոթը	96
» » 122. Ինչպես ծլեցնել պտերի սպորը և պտանալ նախածիլ	97
» » 123. Զիաձեռի պտերները	97

Մ Ա Ղ Վ Ա Վ ՈՐ Բ ՈՒ Յ Ա Ն Ե Ր

Ինչպես որոշել ծաղկավոր բույսերը	98
Ծաղկավոր բույսի նկարագրութունը	100
Մերկասերմ բույսերի որոշման աղյուսակ	101
Ծաղկավոր (ծածկասերմ) բույսերի ընտանիքների որոշման աղյուսակ	102
Հացարույսերի որոշման աղյուսակ	104
Թիթեռնածաղիկ բույսերի որոշման աղյուսակ	105
Վարդածաղիկ բույսերի որոշման աղյուսակ	106
Մորմազգի բույսերի որոշման աղյուսակ	107

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ն Ե Ր

I. Փորձերի համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստելը	108
II. Ինչպես հավաքել և չորացնել բույսերը հերբաբրիումի համար	111
III. Ռեակտիվների պատրաստելը և գործիքներ սարքելը	115
IV. Ցուցակ անհրաժեշտ գործիքների, ռեակտիվների և նյութերի	118

Ո Ւ Ղ Ղ ՈՒ Մ

48-րդ էջում նկարի տակ տպված է—Բնափայտի կազմութունը՝ Պեաք է կարգալ—Ցողունի երկարական հատվածը:



Տեխ. խմբագիրը. Հ. Կարապետյան
 Սրբագրել է Վ. Պողոսյան
 Կոնտրոլ սրբագրել է Մ. Պարոնիկյան
 Հանձնված է արտագրութան 1940 թ. դեկտեմբերի 20-ին
 Ստորագրված է ավազրութան 1941 թ. փետրվարի 3-ին
 ՎՖ 3230, հրատ. № 95, պատ. № 320, տիրած 1000

Հրատարակողը՝ Երևան, Տեխն. Տեղյան № 127



« Ազգային գրադարան »

NL0266606

